

18883

ԱՂԱՎՆԻ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

891.99

Ա-47

891.99

Կ-47

28 JUN 2005

19 NOV 2010

ԱՂԱՎՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ՊԵՏԱԿԱՆ
ՑԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
1939

05.02.2013

18883

Գիրքն Եղիշուհ Եւ մօրս՝
Հոփսիմեյի հիշատակին



60121-67

Ախաւնի
Տօրնիկ ստիտվօրենի
Արմգիւ, Երեւան



ԱՂԱՎՆԻ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Լսավ գիտեցիր՝ աշխարհն այս
Առանց քեզ ել լսավ կլինի,
Բայց դու առանց այս աշխարհի
Ափում թողած նսավ կլինես:

Լսավ գիտեցիր, — մի խնայիր
Սրտիդ այդու բարն ու բարին, —
Ինչ վոր ունես նրա խորքում,
Հանիր ու տուր այս աշխարհին:

Սիրիր նրան սրտով, յերգով,
Արյունով քո ջերմ ու հորդուն,
Վոր յերջանիկ հեանորդը քո
Սիրով հիշի քեզ իր սրտում:

1933 թ.

ՍՏԱԼԻՆ

Հայրենիքում իմ կան լեռներ, ձյունապագաթ ու վերամբարձ,
Յեւ հովիտներ կան ծաղկազարդ, ինչպես խալին խորասանի,
Ձորեր կան մութ, անդնդախոր՝ մի-մի սրի խիղախ հարված,
Յեւ ալբիններ կան ծանրաբեռ, ինչպես մրգով լեցուն սինի:

Յեւ վերամբարձ այդ լեռների ջրվեժներում գահավիժող,
Մութ ձորերում ջահեր դարձող արծաթաբաշ գետերի մեջ,
Ծիածանի գույներ հագած հովիտներում մեր ծաղկաշող,
Ապրում ե միշտ սերը քո խոր, մեր արեւի նման անշեջ:

Արեգակի նման անշեջ, հավերժական ու կենսարար,
Յրեցիք դու մեր աշխարհի մութը խավար ամպակուտակ,
Ու լցնելով սրտերը մեր ուժով քո մեծ, ստեղծարար,
Դու տարար մեր ժողովրդին դեպի ափը յերջանկության:

Յեւ հիմա շեն մեր աշխարհի խիղախ վորդին այն քրտնավետ,
Յերբ աննվաճ կուրծքն ե պատուում մեր արգավանդ ու հին հողի,
Քո անսպառ սերն ե յերգում հորովելի մրմունջի հետ,
Յեւ սիրտը լի այդ մեծ սիրով սերմ ե դնում նա անկողին:

Հայրենական բանակ մեկնող զորականներն այն քաջասիրտ,
Վոր գնում են պաշտպանելու մեր անհատ փառքն իրենց սրով,
Հայրենիքի սիրտ նման անդավաճան յեւ ամբասիր,—
Կրում են միշտ իրենց սրտում անունը քո, ինչպես դրոշ:

Որոշողի վրա կռթնած մայրը չքնաղ ու դեռատի,
Վոր արծվի պես մի անձնակեր հեկում և միշտ քունը մանկան,—
Նրա անմեղ սիրտն և լցնում աղբյուրն անհուն քո յեռանդի,
Վոր ամբանա սիրտն իր վորդու, քո սրտի պես դյուցազնական:

Յեվ յերբ յերկրում իմ հայրենի, ժողովուրդն իմ քրտնալատալը
Բաց և անում առատ սեղան ու պատրաստվում խրախճանքի,
Նա առաջին թաղը գինու վեր և առնում սիրով հոտակ,
Ու խմում և ուրախ սրտով կենաց թաղը քո մեծ կյանքի:

Յեվ ամեն ուր արևի հետ յերբ զարթնում և կյանքը նորից,
Ղողանջում են յերջանկության անուշ յերգերը բերկրալի,
Յեվ այդ անուշ յերգերի հետ, հրձվանքի հետ այդ անթախիժ
Քո անունն և փառաբանում հայրենիքն իմ, մեծ Ստալին:

1935 թ.

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Գորի այցելելու առթիվ

Յես յեկել եմ յերջանիկ մեր լեռնաշխարհից
Կարոտով եմ յեկել յես ու սիրով հոտակ,
Վերական շեն աշխարհի սերն և բերել ինձ,—
Քո սրբանը տեսնելու կարոտը անհաղ:

Ու Լյախվայի¹ ալեծուփ ջրերի նման
Ցնծության յերգն և թնդում հիմա սրտիս մեջ,
Յերջանկությունն իմ չունի ել վոչ մի սահման
Ծովի նման խորն և նա, յերկնի պես անվերջ:

Ահա փովել և իմ դեմ հնամյա Գորին
Դաշտերով իր բերքառատ, ալվիներով պերճ,
Վորի կապույտ, քչքչան ջրերի ափին
Քո մանկությունն և անցել ծով զրկանքի մեջ:

Ծով կարիքի ու վշտի ծանրության ներքո
Վխտարիոնն և տառապել ալստեղ որնիբուն
Քրախնքով և վաստակել նա չոր հացը քո,
Վոր դու աճես անթախիժ ու լինես խնդուն:

Վխտարիոնի հայրական քրախնքը հոտակ
Դարձրել և քեզ խիզախ հողմատույր բաղե

¹ Լյախվա Գորիում հոսող գետ

Ու պայքարի շողշողուն ուրը կը ծփիդ տակ
Աղատություն ու չքնաղ կյանք ես յերազել:

Կովի ձգտումը անդուսպ, սերն աղատության
Յեղեղ են քո մանկական խաղին ուղեկից,
Տենչացել ես՝ կերտելու պայծառ ապագան
Ու մարդկության աչքը մութ սրբել արցունքից:

Որ ե յեղեղ յերբ ինչպես հսկա Ամիրան՝
Իջել ես դու Մեռելիս զնդանը մռայլ.
Քեզ շղթայի յեն զարկել ու գլխիդ վրա
Շողշողացել ե դահճի սուրը արնափայլ:

Բայց չի կտրել քեզ կովից անգամ բանտը մութ,
Շղթայից չի ընկձվել քո խիզախ հոգին,
Սոսկացել ե քո ուժից թշնամին անդուլթ,
Յերբ չբեկվող սրի պես փայլել ես կրկին:

Փայլել ես դու, շողացել վորպես արեգակ,
Ճշմարտության խոսքն ե վեհ հնչել քո շուրթից
Ու ժողովուրդը խիզախ քո դրոշի տակ
Վար ե բերել իշխողին իր արնոտ գահից:

*
* *

Այժմ դարձել ե արդեն կյանքը պերճ հանդես,
Լյախվան ու Կուրն ել արդեն հորդ են կարկաչում
Ու հայրենի խրճիթիդ շուրջը գարնան պես
Քո նվաճած յերջանիկ կյանքն ե կանաչում:

1937 թ. XI Գորի

¹ Աղատության համար մարտնչող լեզուողար հսկան, վոր շղթայված
է Կովկասյան լեռների քարանձավում: Ծ. Հ.

ՄՏԱԼԻՆՆ ՈՒ ՅԵԼԵՆԱՆ

Շքանշանակիր Ֆելենա Աբրահամյանին,
վորը 1935 թվին Կրեմլում նկարվել ե
մեծ Ստալինի հետ:

1.

Իմ սեղանին պահում եմ յեռ մի նկար թանկագին,
Վորի վրա նայելիս միշտ ցնծում ե իմ հոգին:

Այդ նկարից սրտառուչ մեծ կորան ե նայում ինձ
Ու մի աղջիկ թխորակ, վոր շիկնել ե հրճվանքից:

Նա գլուխն իր քնքշանքով հենած մեր հոր լայն կրծքին
Անհատնելի բերկրանքով ծիծաղում ե ամենքին:

Ծիծաղում ե նա գվարթ ու նրա գույգ աչքի մեջ
Յեռ իմ բերկրանքն եմ զգում, յերջանկությունն իմ անշեջ:

Ու կարոտով աչքս հառած այդ նկարին կենսարթուն,
Յեռ թխորակ աղջըկա կյանքի հեքյաթն եմ կարդում:

2.

Անտեր վորը եր նա մի որ, կորցրած մոր սերն անգին,
Թառամում եր անարև ընկած հատակը կյանքի:

Ա՛խ, ո՞վ սրբեր նրա թաց աչիկների վիշտը ծով,
Ո՞վ ամոքեր սիրան այդ հեզ իր գգվանքով ու սիրով,—

Յերբ մեր աշխարհն ել մի որ վորը եր, տրտում ու գերի
Իր ոտար ու արնակից իշխողների մերկ սրին:

Ու տերերը նրա բերտ՝ արյունակից ու ոտար
Տանջում եյին յերկիրն իմ ու խոշտանգում չարաչար:

Յեւ անտերունչ վորքն այս հեզ մեր վորբացած յերկրի հետ
Կթառամեր, կթոշներ, կարոտ կյանքին լուսավետ . . .

3.

Բայց Իլյիշն ու մեծ Կորան ձեռք մեկնեցին մեր յերկրին,
Ինչպես լողորդն ե հասնում վոթորկի մեջ խեղդվողին:

Ու ժողովուրդը մեր վորք, նրանց բազկի գորությամբ
Թողեց ովկիանը մահվան ու դուրս յեկավ կյանքի ամի:

Հոկտեմբերյան արևով մեծ Իլյիշն ու մեծ Կորան
Հայրենիքն իմ դարձրին յերջանկության որորան:

Նրանք այս վորք աղջըկա թաց աչքերն ել սրբեցին,
Վորպես հայրեր գթառատ գուրգուրեցին, սիրեցին:

Ու քաջության որորոց մեր աշխարհում գեղանի
Ջահել աղջիկը աճեց, դարձավ հերոս անվանի:

4.

Արփաչայի սպերից մինչև Կրեմլ նա հասավ
Մեծ Կորայի սիրառատ գգվանքներով լիացավ:

Ու գլուխն իր գանգրահեր հենած մեր հոր լայն կրծքին
Տեսեք, վորքան յերջանիկ նա ժպտում ե ամենքին:

Ջան, ծիծաղիր ու ցնծա այդ գգվանքից հարազատ
Հայրենիքի վարդ աղջիկ, իրավադոր ու ազատ:

Քո այդ ուրախ ժպտացող արևափայլ աչքի մեջ
Յեռ իմ բերկրանքն եմ գտում, յերջանկությունն իմ անշեջ:

Ջան, ել վոշ վոք չի խլի մեզ հայրական ջերմ գրկից,
Հավերժական ե արդեն մեր բերկրանքը կենսալից:

3/III 1938 թ.

ՄԱՅԻՍԻ 14-Ը

Այս առավոտ իմ գեղանի, իմ լեռնաշատ հայրենիքում
Մարդը զարթնեց արևի պես աչքը պայծառ սիրտը զվարթ,
Գոռ ցնծության յերգը թնդաց դառ դաշտերում, հյուղ ու
հանքում

Ցնծությունով աչք բաց արին ամեն ծաղիկ ու ամեն վարդ:

Այս առավոտ մեր լեռներում, մեր շենքերում արևագուն
Շեփորի պես զիլ ու հուժկու լուրը թնդաց ավետաբեր,
Թե աշխարհի արև հակա՞ն՝ մեծ Ստալինը իմաստուն
Խոսք ե ավել, վոր կլինի Գերխորհրդի ընտրյալը մեր:

Ու ինչպես վոր գարունը գա իր գանձերով շող ու շռայլ,
Ինչպես ովկիանը շառաչի իր անպարփակ ուժով հպարտ,
Շող ու շռայլ այդ գարնան պես, ովկիանի պես

արեգնափայլ

Փողոց յեկան ու թնդացին մեր շարքերը կռու ու անպարտ:

Փողոց յեկավ յերգը շուրթին ժողովուրդն իմ յերախտագետ,
Լցված սիրով մի անկաշառ, մի անսահման հպարտությամբ
Ու ամեն մի բարախուն սիրտ իրեն նման այլ մեկի հետ
Ծով հրձկանքի յերգը կիսեց, յերջանկության բերկրանքն
անամի:

Ու յերջանիկ միլիոն սրտում, միլիոն աչքում արևագուն
Վողջույնի զիլ խոսքը թնդաց, ինչպես վորոտը ովկիանի,

Հայրենիքն իմ դեռ չեր տեսել այդքան անծայր մի
խնդուկյուն,
Ինչ վոր տվեց նրա արտին այդ վեհ խոռքը Ստալինի:

Ո՛ր, վողջույն քեզ, մեծ Ստալին, հայր գթառատ ու խմսատուն,
Դու, վոր մահից ազատեցիր ժողովրդին իմ վշտահեծ,
Դու, վոր նրան պարգևեցիր յերջանիկ կյանք, ազատություն,
Այժմ ել անա պարգևում ես պատիվների պատիվը մեծ:

Ու փառք ե վեհ ապրել հիմա չնաշխարհիկ այս աշխարհում,
Փառք ե ազատ դուռտը լինել այս յերջանիկ ժողովրդի,
Առաժ նրա բերկրանքը խոր արտով մնալ հավերժ գարուն,
Վայելել քո սերն հայրական, զգալ թրթիռը քո արտի:

1938

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄՈՂՈՏՈՎԻՆ

Հայրենիքն իմ ունի անհուն կապույտ յերկինք ու վեհ լեռներ:
Ձրեր ունի նա վարարուն, դաշտ ու հովիտ արեգնահեր:

Յեվ հայրենի այդ յերկնի տակ, այդ լեռներում հպարտ ու սեգ
Իմ յերջանիկ ժողովրդի կյանքն ե թնդում ինչպե՞ս համերգ:

Մենք սիրում ենք մեր հողը մայր, մեր լեռնաշխարհը
յերփներանգ:
Մեր արտերում հավերժաբար սերն այդ յեղել ե կենսունակ:

Կովի պահին յեղել ե նա մեզ համար վեհ մի զորավիգ,
Ու դարձրել աշխարհը մեր այսքան չքնաղ ու անառիկ:

Մենք սիրում ենք մեր հողը մայր, լայց այդ սիրուց մեծ ու
անհուն
Մենք սիրում ենք ու փայփայում Ստալինին մեր մեծանուն:

Նա յե միշտ մեզ վողջեղնում ե շու՛ նրա ընկերը քաջ,
Վոր կամք ունե՞ս՝ կայծակի թուր, ու խոռք, ինչպե՞ս ծովի
շառաչ:

Ու յերբ կյանքում ամեն անգամ մենք մի ամբողջ ենք նվաճել,
Մեր արտերում ազատակամ ձեր պայծառ գովքն ե շառաչել:

Ձեզ ենք հիշել կովի պահին ու դրանով առել վողի,
Ձեզ ենք հիշել, յերբ հաղթելով հավաքվել ենք խրախճանքի:

Այժմ ել ահա, յերբ հայրը մեր ու դու՝ նրա ընկերը սեպ-
նոսք եք տվել, վոր մեր անգին պատվիրակները կլինեք,—

Այդ ձեր տված պատվի համար, սիրո համար այդ ամբասիր
Աննախընթաց յերջանկության տաղն ե յերգում ամեն մի սիրտ:

Ամեն մի սիրտ հիմա անգուսպ հույզերի ծով ե շառաչուն
Ու ձեր գովքը Արարատի կատարներից բարձր ե թռչում:

Ձեզ են հիմա փառաբանում սրինգները մեր քաղցրախոս,
Ծաղիկները մեր յերփներանգ, ջրվեժները արագահոս:

Մանուկները մեր ծիծաղուն, վոր մայիսի թովչանքն ունեն,
Յեվ աղջիկները մրտնոն, պատանիները գեղադեմ:

Ու ավելի ջերմ ե նայում հիմա չքնաղ արևը մեր,
Ավելի փառ են կանաչում հովիտները արեգնահեր,

Ու չի խամբի դարունը այդ, այդ արևը չի խավարի,
Յերբ դուք եք մեր ժողովրդի յերջանկության պաշտպանն արի:

7/V 1938 թ.

ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՎ

Յես ուր ել գնամ, իմ գլխին դարձյալ
Դու յես ծիծաղում արև հայրենի,
Յես զգում եմ քո գգվանքը շոյլ,
Ու դուրդուրանքը մեծ Ստալինի:

Ձեր անուշ սերը զգացել եմ միշտ
Յես իմ հույզերում ե իմ կրծքի տակ,
Նրանով դարձել անհոգ ու անվիշտ,
Նրանով քայլել դեպի հաղթանակ:

Յերբ պատահում ե լինում եմ տրտում,
Կամ յերբ հիշում եմ իմ մորը մեռած,
Իսկույն հուշերիս չքնաղ վոլորտում
Մեծ Ստալինն ե ժպտում սրտաբաց:

Ու դու յես ժպտում արև հայրենի,
Դու յես ծիծաղում շոյլ ու գերող,
Ունենալով քեզ ե Ստալինին
Յես ինձ զգում եմ զվարթ ու կարող:

1938 թ.



ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

1

Արձակ ե սիրտս հիմա քո կանաչ արտերի պես,
Ու կանաչ արտին վրա՝ քո սերը վարդերի պես.
Քո կարող կամքի առաջ յես այսոր գառնուկ եմ հեռ,
Յեվ անուշ քո նվազով ուր կանչես պիտի դամ յես:

2

Յես չվող հավքի նման կթռնեմ քո յերկնքով,
Փետուրս դաշտում թողած կթռնեմ քո յերկնքով,
Ինձ բարի ճամբա կառն քո արձակ արտերն ու հով,
Կտանեմ սրտիս վրա քո սերը, ինչպես մի ծով:

3

Ինչքան ել վոր ամուր սիրեմ, իմ սերը քեզ քիչ ե ելի,
Քո տված լուրթ ծովի դիմաց՝ իմը փոքրիկ լիճ ե ելի,
Կյանքս սիրուդ մատաղ կանեմ, սիրտս կտամ յես
անտրտուն՝—
Թե վոռիսի ձեռքը հանկարծ կպնի մաղիդ մեն մի թելին:

4

Չէ, չի լռի իմ սրտի մեջ քո սերը հուր ու հոտով
Ինչպէս հավետ վորոտացող Նիազարան սառնորակ,
Ու ինչպէս վոր հողն և որհնում արեգակին կենսահազ,
Յեւ ել ահա որհնում եմ քեզ, վոր տվիր ինձ սեր ու կյանք:

5

Այն սարի կատարի պէս իմ մազն ել կճերմակի,
Ու ձմեռն ուրախ կիջնի գաշտերիս ալ վերմակին,
Բայց յերբ ել ինձ այցի գաս ու ձեռքդ դուռն իմ թակի,
Վարդերս կժպտան քեզ ծերության պաղ ձյան տակից:

6

Ծաղկաշատ մայիսի պէս անուշ ու զվարթ ես, ջան,
Թե բլբուլ ես քաղցրախոս, թե կոկոն դու վարդ ես, ջան,
Իմ ջահել ջիվան կյանքի, իմ սիրող սրտի համար
Չթոշնոյ, չթառամող շողշողուն դու դարդ ես, ջան:

7

Հայրենիքիս մայիսի պէս միշտ անուշ ու վառ մնա,
Մեր արևի ժպտան առած, ժպտավառ պայծառ մնա,
Իմ հույզերին, իմ սերերին դու հով տվող, զով տվող,
Կենսածիծաղ ու ցողաշաղ բար ու բերքով ծառ մնա:

8/IV 1938 թ.

* * *

Մեր կալեր կանաչ ու խառ,
Պաղ աղբյուր մեջ վաղեվադ,
Ջուր խմե սիրուն տղա,
Սիրտս քեզ արծաթե թառ:

ԶԻՎՈՐ

Թեվերդ քշտած դու ջուր ես անում՝
Զրի հետ առես վարդեր ես ցանում:

Յեվ անուշ սիրուդ վարդերը գրկած
Ուրախ զնգոցով ջուրն ե իջնում ցած:

Զուրն ե կարկաչում արտերի լանջին՝
Զան, սիրտս մնաց քո ջրի կանչին:

Քո ջրով անուշ արտերն հագեցան,
Դե, ջրտուքը թող, դու ել իջիլ ցած:

Թող ջուրը կանաչ արտերը գնա,
Աղբյուրը սիրուդ ինձ համար մնա:

Գ Ո Ւ Ս Ա Ն Ն Ե Ր

ԽԱՅԱՄ

Լեռների կապույտ գրկից վեր յելավ շեկ լուսնկան,
Ու խաղաղ լճերի մեջ շողշողուն աստղեր ընկան.
Բաղերի կանաչ հեռվում մի քնար անուշ զնգաց,—
Հովի հետ, լուսնի լույսով խայամն եր բաղերն ընկած:

1935 թ.

ԹՈՒՄԱՆՅԱՆ

1.

Անուշ վշտացին ջրերն անթախիծ,
Ծառերն հակվեցին մեկ մեկու ուսի,
Պահնորդի նման հեռու անտառից
Բարձրացավ ահա մի պայծառ լուսին:

Աստղերն հրճվանքով ներքև հայեցին,
Զեփյուռն աղբյուրին ինչ վոր բան ասաց,
Շողաց աղբյուրի հստակ հայելին,
Մանրիկ կոհակներն իրարով անցան:

«Ո՞վ ե» հարցրեց անտառն ալևոր,
«Նա՞յ ե» շշնջաց չինարին վերձիդ,
— Վողջու՛յն քեզ, վողջու՛յն, սիրելի՛ յեկվոր,
Թող պայծառ մնա պապաթը յերգիդ...»

Զրի, անտառի, հովի թափորով
Անցավ ու գնաց գուռանն անթախիծ,
Անտառը մտավ, սարով ու ձորով
Նրա նվազն ե հիմի հասնում ինձ:

2.

«Ես ե, վոր կա, ճիշտ ես ասում թասդ, բեր...»
Ու թաս առավ մեծ գուռանը ալեհեր,
Նա վիշտ խմեց, բայց բերկրանքի պես անմեռ
Զրնդում ե այդ գուռանի տաղը դեռ...»

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայրենի գետի զմրուխտ ավերին
Իմ հին տնակն ե կքել մենավոր...

Ավ. Իսահակյան

1.

«Հայրենի գետի զմրուխտ ավերին»
Մեր կյանքն ե ծաղկել դարնան ակրճուկթյամբ,
Ծաղկել են չքնաղ մեր սարերն անամպ,
Ու բերքով հարուստ արտերը բերրի:

Վառվում ե այնտեղ ոջախը մեր տան,
Ծուխն ե բարձրանում լեռներն հովասուն,
Ուր անվիշտ հովվի սրինգը խոսուն,
Տաղն ե գեղգեղում իր յերջանկուկթյան:

Հայրենի գետի ջրերը կապույտ
Մնում են հիմա դաշտերը թավիշ,
Վորոնց վարդերով կույտերը անվիշտ,
Իրենց շին կյանքի պսակն են կապում:

1935 թ.

2.

Հայրենական լեռների խրոխտ պարի պետ,
Յեվ հովասուն ձորերի անհուն խորուկթյամբ,
Յես արեվոտ իմ յերկրի սերն եմ հղում քեզ
Ու նրա հետ միասեղ բերկրանքն իմ անավ:

1936 թ. 5

ԾՈՎԱՓԻՆ

Արևը ջինջ ծովն ընկավ, սուգվեց կապույտ ջրերում,
Ծովի վրա քողի պես լուսնի շողն և որորվում:

Ծովի վրա որորուն լուսնի մահիկն արծաթե,
Վոնց կոկոնից նոր ընկած, ճերմակաթույր վարդի թերթ:

Յեղան պարի ծփացին ալիքները լուրթ ծովի,
Կարծես չկա ուրիշ պար, ծովապարի պես թովիչ:

Ծովապարի պես թովիչ ու սրտի պես նրա լայն,
Բնության մեջ այս չքնաղ չկա ուրիշ սիրուն բան:

1936 թ. Ղրիմ

ՀՐԱԺԵՇՏ ԾՈՎԻՆ

Մնաս բարով, տարերք ազատ,
Դու վեհաշուք գեղեցկութուն,
Յեռ քրոջ պես մի հարազատ,
Սերդ սրտիս գնում եմ տուն . . .

Ընկեր յեղար դու ինձ համար,
Փոթորկահույզ քո ջրերով,
Ծով իմ, ծով իմ, անժաշ յեղբայր,
Մնաս բարով, մնաս բարով:

Ձեռ մոռանա յես առ հավետ
Դո ավերը գեղաքանդակ
Ու պուրակներն այս ծաղկավետ,
Վորոնց դալար ծառերի տակ
Արեգնաբույր գարնան նման
Կյանքն և ծաղկում Ստալինյան:

Ու չեմ կարող մոռանալ յես
Ժողովրդին քո հյուրասեր,
Վորի սիրտը քո սրտի պես
Ունի հաղար խոյանք ու սեր:

Այդ շեն սրտի խոյանքն առած,
Յնծությամբ եմ յես տուն գնում,
Յեզ քո վորդու յերջանկության
Արեկադն եմ ինձ հետ տանում:

1936 թ. Սիմեիդ

*
* *

Նավեր յեկան, նավեր անցան,
Ուղեւորներ հարյուր հազար,
Ծով, մնացիր դու լուրթ ու լայն,
Միշտ աներկյուղ ու միշտ ազատ:

Ու վոչ մի նավ իր ընթացքով
Բեռ չդարձավ սրտիդ համար,
Հավերժ արթուն ու բաց դու ծով,
Անձեռագործ կապույտ սավան:

Իմ սիրտն ել հորդ այդ ջրիդ պես
Ազատ ե միշտ և անկնճիռ,
Մերթ ալեկոծ, մերթ մեղմ ու հեղ,
Իր հույզերով հորդ ու վճիռ:

Յեւ ով փորձի այդ սրտի մեջ
Իր վատ խոտքի ուղին բանալ,
Նրա դլխին կիջնի անշեջ
Հայրենիքիս սուրն հրափայլ:

Ու սիրտն իմ միշտ բաց կլինի
Հայրենիքիս սիրտ համար,
Ջերմ ժպիտը Ստալինի
Ինձ կյանք կտա և ուժ անմար:

ՊՈԻՇԿԻՆԸ ԾՈՎԱՓԻՆ

Ծովն որորում եր ցասկոտ ջրերը,
Ծովը ծեծում եր ափերն իր լերի,
Յեւ աչքերի մեջ ցուրտ ծովի սերը,
Շրջում եր պոետն այն սրտարեկ:

Յեւ հայացքն հառած կապույտ ջրերին
Նա ճանապարհ եր խնդրում ծովից,
Դեպ հանգրվանը իր վառ տենչերի,
Դեպ ազատության ափը թովիչ:

Բայց ինչ չտվեց նրան ծովն արձակ,
Նա խլեց խիզախ իր յերգերով,
Յեւ դարերի մեջ, վորպես հուշարձան
Առհասկա մնաց յերգն այդ գերող:

Յեւ ժողովուրդը մեր շեն աշխարհի
Վայելեց յերգն այդ բարձրաշառաչ,
Իմ ազատ գլուխ, հարգանքով խորին,
Խոնարհվիր նրա յերգի առաջ:

1937 թ. 7/2

ԲԱԼԼԱԴ ՀՈՐՍ ՄԱՍԻՆ

Չտեսա նրան,
Բայց ասում են, վոր
Կարոտով հանգան՝
Աչքերը իմ հոր...
Աչքերը իմ հոր՝
Վշտոտ կանթեղներ,
Վոր մինչև այսօր
Առկայծում են դեռ
Իմ պայծառ ճամբին,
Ու սեր շքշքնջում,
Ու սրտով անբիծ
Ինձ բախտ են տենչում...
...
Ծիրիմի հողն իմ հոր,
Թող թեթև լինի,—
Յեթե աշխարհում
Նա շիրիմ ունի...

ՄՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայրո մեռավ ու մի պահ
Իմ ջահել հոգում
Խառնվեցին կյանք ու մահ
Յեղավ իրիկուն:

Տրամաթախիծ վորբուծյան
Կեկիծն զգացի,
Ծիծաղիս ջահերն հանգան,
Դառնորեն լացի:

Բայց դուք ինձ միք նախատի
Արցունքի համար,
Այդ մայրիկիս կորուսյան կաթի
Կարոտն եր անմար,—

Վոր իմ ջահել աչքերից
Խլեց արցունքներ,
Ու մի վայրկյան բերեց ինձ
Տրամբուծյան գիշեր:

Չէ վոր յերբ մեր աշխարհում
Արյուն եր ու լաց,
Յերբ չար մահն եր համբուրում
Ծաղիկները թաց,—

Այն ժամանակ յեռ մի հեղ
Մանուկ եյի խեղճ,
Վորպես զողող մի յեղիգ
Արյան լճի մեջ:

Ու մայրիկս եր, վոր անուշ
Եր սիրով անգին
Դիճ ներարկեց կյանք և ույթ,
Ու հաղթեց մահին:

Ու չի ապրում նա հիմի,
Մեռել և արգեն,
Բայց մի՞ք վողբա, մի՞ք տրամի
Դմ սրտի վարդեր:

Յես ունեմ մեծ հայրենիք,
Մայր ունեմ անմահ,
Կյանքիս համար զոռավիզ
Ու արև և նա:

Սիրտ իմ, այդ մեծ մոր համար
Դու զվարթ յեղիւր,
Յնծուծյունով քո վարար
Կյանքը հեղեղիւր:

Ու թե հանուն իր փառքի
Դու մի որ ընկնես,
Նա քեզ հանգիտ կյերգի
Հարազատ մոր պես:

3/IV 1938 թ.

* * *

Թիժառները յեկան, յեկան ճովողյունով,
Յեկան բուն դրեցին քարափների վրա,
Դաշտերն են ծիծաղում ջրի զրնգոցով,
Ձարդարված արևի շողերով հուրհրան:

Թիժառները յեկան, յեկան ճովողյունով,
Ջնծաղիկը մարեց իր բերկրանքի հրեց,
Ու կակաչներ յեկան դաշտերում մառ ու մով,
Բուռ, բուռ հատիկ առան սերմանողներն արի:

Ձան, շաղ տվեք բուռ-բուռ հատիկները ձեր լի,
Իմ յեղբայրներ արի ու վաստակով հպարտ,
Թող դաշտերում հարուստ ձեր հատիկը ծլի,
Ձեր հրճվանքով լցվին փարթամ արոտ ու արտ:

ՀԱՏԻԿ

Հատիկն ընկավ ահոսի մեջ, հողն հուզմունքից սարսուռաց,
Սերմնացանի զույգ աչքի մեջ զույգ արևներ շողացին,
Կյանք առավ ու կենդանացավ մեր դաշտերի հողը թաց
Յեվ հոփն ուրախ ինձ հասցրեց անուշ բույրը մեր հացի:

Ու ժայթքեց իմ ուրախությունն փայտերի պես հորդաբուլիս,
Զույգ աչքերն իմ ծիծաղեցին սերմնացանի աչքի հետ,
Զան, թող հավետ հարուստ մնա հայրենիքիս հերկը թուխ,—
Վերի ծոցում տենչը հացի մեռավ անդարձ յեվ անհետ:

ՄԱՆԳԱՂՆԵՐ

Զրնգացին արտերում մանգաղները սուր,
Ծուփ հասկերի ծովի մեջ արտուտն է խոսում,
Լիության յերգն է յերգում կտուցն արտուտի,
Պայծառ մնառ լիություն, հայրենի արտի:

ԱՅԳԵԿՈՒԹ

Այգին հասել, վողկույզ, վողկույզ,
Շող ե տալիս շեկ ու վռակի,
Ամեն գիլան մի սրտի հույզ
Ու մի վաստակ ամուր բազկի:

Այգու վրա անուշ կանչով
Հավքն ե ճախրում առատ աշնան,
Յեվ առվակները կարկաչուն
Ջրցանում են մարգերը լայն:

Յեվ աղջիկներն որոր-շորոր
Իջնում են դաշտ այգեկութի,
Աղջիկների պես բախտավոր
Ծիծաղում ե այգին հուռթի:

Ջան, աղջիկներ մեր դեռահաս,
Բազեք խաղող, քամեք գինի,
Թող լիանան տուն ու կարաս,
Յեվ կյանքը թող պայծառ լինի:

Յեվ զրնգուն թասերի մեջ
Գինու նման թող վարարի
Աշխատողի յեռանդն անվերջ,
Սիրտն առնակա ու քաջարի:

*
* *

Անձրեվիր աշուն, անձրեվիր հանդարտ,
Մեղմորեն ննջող ցեղերի վրա,
Թող անձրևը քո յերգի պես զվարթ
Անուշ որորի հանգիստը նրանց:

Անձրևիր հանդարտ ու մոր պես բարի
Մեր վաղվա բերքը սնիր քո գրկում.
Անձրևի մեջ ել յես իմ աշխարհի
Հավիտյան կանաչ դարունն եմ զգում:

ՀԱՎՔԵՐ

Հեռացող հավքեր, հեռացող հավքեր,
Վճրտեղից յեկաք, և ուր եք դնում.
Թող բարի լինի ձանապարհը ձեր,
Յես ցնծությամբ եմ ձեզ ճամբու դնում:

Գնացեք հավքեր ու տարեք ձեզ հետ
Իմ հայրենիքի խնդությունը ծով
Ասեք աշխարհին, վոր տունը մեր շին
Յեվ հորերը մեր թնդում են հացով:

Ասեք աշխարհին, վոր սեղանը մեր
Բարեքներ ունի անբավ, անսպառ,
Յեվ սարից լիջնող ամեն մի ձմեռ
Վայելքների պերճ տուն և մեզ համար:

ՍԻՐԵԼ

Ար...ին

Այնպես անուշ և ապրելը հիմա,
Յեվ այնպես քաղցր և թովչանքը կյանքի,
Յերբ սիրտս գիտե, վոր կարող ես նա
Սիրել, պատկանել իր նման մեկին:

Ու յերբ կարոտով գուրգուրում եմ յես
Իմ սիրեցյալի գլուխը գանգուր,
Բերկրանքս աճում և անգուռալ ծովի պես,
Համերգ ե թվում աշխարհը հանուր:

Ու թեվերիս մեջ նրան պարուրած
Յես որհնեղում եմ զվարթ կյանքը մեր,
Գիտեմ՝ չեմ լինի նա այսքան ուրախ,
Յեթե աշխարհում սերը չլիներ:

17/IV 1938 թ.

*
* *

Ծաղիկե պտակ կապեցին սարերն հովառուն,
Նորից, նորից զարթնեցին ջրերը խոտուն,
Ձան, զարթնեցին, զարթնեցին վարդ ու անմոռուկ,
Յեւ անանուխն անթախիժ, սմբուլ ու հափրուկ:

Հավք ու հովեր թևաբաց նորից յետ յեկան,
Հովիտներում զրնգաց համերգը գարնան,
Ու հոգիս լի գարունքովս վարարունս սիրով
Թեւեր բացեց ու թռավ մեր սարերը զով:

Հիմա հյուր ե նա արդեն սարվորների մոտ,
Վայելում ե կանաչի գգվանքը շաղոտ,
Ձան, վայելում ե հոգիս սերն իմ աշխարհի
Ու նրա պես բերկրանքով, տաղերով ե լի:

1938 թ. Գարուն

ՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ

Յերեկոն գալիս ե քրոջ պես գրկաբաց,
Արտաներն ե գրկում ու կանաչ բաղերը,
Յերեկոյի անուշ գգվանքներով արբած
Յեռ կարգում եմ ահա Վահանի տաղերը:

Մութը խորանում ե, լուսինն ե ճառագում,
Յերգի պես անուշ ե լուրթ ջրերի ձայնը,
Հեռվում մեկիկ-մեկիկ ճրագներն են հանգում
Ու լուսնի պես գունատ գալիս ե Վահանը:

Ու մինչև առավոտ նա նստում ե ինձ հետ,
Իսկ յերբ բարձրանում ե լուսաշող արեգը,
Յեռ մեկնում եմ ձեռքս՝ փնտռ բարով, պոետ,
Արդեն վերջացավ քո տաղերի համերգը:

1938 թ.

* * *

— Ո՞ւր գնացին ծաղիկները,
— Սո՛ւս, քնած են հողի տակ.
ԳՅՈԹԵ

Քուռն են մտել ծաղիկները, ծաղիկները սպիտակ,
Գարնան անուշ արեգակի սերը իրենց կրծքի տակ:

Քուռն են մտել ծաղիկները, վոր արթնանան զարուհիքին
Յեւ աչքերով ցողաթաթով ժպտան կապույտ յերկնքին:

Քուռն են մտել ծաղիկների բուրուճնալից խմբի հետ
Հաղար սերմեր մարդարտաշող, հաղար առու, հաղար գետ:

Ու սերմերի ծաղիկների կարոտներով անդադար
Արթուն են միշտ մարդն իմ յերկրի, մարդն իմ յերկրի՝ ինչպես
մայր:

Որորում ե նա քնքշանքով որորոցը բնության,
Վոր սերմերը քնեն աշնան ու շող ծիլեր արթնանան:

Իմ յերկրի մարդ, իմ յերկրի մարդ, վոր ուժ ունես անխորտակ,
Ձեռքին ե քո աշխարհը մեր իր գանձերով բովանդակ:

Գարունը պերճ հայրենիքիս պսակն ե մի թանգագին,
Զարդը սակալն դուն ես միայն այդ գեղեցիկ պսակի:

1936 թ.

ՈՐՈՐՈՑԻ ՅԵՐԳ

Քնիր, բալիկ, յես քեզ համար
Որոր կասեմ ու նանիկ,
Ձի մթադնի գիշերը մառ
Քո հանգիստը յերջանիկ:

Կանգնած չքնաղ մեր աշխարհի
Ջովածվող սահմանում
Կարմիր բանակն ե քաջարի
Քո հանգիստը պահպանում:

Ովկյանի պես մեծ ե, անհուն
Ուժը մեր քաջ բանակի,
Ու նրա դեմ կռվի յեղնող
Ամեն վոսոխ կշոքի:

Քնիր, բալիկ, ինձ հետ մեկտեղ,
Յերկիրն ե քեզ որորում,
Ծաղիկներն են նրա շքեղ
Քո որոցքը զարդարում:

Յերկիրն այդ մեծ, խորն ու անհուն
Յերջանկության ծով ե լուրթ,
Յերջանիկ են նրա գրկում
Ամեն մարդ ու ժողովուրդ:

Այդ մեծ յերկրի գիր ու գրքում,
Մարդու սրտում այդ յերկրի
Խաղաղ կյանքի յերգ ե թնդում,
Ու դովքը մեր քաջերի:

Լայն են, բալիկ, ծովերը մեր,
Մեզ բեկոն է հնազանդ,
Լողորդ լինեա՛ դու անվեհեր,
Թե ողաչու մի հպարտ,—

Քեզ համար միշտ բաց կլինի
Ճանապարհը քաջության,
Ու սերը մեծ Ստալինի
Քո թեքերին ուժ կտա:

Ու թե լողաւ ծովում ազատ,
Թե յեթերում սավառնես,
Մի մոռանա, վոր կորովն այդ
Ստալինն է տվել քեզ:

Դու վողջ սրտով սիրիւ նրան,
Սիրիւ նրա գործը մեծ,
Այդ նա յեր վոր մերանասանան
Յերջանկությունն ստեղծեց:

1938

ԻՄ ՆԻՐԶԱԾ ԱԶԻԿՈՅԻՆ

Ի՛նչ խաղաղ եւ քնել, պայծաս իմ Աշիկո
Յեզ ինչ լսվ են շիկնել աշտերդ վարդի պես,
Այդ անվրդով նիրհող աշիկներխդ ներքո
Մեր մշտարթուն կյանքի թրթիռն եմ զգում յես:

Ջան, թող անուշ լինի քո հանգիստը անգին,
Քեզ հսկում ենք ահա իմ հայրենիքն ու յես,
Վոր հրճվանքի սովոր քո բյուրեղյա հոգին
Այս աշխարհի ծոցում շողա արևի պես:

Դե, Ջան, անուշ քնիր, անուշ, իմ Աշիկո,
Նիրհդ չի վրդովի գեշերների չար բուն,
Մեր հայրենիքն է մեծ մայր պահապանը քո,
Յեզ իմ սիրտը՝ վոր քո սիրով ե տրտվում:

Տ/Վ 1938 թ.

ՌՈՒԴՈՒՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԱՌԹԻՎ

Վողջույն, քնքույշ իմ բալիկ, դու սիրուն թիթեռ,
Վոր այս գիշեր մեր չքնաղ աշխարհն ես մտել:

Քեզ որորոց թող լինեն հովիտները պերճ,
Յեվ աստղերը շողշողուն թափվեն ծոցիդ մեջ:

Յեվ զեփյուռներն հայրենի գգվանքով անհուն
Թող սեփորակ աչքերիդ բերեն անուշ քուն,—

Վոր դու արադ մեծանաս ու լինես պայծառ,
Հայրենիքիս պարտեզում լինես կանաչ ծառ:

Վողջույն, անուշ յերեխա, սեփաչվի բալիկ,
Ինձ հետ աշխարհն ե հիմա քեզ վողջույն տալիս:

Զվարթ յեղիր դու, բալա, և չարածիճի,
Արեգնաշող քո բախտին գիշեր չի իջնի:

1936 թ., 8 դեկտեմբերի

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Դուք զարթնում եք ամեն ուր աղմուկով զվարթ,
Ամեն մեկդ մի վառ հույս, մի գարնուն, մի վարդ:

Վարդեր, անուշ մեր վարդեր, թարմ ու կենսաղոր,
Ձեր ծիծաղով ե լցված մեր յերկիրն այսօր:

Ձեզ համար են կանաչում հովիտները մեր,
Դուք յերջանիկ մեր կյանքի կայտառ առուներ:

Յեվ ձեր խաղին նայելով իմ սիրտը ջահել
Ձի կարող իր բարձրացող հրճվանքը պահել:

Ուզում ե նա միանալ ձեր խմբին աշխույժ,
Յեվ աղմկել ու խաղալ մինչ գիշերը ուշ:

Հետո խաղից հոգնաբեկ մտնել անկողին,
Խոր քնի մեջ մոռանալ մանկությունը հին:

Դուք խաղացեք, մանուկներ, խաղացեք զվարթ,
Յերջանիկ ե ձեզանով հիմա ամեն մարդ:

Յեվ այն սիրտն ե յերջանիկ ձեր սիրով անհուն,—
Վորն աշխարհում յերբեկ յեղել ե մանուկ. . .

1935 թ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ, ՎՈՐ ՊԻՏԻ ԾՆՎԵՆ

Հովիտներում կանաչ վոբքան ծաղիկներ կան,
Ու վոբքան աստղեր կան գրկում տիեզերքի,
Այդ աստղերի թվով դեռ մանուկներ կըգան,
Ու կժպտան ուրախ, շունչ կտան մեր կյանքին:

Աղմուկով կը լցվեն անտառները մեր, մութ,
Ուրախ կըծիծաղեն դաշտերը մեր թովիչ,
Կը բողբոջի նորից մի կենսուրախ սերունդ,
Առաքառներն հանձնած յերջանկության ծովին:

Յեվ մի աղջիկ կգա գլխով արծաթահեր,
Բայց սրտով անթառամ, հոգով յերխառառդ,
Այդ ժիւր մանուկների կայտառ սերնդի հետ
Այս անգամ նա կապրի մանկությունը՝ զվարթ:

1935 թ.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐ

(Մանկական հուշ)

Կանաչաթույր կալի մեջ
Պար բոնեցիք մի գիշեր,
Աստղերն անուշ ծիծաղով
Ձեզ խոստացան բախտ ու սեր:

Լուսինն արած առաջնորդ
Դուք բարձրացաք սարը գով՝
Ծաղիկներին դյուրեւ
Կույս սրտերի յերազով:

Փունջ թեւերով կապեցիք
Ծաղիկները ձեր սիրած
Յեվ հովառուն աղբյուրի
Կարկաչի հետ իջաք ցած:

Հեռու սարում մնացին
Թելով կապած ծաղիկներ,
Վոր իբրեւ նիշ ձեր բախտի
Պիտ աճեցին այդ գիշեր:

Յերբ առավոտ ծեղի հետ
Դյուզի դանդը զոդանջեց,
Նորից յեւաք սարն իվեր...
Վոչ մի ծաղիկ չեր աճել...

Ե՛յ, աղջիկներ միամիտ,
Մուրազամեռ դուք կույսեր,

Լուրթ գիշերը համբարձման
Ձեզ չը տվեց բախտ ու սեր:

Ձեզնից հետո մեր յերկրում
Շատ աղջիկներ մեծացան,
Վորոնք բախտ չեն վորոնում
Գիշերվա մեջ համբարձման:

Բայց ապրում են բախտավոր
Ու յերջանիկ են ապրում,
Ինչպես ամեն մի ջահել
Մեր գեղեցիկ աշխարհում:

1936 թ.

ՀԱՅԻ ԿԱՆՁԸ

Շիկնած թոնրից յերբ ամեն որ
Յեփվող հացն եր մեղմ կանչում,
Տրտմում էյին աչքերն իմ մոր,
Սիրտն եր տխուր հառաչում:

Յեվ աչքի մեջ վշտի քուլա
Նայում եր նա տաք հացին,
Հետո ասում,— լսի՛ր, բալաս,
Տրտունջն է այդ քաղցածի:

Տրտունջն է այդ քաղցած մանկա
Ու դարաքաշ նրա մոր.
Ու բողոքն է առնամկան
Մշակների այն բոլոր,—

Վորոնք տարված փրփուր հացի
Առատության տենչանքով,
Իրենց կյանքի լուսաբացից
Տքնել են մինչ յերեկ:

Տքնել են միշտ գուրգուրելով
Յերազները լիության,
Բայց կատաղի կարիքն է ծով
Քանդել հիմքերն իրանց տան:

Հացն են կանչել պապերը մեր,
Բայց անհաց են մնացել
Ու վորպես չար բախտի նվեր՝
Հացի կանչնե մեզ հասել . . .

Մայր իմ, մեռավ կարիքը ծեր,
Մեռավ վիշտը մեր հոգու,
Այրեց նրան թոնիրը մեր
Բոցերի մեջ իր հուժկու:

Յեւ չիմա սաք հացերի հետ
Մեր շեներում հարածուն
Իմ սերնդի յերջանկավետ,
Ուրախ ձայնն ե զողանջում:

Լիությունն ե չիմա մեր տան,
Բնակիչը ցանկալի,
Լիությամբ ե լցված չիմա
Պայծառ կյանքն ել քո բալի:

1935 թ.

Ս Ա Ձ Ե Ր

1

Մեռնող աչքերի փայլով հուսահատ
Արևն ե հանգել այս լեռների տակ
Յեւ գիշերն անհուն, հոգնած, փռհպատ
Գյուղերն ե մտել ինչպես պատվիրակ:

Ինչպես գիշերն այդ անսեր ու տրտում,
Ճանապարհների փռչով զարդարուն,—
Գյուղերն են մտել աշուղներն անտուն,
Վոր կային առաջ մեր հին աշխարհում:

Գունատ ճրագի շողերի ներքո
Խփել են նրանք սազի լարերին,
Յեւ այդ լարերի բեկբեկուն յերգով
Յերգել են չարիքն իրենց աշխարհի:

Յերգել են իրենց տերերին անել
Ու փառքը նրանց աշխարհաստան,
Յերգել չարության ձգտումը անշեղ,
Գործերը նրանց մեծ ու բազմազան:

Ու մեր դարավոր ոջախների մոտ,
Նրանց բոցերի նման կերկերուն,
Յեւ ճրագների լույսի պես տղոտ,—
Մեր վիշտն ե յերգվել նրանց յերգերում:

Ձմռան պես սաստիկ, ցրտի պես անսեր,
Յեւ մութ գիշերվա ծոցում ամբարիշտ,
Լացել են բազում փանդիս ու սաղեր,—
Մեր ցափն հորդելով իրենց նուրբ լարից:

Ու բազմավաստակ գեղջուկի սրտում,
Փայռի պես խոժոռ ճակատի վրա
Սաղերի մրմունջն անխուր ու սրտում:—
Դարձել է բողոք, դարձել է կրակ:

Յեւ հին աշխարհի ծոցի մեջ անսեր,
Ինչպես պայծառ շող անհուն վիհի մեջ,—
Լուել են բազում աշուղ ու սաղեր,
Ու ճեռել անթիվ յերգ ու յելեւջ...

2

Բայց յերբ մեր բազկի ուժով անոտան ,
Այս հին լեռներում մեր սուրը շողաց,
Սաղերն ել բեկուն այնժամ մեզ հասան,—
Վիշտն իրենց մաշող, անցյալին թողած:

Ու ցամլւ ամոքած այրի կնոջ պես
Նրանք մեր կյանքի համերգը մտան,
Վոր մեր շքերթին այս լուսահանդես,
Ու մեր շեն կյանքին գովերգու դառնան:

Ու մեր ձորերի, մեր լեռների մեջ,
Շքեղ, հոյակապ կոտուրների տակ,
Մեր փառքով հարուստ կյանքում լուսանել
Յեւ մեր սրտերի ոջախում հատակ,—

Ջագում են հիմա սաղերը խոսուն,
Ջագում են դարնան ջրի պես ուրախ,
Վոր վե՛հ լեռներից ներքե է հոտում,
Շուրջը վառելով լույսերի քուրա:

Ջագում են նրանք մեր սեղանի մոտ,
Մեր ուրախության բաժակի վրա,
Ջագում հայրենի դաշտերում շաղոտ,—
Յերգելով պայծառ փթթումը նրանց:

Յերգում են բազում սաղերը յերկրիս
Լիւթյունն այս ծով ու յերջանկավետ,
Յերգում են, վոր մեր սրտերը բերկրեն,
Յեւ հուշն անցյալի մատուցվի հվետ:

ՅԵՐԿՈՒ ԸՆՏԱՆԻՔ

1

Մի որ յեկավ դերվիշը ծեր ու խնդրեց մի կտոր հաց,
Մայրըս տաշտից հացը հանեց, նրան տվեց սրտաբաց:

Դերվիշն ասաց.—«Հալալ լինի մորդ կաթը, ո՛վ քույրիկ,
Յոթը վորդով սեղան նստես ու տեսնես յոթ հարսանիք»:

Ծեր դերվիշի այցից հետո որեր յեկան, գնացին,
Ամայացան արտերը մեր—աղբյուրները մեր հացի:

Սովը յեկավ ու դահճի պես կանգնեց մի որ մեր շեմքին,
Ու չքացավ ժպիտը վառ իմ կենսուրախ մոր դեմքից:

Յոթը վորդու հարսնիքի տեղ յոթը դադաղ նա տեսավ,
Յեւ այդ որից մեջքը նրա մինչև գետին կռացավ...

2

Հիմա չքնաղ մեր աշխարհում կա մի զվարթ ընտանիք,
Վորի խաղաղ կոտուրի տակ կյանքն է դառել յերջանիկ:

Այրը թիկնեղ կաղնու նման, կինը ճկուն մի սոսի,
Յոթը վորդին՝ յոթն արեգակ լույս են տալիս յերկուսին:

Յոթը վորդու ժպիտն առած կյանքի դալար պարտեզում
Նրանց խորունկ յերջանկության վճիտ աղբյուրն է խոսում:

Արարատն ել չունի այնքան հպարտություն իր սրտում,
Վորքան ունեն այդ բախտավոր ծնողները յոթ վորդու:

Ու յերբ դռնից ներս են վազում մանուկներն այդ աչադեղ,
թունդ են առնում ծնողների շեն սրտերը սիրադեղ:

Այդ սրտերի բերկրանքն առած արեգակն եւ լուսավեա
Ասեա շողքովն իր կենսառատ ծիծաղում ե նրանց հետ:

Ծիծաղում ե ե նրանց հետ հայրենիքն իմ ընդարձակ,
Վեր կենսութախ այդ յոթնյակի չքնաղ ուրոցքը դարձավ:

Յեւ ամեն ուր այդ բախտավոր ընտանիքի հարկի տակ,
Յերբ սեղանն ե բացվում հացի, բարիքներով անքանակ,—

Յոթ վորդին են յոթ վարդի պես այդ սեղանը զարդարում,
Հացկերութիւնը նրանց հարուստ, զվարթ խնճուղք ե դառնում:

Յեւ հնչում են մոր շուրթերից մաղթանքները բերկրալի,—
«Յոթը վորդուս արեւ քեզ, մեր կյանք, մեր սեր Ստալին»...

1937 թ. III

ՌՈՒՍՍՍՏԱՆԻՆ

Մոր գրկի մեջ մ'նշացող մի մանկան նման
Քո գգվանքն ե վայելում իմ սիրտը ջահել,
Յեւ ցնծություն իմ հոգու, վոր հունի սահման,
Տալ ե դառնում ծոցիդ մեջ, ու դառնում ե սեր:

Ձե՛ վոր վորրուկ եյի յես, մի խեղճ գառնարած,
(Գառնարած եր աշխարհն իմ իշխողի հոտին),
Հացով եյի կուլ տալիս հացն իմ վաստակած
Յեւ արյունն եր լերդանում իմ բորիկ վոտին:

Ջերմ արե եր յերազում իմ մանուկ հոգին,
Բայց սեւ ամպն եր փակել իմ հորիզոնը մութ,
Կը դառնայի յես մի խեղճ, գետնաքարշ մի կին,
Ինձ ոտար կը փնային յերկինքները լուրթ,—

Բայց Ստալինն ինձ համար յեղավ արեգակ,
Նա սիրասուն հոր նման ինձ վորդեգրեց,
Մեռավ իմ խեղճ վորրության ոճը դժնդակ,
Յեւ հորիզոնն իմ դարձավ անպարփակ ու մեծ:

Ու մաղախն իմ թողեցի յես լեռնալանջին,
Յրիվ յեկան դաշտի մեջ գառներն իմ տիրոջ,
Կյանքի թովչանքը խոսեց հոգուս ականջին,
Յերջանկությամբ լցվեցին իմ ուրերը վողջ:

Յերջանկացալ ինձ նման աշխարհն իմ շքեղ,
Ժողովուրդն իմ՝ կարիքի բեռի տակ կքած,
Ու մեր որսում՝ ծխացող հառաչանքի տեղ
Կենսաթով ու լիարյուն ծիծաղը զնգաց:

Յեւ անա յես իմ յերկրի սերն եմ բերել քեզ:
Ու նրա հետ միատեղ՝ բերկրանքն իմ որսի:
Մեր շողշողուն արևի ճաճանչների պես
Յես վողջույններն եմ բերել իմ ժողովրդի:

1935 թ. Մոսկվա

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԻ ՆԿԱՐԻ ՎՐԱ

Ջան վարդազեղ ջահելություն ստալինյան մեր դարի,—
Դուք աղջիկներ զվարթերես, պատանիներ քաջարի,
Տեսել եմ ձեզ ռավառնելիս յես մեր կապույտ յեթերում,
Ջառ դաշտերի մեջ եմ տեսել ու հայրենի ծովերում:
Մարտ եք մղել տարերքի դեմ դուք համարձակ, անհողողոք
Ու նվաճել եք քաջության ուղիները կենսահորդ:
Ու հայրենի մեր աշխարհի ժողովուրդը քաջազարմ
Յնծացել ե ձեր նվաճած դափնիներով անթառամ:

Այժմ ել անա տեսնում եմ ձեզ զվարթերես խնդալիս,
Ու անսպառ յերջանկության ծովն ե մտնում իմ հողիս,
Ձեր ծիծաղը, ջան ջահելներ, յերգ ե անմահ ու բերկրանք,
Նա կյանքի սերն ե բորբոքում ամեն մեկիս կրծքի տակ,
Դուք պահում եք աշխարհը մեր միշտ կենսահորդ, անառիկ:
Ու հպարտ ենք մենք ձեզանով, մենք ձեզանով յերջանիկ:
Ջան հայրենի իմ աշխարհի պատանիներ, աղջիկներ,
Թող արևից պայծառ շողա ստալինյան կյանքը ձեր:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

(Սահմանադրութեան առթիւ)

Հայրենիքիս ծիծաղախիտ հովիտներին, լեռներին
Կենսաժպիտ գարունն իջավ հավերժական լույսի պես,
Յերջանկութեան յերգը զնգաց մեր հնավանդ շենքերից,
Հայրենիքիս կյանքը դարձավ ուրախութեան ծով հանդես:

Շատ ե լացել հայրենիքն իմ իշխողների սրի տակ,
Ու մոռացված վորբի նման մոր գգվանք ե յերազել,
Վիշաք նրա Գեղարքունյաց ծովի նման ընդարձակ,
Վողբացել են դար ու դարեր հազար փանդիւ ու սաղեր:

Վորդին նրա դառը դատել ու դատարկ ե նստել միշտ,
Յեւ առ հավետ հաց են կանչել թոնիրները մեր շիջած,
Քաղցն ե յեղել մեր տների տիրակալը ամբարիշտ,
Ու տքնել ե ժողովուրդն իմ ե՛ր անազատ, ե՛ր անհաց:

Ազատությունը մեզ համար ծիածան ե թվացել,
Ու վառվել ե ճաճանչափայլ,—հեռու, անհաս լեռներում,
Մենք վաղել ենք նրա յատրից, մենք նրան ենք տենչացել,
Բայց նա ամբիշտ խաբս ե տվել ու փախել ե միշտ հեռուն:

Ծիածանին այդ հեռավոր չեյինք հասնի մենք հավետ,
Թե չվարեր արշավը մեր առաջնորդն այն մեծանուն,
Այդ նա յեր, վոր ծունկի բերեց հին աշխարհը չարադետ,
Ու փոխարեն ծիածանի՝ արե տվեց մեզ շողուն:

Ու վառվում ե հիմա շքեղ արեգակն այդ լուսազետ
Մեր լեռներում գեղատեսիլ մեր, շենքերում նորակերտ,

Կյանքն իմ ջահել ժողովրդի տոն ե դարձել ու հանդես,
Յեւ աշխարհն իմ դարձել ե շեն ազատութեան ամուր բերդ:

Դեհ, թող թնդան սրտերը մեր շեփորների պես ուժգին,
Թող բերկրանքը մեր դուրս ժայթքի ջրվեժների պես վարար,
Իշխողների կրունկի տակ ել չեա իջնի դու ծունկի,
Կյանքի յեկած շեն ու շքեղ հայրենական իմ աշխարհ:

1937 թ.

ԿՈՒՆԻԴԱՅԻ ԲԱԼԼԱԴԸ

(Ըստ հունական ավանդության)

Արեգնաշող, գեղածիծաղ կանաչ բաղ եր Կոլխիդան,
Հեքյաթներում զրնգացող անուշ տաղ եր Կոլխիդան:

Առում եյին Կոլխիդայի հովիտներում ծաղկավուն
Ապրում ե միշտ յերջանկության վոսկեգեղմը շողշողուն:

Առում եյին՝ ով իր սիրով վոսկեգեղմին տիրանա,
Կյանքը նրա հավետ անմահ բերկրանքի ծով կը դառնա:

Ու ցանկալի, շքեղ բախտի հովիտ յեղավ Կոլխիդան,
Բոլոր թովիչ հեքյաթներից թովիչ յեղավ Կոլխիդան:

Վոսկեգեղմին տիրանալու տենչանքներով անհադուրդ՝
Վոսքի յեկան հին աշխարհի իշխողները արնաշուրթ:

Նրանք յեկան նվաճողի դրոշներով արնամած,
Յեկան չքնաղ Կոլխիդայի գեղեցկությամբ արբեցած:

Յեվ արնածոր հազար սրի շափաղ տեսավ Կոլխիդան,
Իր հարազատ զավակներին դադաղ յեղավ Կոլխիդան:

Յեվ այնտեղ, ուր սոխակն անուշ իր տաղերն եր գեղեցում,
Ուր լուսացայտ ջրերի հետ աստղերն եյին ծիծաղում,

Ուր պերճորեն ծաղկում եյին շեն այգիներն ու արտեր,—
Կյանքը թոշնեց, ու Կոլխիդան դարձավ ճահիճ մահաբեր:

Սմայացան Կոլխիդայի հովիտները գեղատես,
Սիրտը նրա վշտով լցվեց այրի կնոջ սրտի պես:

Իշխողի սուրը նվաճեց շեն այգիները կանաչ,
Բայց վշտահար Կոլխիդացու սիրտը փաց աննվաճ:

Յեվ աննվաճ այդ սրտի մեջ վոսկեգեղմի վոխարեն
Ազատության տենչը վառվեց, վորպես պայծառ մի արև:

Ազատատենչ արծիվների ուրբան յեղավ Կոլխիդան,
Հազար կռիվ, արնածոր վերք ու ցավ տեսավ Կոլխիդան:

Յեվ արգավանդ Կոլխիդայի ծնողական ջերմ ծոցից
Կայծակնակուռ սրի նման յեղավ Կոբան հողմածին:

Բարձրացավ նա վորպես արի և իմաստուն զորավար
Ու նվաճեց յերջանկության արեգակը մեղ համար:

Ու շունչ առան Կոլխիդայի հովիտները լայնարձակ,
Նրա կապույտ յերկնքի տակ կյանքը նորից շենացավ:

Յեվ այնտեղ, ուր սողում եր լուռ ու ինքնիշխան ոճը չար,
Ուր վոր դաշտերն եյին թախծում ամլությունից վշտահար,

Այնտեղ արի Կոլխիդացու անուշ յերգը դողանջեց,
Յեվ արգավանդ հողի ծոցում առատության սերմն աճեց:

Ջան, Կոլխիդան դարձավ անմեռ յերջանկության վոսկեգեղմ,
Դարձավ մեր մեծ հայրենիքի մարգարիտը լուսապեղ:

1937

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Գիշերն իջել նստել տափակ կտուրին,
Բաց ե թողել սև մազերը ուսից ցած,
Վորպես ճերմակ չաղրա հազած թրքուհին,—
Ձմրան գիշերն յերազում ե աչքը թաց:

Ձմռան գիշեր, ձյունն ե իջնում անաղմուկ,
Յեզ իմ խաղաղ տնակի մեջ այս գիշեր
Հոգիս ինչպես արեաչյա մի մանուկ
Պաղ ե անում հուշերի հետ վոսկեհեր:

Գարնան կանաչ, ջերմ կարոտն իմ կոպերին,
Կես քնի մեջ շըշընջում են շուրթերը—
«Գարուն կը գա, արեն համբույր կբերի,
Արեն անուշ՝ ծծմայրն հողի ու տերը»:

Յեզ կբացվեն տափ ու արոտ, արտ ու հերկ,
Շող Արազածն իր անձրեղ կթափի,
Մենք վար կանենք, սև կհազնի դաշտը մերկ,
Հողին կտանք մեր հատիկը սատափե:

Հաց կբերեն մեր հարսները սեվորակ,
Վարդ կքաղեն, սարի շուշան ու նարգիզ,
Գարնան նման նրանց ջահել կրծքի տակ
Սրտերն ուրախ բերքի սիրով կզարկեն:

Ձան, կլցվի բերքատարափ հասկը մեր,
Լույս կշաղվի բերքի փրփուր ծովերից,
Թեպեր կառնի մեր հնձվորը սևահեր
Սարից իջած սիրակոհակ հովերից»:

Վաղը կրկին գարուն կը գա ու արև,
Կյանքը կեռա հովիտներում հայրենի,
Կենենք ցանքի մեր արտերը կվարենք,
Ծիծաղ կը գա յերկրիս ձոր ու այրերից:
1934 թ.

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Է

Յերբ աշնան մի առավոտ յետ աշխարհ յեկա,
Հավաքվեցին տունը մեր ազգ ու բարեկամ:

Իմ բարուրին նայեցին տխուր ու անհույս
— Եհ, աղջիկ ե, ասացին, ել ի՞նչ աչքալույս:

Թեմ ու թիկունք չի լինի աղջիկն հոր համար,
Յեմ ոջախը հայրական չի պահի անմար:

Ու յերբ անշուք որոցքում յետ արտաովեցի,
Ձույգ այտերիս արցունքի շիթեր սառեցին,—

— Արցունքով ել, ասացին, աղջիկը կաճի,
Ամեն անգամ միք վաղի դուք նրա կանչին...

Յերբ մեծացա, ուղեցի մանուկների հետ
Շվի փչել ու գնալ դաշտը ծաղկավետ,

Գնալ խաղալ դաշտերի կանաչում թավիշ,
Տղայի պես լինել միշտ ազատ ու անվիշտ...

Բայց «աղջիկ ես, ասացին, այդ սուր ես վաղում,
Ձեռ տեսնում քո մայրիկի հոգեքերը բազում:

Նստիք նրա ծնկի մոտ, կարկառան արտ,
Վոր փեսացուն հավանի ու յետ չդառնա...»:

Յետ կարկառան արեցի, ասեղի նման
Աղջիկ լինելը խոցեց սիրտն իմ մանկական:

Աղջիկ լինելն ինձ թվաց կակաչ մի բացված,—
Դրսեց կարմիր, իսկ ներսից սիրտը սեփականած...

Ու մանկութունն իմ անցավ թախծոտ ու տխուր,
Ինչպես անցել եր արդեն մանկութունն իմ մոր:

2

Հայրենիք իմ, հոյակապ, անխորտակ ամբոց,
Այդ դու եյիր, վոր յեղար ինձ նոր որորոց:

Ու մայրական քո սրտի սիրով կաթոգին
Յերջանկությամբ լցրեցիր իմ անվիշտ հոգին:

Դու տվեցիր ինձ արծվի թռիչք ու թևեր
Ու բարձրացա յետ կյանքի գագաթներով վեր:

Յետ ըմպեցի կենսատու շունչն ազատության,
Յեմ ոջախը վառեցի իմ հայրենի տան:

Իմ մոր աչքից սրբելով յեղյամն արցունքի,
Հաղորդեցի յետ նրան բերկրանքը կյանքի:

Յերջանկացան ինձ նման աղջիկներ բազում,
Վոր բախտ եյին վորոնել իրենց յերազում:

Նրանց կյանքի կոչեցիր քո ջերմ գրկի մեջ,
Ինչպես կանաչ դաշտերը՝ ծաղիկներին պերճ:

Աղջիկներն այդ դառնալով խիզախ արծիվներ,
Նվաճեցին քեզ համար կապույտ յերկինքներ:

Նվաճեցին ծովեր լայն ու կապտայերիզ,
Դադաթները գլխության հպարտ լեռների,

Նվաճեցին նրանք ծով բերքը հողի
Ու անպարփակ սերը ջինջ՝ նրա հերկողի:

Աղջիկներն այդ կրելով իրենց սրտի մեջ
Ստալինյան արևի ճաճանչներն անշեջ, —

Սարկուսթյան լծի տակ գլուխ չեն թեքի,
Ազատությունը իրենց չեն տա վռչվոքի:

Հպարտացիր նրանցով, յերկիր իմ ազատ,
Յեվ դուք՝ անուշ ծնողներ, մայրեր հարազատ:

Դու ել, յերկրիս արեգակ, պայծառ հուրհուրմ
Ամեն ծնվող աղջկա ուրոցքի վրա:

1937 թ.

ԽԻԶՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵՐՄՈՆՏՈՎԵԱՆ ԱՔԱՍԻՆ

1

Անցած տարիքի բեռը սաղարթին
Ապրում ե անտեղ մի ծեր աքառի,
Ու պատմում ե միշտ ամեն անցորդի
Այն ջահել մեռած պոետի մասին:

Պատմում ե, ինչպես հյուսիսի ցրտից
Նա յեկավ մի որ տխուր ու մենակ,
Թափառումների տանջանքը սրտին
Յեւ խիղախ յերգի հուրը կրծքի տակ:

Նա յեկավ վշտով, մորմոքով անլաց,
Գլուխը հենեց կանաչ այդ ծառին,
Ինչպես յեղջերուն, վոր նետահալած
Իր բախտն ե հանձնում ոտար անտառին:

Թողել էր նա իր տունը հայրական,
Ջերմ գուրգուրանքը հարազատների,
Յեւ սրտում հուշերն այդ նվիրական
Դարձել էր հեռու Կովկասին գերի:

Ու թեև մենակ ու վրտարանդի,
Հոգում կրելով տառապանք ու ցավ,
Նա չը կաշկանդեց բողոքն իր սրտի
Յեւ կյանքի ուղին անվարան անցավ:

Կայծակնաշառաչ յերգերը նրա
Պարտավանք յեղան դաժան իշխողին,
Վորի չար կամքով վտարվել էր նա
Իր հայրենական հարազատ հողից:

Յեւ ոտարության, մենության գրկում
Նա գլուխն իր սեզ պահեց անխոնարհ,
Ու խիզախ «դեպ»-ի վողին մըրըկուն
Ուղենիշ յեղավ պոետի համար:

Նա միշտ խոյացավ դեպի վե՛ր ու վե՛ր,
Կատարը հառավ յերգերի լեռան,
Ու խիզախ յերգի քերթողն անվհեր
Ազատության ջերմ կարոտով մեռավ:

2

Հպարտ աքառի, դարավոր դու ծառ,
Վոր տերեւներիդ սուքով տխրագին
Ապրեցիր նրա կարոտը պայծառ,
Յեւ հուղարկավոր յեղար դիակին,—

Քո հովանու տակ նա յերգեր գրեց,
Պեչորինի հեռ նստեց զրույցի,
Ժամանակն անցավ, քեզ կուացրեց,
Բայց այդ յերգերը կանգուն մնացին:

Կանգուն մնացին, քանդի նրանց մեջ
Չըլուող սրտի բողոքն եր հնչում՝
Ինչպես չսառչող լեռնային ջրվիժ,
Յեւ ազատության սերն եր կարկաչում:

Ու հիմա ել յերբ կարոտով մի ջինջ
Յեռ այդ շառաչուն յերգերն եմ կարդում,
Իմ արցունքացող աչքի առաջին
Այն վաղամեծիկ պոետն և կանգնում:

1935 թ. Պյատիգորակ

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ

Ա. Ս. Պուշկինին

1

Հեռուներում հավիկց գիշերը միգամած,
Բացվեց պետերբուրգյան ցերեկը մշուշոտ,
Յեւ նա աչքերը դույզ ճերմակ թղթին գամած,
Զվարթ սրտով նստեց յերգի սեղանի մոտ:

Նստեց մարմին տալու հույզերին իր հողու,
Շունչ տալու իր սրտի տենչանքներին անմար,
Վորոնց գիշերը վողջ ջահել սրտի խորքում
Գուրգուրել էր, վորպես գորովագութ մի հայր:

* * * * *

Այստեղ եր վերջին յերգը բարձրաշառաչ,
Թղթի վրա դեռ թաց վերջակեան եր ննջում,
Ու գանգուր գլուխը ձեռքերի մեջ առած,
Պոետն ազատության արև եր անընդամ:

Դուրս բացվեց հանկարծ և արևի նման
Շեմքի վրա կանգնեց Նատայան դեռատի,
Հայացքները նրանց մի պահ իրար առան,
Շաչեցին ծովի պես հույզերը պոետի:

Յեւ աչքերը հառած չքնաղ կնոջ գեմքին,
Նա կռկռով կծեց շրթունքն իր դողդոջուն
Ա՛խ, ոտար եր արդեն հայացքն այդ կաթողին,
Վորի հրով մի որ իր սերն եր կանաչում:

Այդ հայացքի տեղակ, կնոջ աչքի միջից
Արդեն ցուրտ ժպիտով ճերմակ ցարն եր նայում,
Նայում եր նա, վորպես արնածարավ մի ցին
Չարությունը դեմքին ու վրեժն աչքերում:

Ու պոետը հիշեց սերն իր վաղնջական,
Թրթիռները հիշեց իր պատանի սրտի,
Յեւ կռիվն ընդունող զորականի նման
Սև թիկնոցը ուռին մեկնեց մենամարտի:

2

Սասակացող վրեժով հոգիները լեցուն
Իրար դեմ կանգնեցին յերկու թշնամիներ,
Մեկը վորպես դաժան բռնության մարմնացում,
Մյուսն՝ հոգով ազատ արծիվ մի անվեհեր:

Յերկու գնդակ թռան, վորպես յերկու ուրուր,
Յեւ խուլ արձագանքեց պուրակը ձյունածածկ,
Ծունկի յեկավ հանկարծ պոետը վիրավոր,
Ազատության անմեռ արևը կրծքի տակ...

3

Ո՛վ դու ազատության անկաշառ տաղերգու,
Վոր քաջի պես ընկար կռվում անհավատար,
Քո խիզախ յերգերի շեփորը զրնգուն
Ղողանջում ե այսոր սրտերի մեջ հազար:

Յեւ մեր չքնաղ յերկրի յերգիչները ազատ,
Մեր սերունդը հպարտ Ստալինյան դարի,—
Վորպես իրեն տրված մի պատգամ սրբազան
Միշտ պայծառ ե պահում փառքը քո քնարի:

Թող տարիներ անցնեն ակնթարթի նման,
Թող սերունդներ ծնվեն, սերունդներ մահանան,
Բայց անունը քո վեհ, միշտ կը մնա անեղծ,
«Քանի լուսնի ներքո դեռ կա մի բանաստեղծ»:

1927 թ.

ՆԱՏԱ ԲԱՐՈՒՇԿԻՆՆԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այսոր թաղում են քեզ, ընկեր իմ հեռավոր,
Ընկեր իմ քաջասիրտ ու հարազատ,
Հուզում ե իմ հոգին քո մահը փառավոր
Յեւ քո հաղթ թևերի թռիչքն ազատ:

Դու ապրեցիր յերկնի կապույտներում չքնաղ,
Բազեյի պես հզոր ու ուլացիկ,
Բազեյի պես հզոր դադաթներից ընկար
Յեւ քո մահով նրանք մեզ մնացին:

Մեզ մնացին յերկնի կապույտները հեռու
Յեւ հիշատակը քո նրանց պես վեհ,
Վոր Յերեանում շոգ ու ձյունոտ բովեռում
Տալիս ե մեր հոգուն խիզախ թևեր:

Այսոր թաղում են քեզ, ընկեր իմ թանկագին,
Հայրենիքիս զավակ դու սիդապանծ,
Հայրենիքն իմ գիտե զոհված իր զավակի
Հիշատակը պահել միշտ անմոռաց:

1936 թ. 1 հոկտեմբեր

*
* *

Ն. Ոստրովսկու հիշատակին

Յես թերթում եմ սլաշծառ եջերն այս գրքի
Ու կարդում եմ մի կարոտով անսպառ,
Կրկին գենքն ե շողում իմ դեմ, ու կրկին
Արշավում են ջուկատները գինավառ:

Արշավում ե Կորչագինը պատանի,
Սուրն ե շողում կայծակի պես ահավոր,
Ճարճատում են գնդակները կատաղի,
Ու թշնամին յես ե գնում գլխիկոր:

*
* *

Հայրենիքիս տափաստաններ ծաղկավուն,
Վոր յեղաք այդ գոռ մարտերի լուռ վկան,
Ձեր գրկի մեջ մի աստղալից իրիկուն
Իր աչքերի լույսը մարեց այն տղան:

Յեվ հիմա ել ով անցնում ե ձեր լայնքով,
Ով շրջում ե ձեր կանաչի թավրշում,
Սրտի անհուն, փոթորկալի բերկրանքում
Կորչագինի խիզախությունն ե հիշում:

Խիզախություն, խիզախություն փառավոր,
Վորին միայն բոլշևիկն ե ընդունակ,
Վորի սլաշծառ հատիկները ամեն ուր
Ստալինն ե տերմանում մեր կրծքի տակ:

Յեվ աչքի լույսն այն թխորակ պատանու
Թեև չկար, թեև մարել եր վաղուց,
Բայց սիրտը լի խիզախությամբ այդ անհուն,
Ապրում եր նա ու մեզ նման ծիծաղում:

1937 թ.

ՂՈՒԿԱՍԻՆ

Այն ցուրտ որերին անմեռ տենչանքով
Նա լուռ յերազեց գգվանքն աստղերի,
Ճախրեց լազուրում արծվի թռիչքով—
Ըմպելու թովիչ գաղտնիքը վերի:

Ու վորպես հավետ չմարվող տենչանք,
Շողաց նրա մեջ գիսավորն հեռու,
Մինչ հոգին նրա յերկնքից իջավ
Իր կորովը ջերմ աշխարհին տալու:

Յեվ ցուրտ որերին այն արհավրած
Նա մարեց ջահել արևն իր կյանքի,
Վոր հայրենական աշխարհի վրա
Աստղերը շողան առանց գաղտնիքի:

ՅԵՐԿՐԻ ԴՈՒՍՏՐԸ

Իսպանուհուհի

1

Աղջիկը դռնից ներս մտավ զվարթ,
Հայացքը պայծառ, այտերը զույգ վարդ:

Ափի մեջ առավ զույգ ձեռքերը մոր,
Իրոջմեց նրանց յերկու տաք համբույր:

Նա իր հետ ուներ հրացան ու սուր,
Իսկ դրսում արդեն գիշեր էր ախուր:

Գիշերվա նման ցուրտ ու հագին
Կսկիծը ճնշեց սիրող մոր հոգին:

Իսկ նրա հանդեպ աղջիկը ջահել
Վառվող հայացքի ջահերն էր պահել:

Կարդացին նրանք մեկ մեկու հոգին,
Յեվ աղջիկն ասաց,—«կյանքն ե թանկագին»:

Բայց կյանքի սիրուց լավ ու թանկագին
Կա մի ուրիշ սեր.—սերն հայրենիքի:

Ասաց ու քայլեց աղջիկն անխռով,
Ու մայրը մնաց շեմքին արցունքով:

Նա դիրքում չոքեց ընկերոջ կողքին,
 Կապույտ ծովի պես հուզված եր հոգին:

Դողացող մատով շնիկը քաշեց .
 Յեվ իր առաջին գնդակը շաշեց:

Գնդակը թռավ դեպի թշնամին,
 Իսկ հեռուներում յերգում եր քամին:

Քամին արշավի յերգ եր նվագում,
 Ու ցնծություն եր այն աղջկա հոգում:

Այդ ցնծությունից նա թևեր առած՝
 Քաջաբար կռվեց մինչև լուսաբաց:

Յերբ արեվն հեռու բլուրներն առավ,
 Աղջիկն այդ զինվոր դիրքում ծառացավ:

Նա ձեռքը դրեց իր արնոտ վերքին
 Յեվ ուրախ նայեց հարազատ դիրքին:

Հետո աչքերը արեին հառած՝
 Նա հազիվ կանչեց, — «ընկերներ, առաջ...»

Ու մեղմ փակվեցին կոպերը նրա,
 Յերբ լույս եր արդեն դիրքերի վրա...

Իրված եր դաշտում մի ջահել դիակ,
 Շուրջն ընկերների խումբը գլխահակ:

Հայացքներն հառած նրա ճակատին՝
 Արտասովոր եյին կաթիլ առ կաթիլ:

Զինկոմը տխուր, քարին բարձրացավ,
 Զինվորներն ամեն տեղում քարացան:

— Ի՞նչ ասել հիմա, վոր լինի պատշաճ,
 Զինվոր եր նա մի անձնվեր ու քաջ:

Նա ուներ միայն մի կյանք թանկագին,
 Յեվ այդ ել տվեց մեկ հայրենիքին:

Այդ կյանքով յերդվենք ընկերոջ առաջ,
 Վոր դասակը մեր չի տեսնի նահանջ»:

Դասակը տվեց հարգանքի կրակ,
 Դրոշներն իջան դադաղի վրա:

Յերբ մահը դստեր իր մորն հայտնեցին՝
 Նա գնաց դտավ բանակի մեծին:

Յեվ նրան ասաց. «յեկեկ եմ ահա,
 Աղջիկն իմ կռվեց ու մեռավ անահ»:

Գալիքն այդ շիրմին վարդեր կը դնի,
 Զինկոմն ել թող ինձ զինվոր ընդունի...»

Բիսկայան ծովի չքնաղ ափերում
 Յերեկ մի ջահել աղջիկ եր ապրում:

Աղջիկն այդ ընկավ իր յերկրի համար,
 Ու կռվում է դեռ ծերունի մի մայր:

Յեվ աղջկա պայծառ սիրտ հետ մեկտեղ
 Նա իր ծեր հոգում մի սեր է կերտել,—

Այդ սերն է անուշ իր հայրենիքի,
 Վոր ուժ է տալիս նրա գնդակին:

Մ Ա Յ Ր Ը

Մարի յետեւում, մութ ու ամպամած,
Մի սիրուն գյուղ կա, գյուղում մի խրճիթ,
Առջեւում պարտեզ, ծառ ու ցանկապատ,
Ու կապույտ մի լիճ, խորունկ ու վճիռ:

Ապրում է այնտեղ բարի մի պառավ,
Մազերը ճերմակ ու սիրտը զարուն,
Անոպառ սիրով լեցուն ու առատ,
Ինչպես իր փոքրիկ պարտեզը սիրուն:

Մի որ բախտը ինձ այդ գյուղը նետեց,
Բարի պառավին յես հյուր գնացի,
Մերով, սրտուրախ նա ինձ ընդունեց
Ու բաժին հանեց իր անուշ հացից:

Կերանք, խոտեցինք լավից, չարիքից,
Յես իմն առացի, ինքն՝ իրը պատմեց,
Ու մեկ ել աչքըս ընկավ թարեքին,—
Այնտեղ դրված եր մի սիրուն պատկեր:

Յերկար նայեցի, նայեցի, ապա
Ուղեցի հարցնել զի ե այդ տղան,
Հազին չերքեզի, մեջքին սուր կապած,
Տեսնես պառավի ինչն է յեղել նա:

— Ո՞վ է, առացի, այդ տղան կտրիճ,
Քո ինչն է, մայրիկ, և ո՞ւր է հիմա...
— Եհ, նրա նախնի արեւ կտրի,
Մինիկ տղես ե, կորած անգյուղման:

Մինիկ տղես ե կարմիր պարտիզան,
Վոր մի որ կապեց թուր, զենք ու զրահ,
Թողեց տուն ու տեղ և ջահել խիղախ,
Ու կռիվ գնաց դուշմանի վրա:

Նրա հետ ինչքան տղերք գնացին,
Մեկից դատարկվեց մեր ամբողջ գյուղը,
Մնում էյի յես, վոր ճամբեն բացվի,
Ու վերադառնա ոջախիս ծուխը:

Մնում էյի յես, աչքս իր ճամբին,
Յերբ թուփն եր գվւում, կամ գյուղին լալիս,
Թվում եր սիրտս, թե ծխի ամպից
Կտրիճ բալես ե հրեն ինձ գալիս:

Այսպես անցկացավ ուղիդ մեկ տարի,
Հետո ել թուան մի քանի ամիս,
Չյունը վեր կացավ դիմացի սարից,
Յեւ ասողը թեքվեց մեր չար դուշմանի:

Դուշմանը գնաց, փախավ մեր գյուղից,
Կյանքը խաղաղվեց, ապրուստն հեշտացավ,
Շատերը դարձան իրենց տուն-տեղին,
Բայց մինիկ բալես չը վերադարձավ:

Այն որից քանի տարի յե անցել,
(Վոչ գիր եմ ջոկում, վոչ թիվ ու հետաք),
Մենակ իմ դուռը կրնկին բաց ե,
Ու սուփրես փռած, վոնց վոր դու տեսար:

Յեւ այս աշխարհի գործերի վրա
Ինչքան տղերք կան ու ինչքան խիղախ,
Թող գան վայելեն ու հիշեն նրան,—
Այն ջիվան տղին, կարմիր պարտիզան:

Ու թող յետ գնան, պատմեն ամենքին,
Վոր սիրտըս թեև ցավել է վերքից,

Բայց տունըս շեն ե ու հողիս բարի,
Յեվ չեմ անիծում յես մեր աշխարքին:

Ու մայրը լռեց: շեմքին քարացած
Մընում եյի յեռ շվար ու ցավով,
Դարձյալ նա խոռեց և այսպես առայց:
«Մի տխրիր, բալես, այլ վարդ ծիծաղով:

Գնա աշխատիր մեր գործի համար,
(Տեսնում եմ, դու ել գործի տեղ մարդ ես)
Ու դու ել ասա աշխարքին արար,
Վոր վերքը սրտիս փակվում ե արդեն:

Մենակ քո ճամբին թե հանդիպեցիր
Այն գիտուն մարդուն անունն Ստալին,
Առա, վոր դուն ես կյանք տալիս հիմի՞
Ծերացած մորը պարտիզան բալի»:

1935 թ.

ՊԱՐՏԻՉԱՆՈՒՀԻՆ

1

Դոնի յեզերքին, թավիշ կանաչում
Մի հին, մամուկալ շիրիմ ե ննջում:
Այդ շիրմի ներքո անտապանագիր,
Ամփոփած դալար, անմեռ իղձերն իր,
Ամփոփած հույսերն իր կենսակարկաջ՝
Աղջիկն ե ննջում անվեհեր ու քաջ:

2

Ու ամեն տարի, յերբ արփին գարնան
Կյանքով ե լցնում գյուղ ու տափաստան,
Յերբ կանաչում են արտերը նորից
Ու կակաչներն են յելնում խոր քնից՝
Դոնի կաղակն ու հովը միասին
Պատմում են ջահել աղջկա մասին:

3

Աղջիկը քաջ եր ու զվարթերես,
Նուրբ հասակ ուներ, աչքեր՝ ծովի պես,
Ծիծաղը նման զանգի զողանջին,
Շեկ մաղերն եյին ծափ տալիս լանջին,
Ու կենսաթրթիռ կապույտ աչքերում
Քսանմեկ տարու կյանքն եր հուրհուրում:

4

Նա գլխին ուներ միփափախ նաշխուն
Ու բարակ մեջքին սրասուր դաշույն,
Նժույգ եր հեծնում ջիգիտի նման

Ծիծաղով լցնում գյուղ ու տափաստան,
Աղջիկն այդ սիրուն ամենքին ճանաչ՝
Դոնի յեղերքին պարտիզան եր քաջ:

5

Տափաստանից եր նա յեկել ջոկատ,
Բերելով սիրտն իր, սերը խանդակաթ,
Իսկ տափաստանում խրճիթն եր նրանց,—
Մայրը վշտահար, հայրը ծերացած.
Յեղբայրներ չուներ՝ նրանք յերկուսն ել
Թշնամու սրի զոհն եյին դարձել:

6

Նրանք յերկուսն ել պարտիզան եյին,
Յերկուսն ել խիզախ սրտեր ունեյին,
Բայց ասված է, վոր մահվան ձեռքը չար
Վոչ լավն է ջոկում, վոչ թույլն ու տկար.
Յեղբայրներն ընկան ու նրանց տեղակ
Աղջիկը դարձավ կարմիր հեծելակ:

7

Յերբ գրոհ լիներ ու ճակատամարտ,
Նա ձին կնստեր շխտակ ու հպարտ,
Ամենից առաջ կթռչեր նա միշտ,
Կրակ բաց կաներ համարձակ ու ճիշտ,
Ու սուրը նրա բազկին հնազանդ
Կովի թեթ պահին կշողար աղատ:

8

Այսպես քաջ եր նա ու կորովով լի,
Ամենքի սրտին մոտ ու սիրելի,
Ամենքի համար քույր եր գթառատ,
Զինակից ընկեր, զինվոր լինավատ,
Ու վողջ ջոկատում պարտիզանական
Սիրում եյին այդ խիզախ աղջկան:

9

Մի գիշեր խիզախ ջոկատը նրանց
Փամփուշտն սպառեց ու գիրքում մնաց:
Դիրքի առջևում թշնամին եր չար,
Թիկունքից ձմռան ցուրտը սրառայր,
Իրենց հաց չկար, նժույգներին՝ կեր,
Ու մռայլ եյին տղերքն անվեհեր:

10

Զինկոմը նրանց հույզով բորբոքուն
Անխոս քայլում եր, ծխում թամբաքուն,
Ու աչքերը լի սիրով մտերիմ
Նայում եր մռայլ իր ընկերներին,
Նայում եր,—վշտից սիրտն եր մղկտում
Ու աչքից ասես արյուն եր կաթում:

11

Ո՛վ ե կտրիճն այն, վոր մահն հեգնելով
Թշնամու շղթան կանցնի անխռով՝
Կանցնի, կհասնի բանակին կարմիր
Ու կյանք կբերի ընկերներին իր...
Դժվար այդ խնդրով զինկոմն սւժ գիմեր,
Յերբ վոր առջևում անխուսափ մահն եր:

12

Ու քայլում եր նա դեմքին վիշտ ու հուս,
Պարտիզաններն ել լուռ եյին, անխոս,
Վոչվոր նրանցից մի խոսք չեր գտնում,
Վոր միթիթաբեր զինկոմին տըտում,
Վողջը լուռ եյին, վողջը գլխահակ,
Միևնույն հոգան եր վողջի կրծքի տակ:

Վողջը լուռ եյին ու մեկ ել հանկարծ
Դիրքում աղջըկա ձայնը զրնգաց,
Փափախը շիջով նա թեքեց քունքին,
Շուռ յեկավ ուրախ նայեց ամենքին.
Ու առաց—տղերք, փրկությունը կա,
Մեզ չի հոշոտի թշնամին ագահ:

Կյանքը մեզ համար հարկավոր ե դեռ,
Դեռ չի հաղթված մեր վստիքը նեռ,
Հաղթության համար ու հայրենիքի
Յեռ պիտի փրկեմ կյանքը ամենքի,
Դեհ, մնաք բարով, մինչև լուսաբաց
Փամփուշտ կրե՛րեմ, փրկություն ու հաց...

Ասաց աղջիկը ու թռավ թամբին,
Ու ինչպես ամպից դուրս նայող արևին,—
Նայեց բոլորին, լիահույս ժպտաց,
Հետո խթանեց իր ձին սրընթաց
Ու վայրկենատես կայծակի նման
Հեծվորն ու իր ձին խավարում կորան:

Լայն տափաստանում ձյունը ծնկաչոք,
Ցուրտն եր կտրատում մարդու սիրտն ու թոք,
Գազաններն եյին սովից կաղկանձում,
Բոթաբեր յերգով քամին եր կոծում
Ու խավարի մեջ այդ աղանակիւր
Ձին թոցնում եր քաջ հեծվորին իր:

Աղջիկը ջահել ցրտին անտարբեր
Թռչում եր ուրախ, թռչում անվեհեր,
Լի ազատության հույզով հորձանուտ՝
Սլանում եր նա կարմիրների մոտ
Ու տափաստանի խավարից դաժան
Չեր խամրում նրա հույսը սրբազան:

Հեծվորն ու իր ձին յերկար գնացին,
Կուրգաններն անցան ու հասան Դոնին,
Բանակը կարմիր մոտիկ եր արդեն,
Աղջըկա հոգում բացվեցին վարդեր,
— Քիչ ել, մի քիչ ել՝ իմ ձի, իմ ընկեր,
Ու զուր չի անցնի թափած ջանքը մեր...

Թեև լավ գիտեր այդ հեծվորը քաջ,
Վոր թշնամին ե կանգնած իր առաջ,
Բայց նա արև եր փնտռում այդ գիշեր
Ու մահվան մասին չեր ուզում հիշել,
Չեր ուզում հիշել... Բայց մեկ ել հանկարծ
Թշնամու գիրքից մի զարկ վորոտաց...

Կրծքից վիրավոր աղջիկն անվեհեր
Հասկացավ արդեն վոր մահը մոտ եր,
Ու ծոցից հանեց մի թուղթ արնոտած
Յերկու տող զրեց կարոտով ժպտաց,
Ու թուղթն առնելով ատամների մեջ,
Առաջ սլացավ կարոտով անշեջ:

Նա ինչպե՞ս կարմիր դրոշն արյունոտ
Սրարշավ հասավ կարմիրների մոտ,
Հասավ կանգ առավ, նամակը նետեց,
Վերքը բռնելով տխուր հառաչեց,
Իր շուրջը նայեց մի վերջին անգամ
Ու վայրկյան հետո աչքերը հանգան:

Աղջիկը մեռավ վաղ լուսաբացին,
Վաղ լուսաբացին փողեր հնչեցին,
Դրոշները վառ թեքվեցին, ապա
Վերև խոյացան խրոխտ ու անահ
Ու կարմիր գործի գունդը սիգապանծ:
Պարտիզաններին ոգնության գնաց:

Դաժան ու տաք եր կռիվն այդ որվա,
(Վոչ մի պարտիզան այն չի մոռանա),
Այդ որվա կռվում դրոշի նման
Զորքը տանում եր զոհված աղջրկան
Ու նժույգների սմբակների տակ
Թնդում եր յերկրի հողը բովանդակ:

Կռիվն ավարտվեց ու տափաստանում
Սրգեն հաղթության արփին եր շնչում,
Բայց հաղթողների շարքերում խրոխտ
Զկար աղջիկն այն քաջ ու անհողդողդ,
Նա լուռ ննջում եր անշուք դադաղում
Ու կրծքին արնոտ մի վերք եր շողում:

Ու յերբ հաղթված թշնամին անարդ
Թիկունքը շրջեց, կորով գլխահակ,—
Շեփորների գոռ նվագի ներքո
Մարտիկները մեր հաղթական յերգով
Պարտիզանունուն հողին հանձնեցին
Հայրենի Դոնի չքնաղ յեղերքին:

Տարիներ յեկան, տարիներ անցան,
Դարուներ տեսավ տափաստանն արձակ,
Ծաղիկներ յեկան Դոնի ավերին,
Մամուռը նստեց աղջրկա շիրիմին,
Բայց նրա հուշը դոնեցու սրտում
Արևի նման միշտ մնաց արթուն:

Ու հիմա, յերբ վոր արևը դարնան
Կյանքով ե լցրել գյուղ ու տափաստան,
Յերբ վոր սրտի մեջ իմ հայրենիքի
Թնդում ե ուրախ յերգը բերկրանքի,—
Դոնի կազակն ու հովը միասին
Դեռ պատմում են այն աղջրկա մասին:

1938 թ.

ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԱՎԻՆ

Ուկրաինական սահմանում 1937 թ.
քաջաբար զոհված սահմանապահ
Գրիգորի Վարավինի հիշատակին

1

Սաղարթներով, վորպես վահան փակած ճամբան արևի,
Կանգնած ե լուռ անտառը խիտ իր ծառերով կորովի,
Իսկ անտառից այն կողմ՝ անա, վորպես մեռած կարավան՝
Լեռներն են սեզ, կիրճերը մռթ, բլուրներ ու դարավանդ:
Ու աչքն հառած հեռվում փայլող լեռան կապույտ կատարին,
Լուռ կանգնած ե դիտանոցում սահմանապահ մի արի:
Կանգնած ե նա, վորպես հպարտ պղնձաձուլ մի արձան,
Կողքին կապած պողպատե սուր, ձեռքին փայլուն հրացան:
Կեսոր ե շոգ, արևը հուր բոց ե մազում դեպի վար,
Ջուրն ե լռել, հավքը քնել, խոտը դարձել դալկահար:
Կեսոր ե շոգ, բայց պահակի պողպատաձուլ կրծքի տակ
Սրթուն կյանքի յերգն ե թնդում հանց լեռնային մի վտակ:
Ու նա հոգով, մտքով արի սահմանին ե աչքն հառել,
Վորից այն կողմ մեր աշխարհի չար վտուխն ե դարանել:
Վորոխն այդ չար կզա անշուշտ, նա կփորձի սողալ ներս,
Նա կփորձի արցունք բերել մեր բալեքին ժպտերես:
Նա կը փորձի խել մեզնից յերջանկության աստղը հուր,
Ու մեր կարմիր արնով լվալ ձիրաններն իր անմաքուր,—
Բայց անեղ ե բազուկը մեր, սահմանը մեր աննվաճ,
Տես, կանգնած ե նրա յեզրին մեր պահակը քաջալանջ:

2

Ու նայում ե հեռուններին պահակը սեզ, վոնց բաղն,
Ահա քշեց անտառ մտավ մի ձիավոր ասպազեն,

Մեկն ել անա ստվերի պես դողաց ձորի յեզերքին...
«Թշնամին ե» ու թունդ առավ սեզ պահակի քաջ հոգին:
«Ազգանշան» ու ամպի պես հրացանը վորոտաց,
Լեռներն հեռվում զողանջեցին ու անտառը խուլ թնդաց
Ու հողմասույր բաղնների յերամի պես անագին
Գոռ աղմուկով թռան յեկան զինվորները դասակի:
— Հասե՛ք տղերք, անտառ մտան յերկու ոտար ձիավոր...»
Ու դեպի լուրթ հեռուն պարզեց նա իր բազուկը հզոր:
Զինվորները հոգում թնդաց յերկրի սերը սրբազան
Ու շեշտակի նետերի պես նրանք անտառ սլացան:

3

Մռթ ե անտառն, տկանակիր գիշերվա պես անթափանց,
Հաղար դաժան ցանցեր ունի—մացառներ խիտ ու անանց,
Հովազն անգամ այդ փշերից չի ազատվի անփորձանք,
Վոչ ել արծիվը սիրտ կանի վորոքի դուրս գալ մեն-մենակ,
Բայց սեզ արծիվը սրտից ուժեղ—սիրտն ե կարմիր զինվորի,
Մռթ անտառում, թե ծովի մեջ նա ճամբեն չի խոտորի:
Սովորել ե նա իր գործում լինել անվախ, անդիշում,
Հայրենիքն ե այդ նրանից արիություն պահանջում:
Ու լցված ծով արիությամբ, խիզախությամբ մի անհուն
Զինվորները անտառի մեջ թշնամուն են վորոնում:

Նրանց մեջ ե արագավազ Վարավինը պատանի,
Վոր կռներն են մի-մի գերան ու ժայռի պես կուրծք ունի:
Սրով ձեղքում ե փուշը նա, տատառկն անում գետնահար,
Զուրյ ձեռքով յետ ե վանում թուփ ու տունկերը դալար,
Մաղլցում ե ծառերն ի վեր, կտրում ճահիճը հակա,
Բայց թշնամին կարծես թեթև ծուխ ե դառել ու չկա:
Ու մոլեգնող բոցն ե կիզում Վարավինի քաջ հոգին,
Հայրենիքի հողը պղծել նա չի թողնի վոչվոքին,
Թե յերկինք ել լինի թռած, նա կը գանի թշնամուն,
Կյանքն ել անգամ զոհ կը բերի, ձեռնունայն չի դառնա տուն
Ու մերկ սրով մտնում ե նա անտառի խորքը խավար,
Ուր ծառերն են հաղարամյա վեր խոյացել տիրաբար:
Քայլում ե նա, շուրջը նայում... մեկ ել ծառի յետևից
Քաջ տղին են դիտում — անա մի դույզ աչքեր քինալից...

Ու մերկ սրով, բոց աչքերով արագավաղ պատանին
 Վագրի նման մոնչալով՝ թռչում է դեպ թշնամին,
 Յերկու ձեռքով վար է բերում նա իր սուրը պողպատե,
 Վոր մի զարկով սահմանադանց ոձի գլուխը կտրե,
 Բայց թշնամին ճարպիկ է խիստ, դեպի յեա է նա ցատկում,
 Ու ձեռքի մեջ պատրաստ պահած հրադենը կրակում.
 Խուլ թնդում են ծառերը ծեր, ծմակները փշալից,
 Բայց գնդակը նենգ վոսոխի վրիպում է նշանից:
 — Վրիպեցիր, գարշելի մարդ ու միշտ պիտի վրիպես,
 Որդիս դուռնաս, քեզ կը վորսան մեր աչքերը սրատես:
 Ու բոցով են լցվում նորից դույզ. աչքերը պատանու,
 Ծուխն է ժայթքում հրացանից — գնդակներ են սլափում:
 Վոսոխն անա արյուն թքեց, խուլ հառաչեց ու ընկավ,
 Վարավինի հոգում ասես ջինջ առավոտ լուսացավ:
 Նա զիլ կանչեց ընկերներին, անտառն ուրախ թռնդ առավ,
 Բայց թփերից մի այլ զինված ոտարական դուրս թռավ,
 Ու պատանին կրծքի խորքում, ինչպես խայթոցը ոձի
 Սիրտ կտրատող մի ցավ դգաց ու աչքերը փակվեցին...
 Նա չիմացավ, ինչպես փշոտ ծմակներից մթամած
 Գուռ աղմուկով թռան յեկան ընկերներն իր սիգապանծ:
 Նրանց վշտոտ մոնչյունից անտառն յեղավ ալեկոծ,
 Ու թեվերով տղին գրկած տարան դեպի զորանոց:
 Իսկ մի մասը զինվորներն գետնով տվեց թշնամուն,
 Ու հաղթական փողի յերգով փողջը դարձան զորատուն:

4

Կայծակի պես լուրը թռավ հասավ կարմիր մարշալին,
 Թե՛ «բռնեցինք անտառի մեջ սահմանադանց վոսոխին:
 Նրանց մեկին սպանեցինք, մեկն էլ ընկավ մեզ գերի,
 Բայց կովի մեջ վերք ստացավ Վարավինը քաջարի»:
 Յերբ մարշալը լուրը կարդաց, սիրտը լցվեց ցնծությամբ,
 Բայց շողշողուն դույզ աչքերին վիշտը նստեց ինչպես ամպ...
 — «Բռնել են մեր չար թշնամուն, բայց մեռնում է քաջ տղան»
 Ու նա վշտոտ սրտով նստեց գրեց կայծակ հրաման,
 «Վերաբուժենք հայրենիքի, ոգաչուններ գուք արի,
 Թուեք, հառեք սահմանն հեռու, փրկեք կյանքը զինվորի...»

5

Իսկ քաջ տղան պառկած էր դեռ ուշքը թռած, աչքը փակ,
 Շուրջը նրա ընկերներն խումբն էր կանգնել դիտահակ,
 Բռնում էյին ձեռքը նրա, ճակատն էյին համբուրում,
 Շոյում էյին մազերը շեկ, յեղբոր նման գուրգուրում...
 Ու զսպելով կսկիծը խոր, կանչում էյին քաջ տղին,
 — Հեյ Գրիգոր, քեզ պինդ պահիր, լուր ենք տվել մարշալին,
 Նա քեզ համար դեղ կուղարկի, վերաբուժենք խելացի,
 Մարշալը մեր մեծ սիրտ ունի, դե, մի քիչ էլ դիմացիր:
 Բայց տղան դեռ պառկած էր լուռ, մահվան դեմ էր մարտնչում,
 Ու շուրջը սեզ ընկերներն խումբն էր տխուր հառաչում:

Յերբ վոր թռավ սահման հասավ պատասխանը մարշալի,
 Կյանքում արդեն էլ չէր ապրում Վարավինը քաջարի,
 Փակել էր նա աչքերը լուրթ, սիրտն էր լսել կրծքի տակ
 Ու մահվան սե թեն էր իջել իր ճակատին սպիտակ:

6

Իրիկուն էր, վառվում էյին յերկնի աչքերը հակինթ,
 Ու քչքչան ջրերի մեջ ցուլքն էր խաղում լուռնյակի,
 Հոփ էր խաղում դաշտի վրա, խոտ ու ծաղիկ համբուրում,
 Լորը սիրուն ձագերն առած քուն էր մտել թփերում:
 Ու մրցելով յերկնի պայծառ ճրագների լույսի հետ,
 Շողում էյին դյուղի հազար լապտերները լուսավետ:
 Բանդուրը մեծ հայրենիքի գվարթ գովքն էր նվագում,
 Զահեղները շրջան կաղմած պարում էյին ու յերգում:
 Թնդում էր զիլ յերգը նրանց, ինչպես շաչյունը ծովի,
 Վառվում էյին աչքերը լուրթ ու սրտերը կորովի,
 Ու դյուղը վողջ պարիսպ կապած ծափ էր տալիս միասեղ,
 Ծափ էր տալիս անտառը մուլթ ու տափաստանը շքեղ:
 Մեկ էլ ուժգին թնդացնելով տափաստանը հեռավոր,
 Այլ ձին հեծած թռավ յեկավ լայնաթիկունք մի զինվոր:
 Յեկավ կանգնեց խմբի առաջ, թոթվեց փողին մազերի,
 — Վողջույն, առաց, ճերերին մեր, ջահեղներին մեր արի,
 Սահմանից եմ գալիս, առաց, լուր եմ բերել մի տխուր,
 Բայց գեղեցիկ մեր աշխարհի սերը, վորպես վճիռ ջուր,
 Թող սփռվի սրտերը ձեր, կորով լինի ձեր հոգուն,

Վարավիճիկն անհաղ հարիճ մեռավ յերեկ իրիկուն...
 Նա մեր չքնաղ հայրենիքի սահմաններն եր պաշտպանում,
 Կռվի մեջ ել նա զոհ գնաց իր անառիկ դիրքերում:
 Պատվո գիրն եմ բերել անա ծնողներին նրա ծեր,
 Ու սրբազան այդ գրի հետ, դրամական մեծ նվեր:
 Ու բանբերը յերբ վոր լուեց, խիտ շարքերը ձեռքերով
 Մի ձերուհի առաջ յեկավ ու վողջունեց անխռով:
 — Յեռ եմ, առաց, հայրը նրա, վորի մասին պատմեցիր,
 Յեռ լուսթյամբ լսեցի քեզ, դու ել հիմի ինձ լսիր:
 Են ժամանակ, յերբ դեռ ցարի արնոտ սուրն եր մեզ տիրում,
 Յերբ հաց չկար, ծիծաղ չկար մեր աշխարհի գյուղերում,
 Են ժամանակ յես ունեյի յերկու վորդի անվեհեր,
 Նրանց սիրով եր ծիծաղում իմ ընչապուրկ սիրտը ծեր:
 Ու յերբ հանուն ազատ կյանքի, հանուն հողի ու հացի
 Վոտքի յեկան մեր աշխարհի բանվորներն ու գյուղացին,
 Են ժամանակ յես կանչեցի արծիվներին իմ այդ սեզ,
 Զենք տվեցի ձեռքը նրանց ու ասացի՝ գնացեք...
 Ազատության համար, առի, միք խնայի կյանքը ձեր,
 Ու սրտուրախ ճամբա ընկան կտրիճներն իմ անվեհեր:
 Շատերն ընկան այդ մեծ կռվում, մեռան — անմահ մնացին,
 Ու նրանց սուրբ արյան գնով մենք տեք դառանք մեր հացին:
 Իմ վորդիքն ել ընկան ուրիշ քաջերի հետ անանուն,
 Ու չտեսան ազատության արեգակը շողշողուն:
 Յերբ վոր նրանց սե լուրն առա, սիրտս ցավեց անսահման,
 (Դե հոր սիրտ ե, հո չես կարող արգելք լինել դու նրան),
 Բայց հայրենիքն ինձ սիրտ տվեց, նա դեղ դրեց իմ վերքին,
 Ու որտե՞ս մեջ վիշտը տխուր փոխվեց ուրախ մի յերգի:
 Ազատ կյանքով — աշխատանքով յերջանկացա յես առմիշտ,
 Տունս դարձավ բարիքի ծով, ու մոռացա ցավ ու վիշտ:
 Հիմի յեկել առում ես, վոր տղաս մեռել ե յերեկ,
 Ու դու նրա մահվան առթիվ պատվո գիր ես ինձ բերել:
 Դե ի՞նչ առեմ, զինվոր եր նա ու իր պարտքը կատարեց,
 Նա պաշտպանեց չար թշնամուց հայրենիքն իր շեն ու մեծ.
 Այդ քո բերած պատվո գիրը յես սիրով եմ ընդունում,
 Այդ սուրբ գրով հայրենիքն ե իմ զավակին մեծարում,
 Իսկ քո բերած փողը, վորդիս, խնդրում եմ, վոր յես տանես,
 Ու ձեր գնդի քաջ տղերքին իմ վողջունը հաղորդես.
 Ասա նրանց շատ ե հարուստ Վարավիճիկը ձերուհի,
 100

Յերբ ձեզ նման առյուծասիրտ, կտրիճ տղերք նա ունի,
 Ասա նրանց, վոր մեր անգին ՍՏԱՆԻՆԸ իմաստուն,
 Վարավիճիկն հող ե տվել, ազատություն, հաց ու տուն...
 Ծերը լուեց՝ ներս քաշելով իր դառնահամ թամբաքուն,
 Հեռո քնքռվշ սիրով նայեց կողքին կանգնած պատանուն,
 Գրկեց նրան զույգ թևերով, ամուր սեղմեց իր կրծքին,
 Ապա դարձավ ու հուզմունքով այսպես ասաց ջահելին.
 — Լսիր, առաց, իմ քաջ Իվան, յեղբայրդ ընկավ սահմանում,
 Նրա ջանել կյանքը մարեց մեր թշնամին արնախում.
 Գնա նրա գեները կապիր, դարձիր զինվոր քաջարի,
 Վոր մեր անհղ ուժի առաջ թշնամու աչքը մարի...
 Հոր խոսքի հետ ջահել տղի զույգ այտերը շիկնեցին,
 Ժողովուրդը զիլ ծափ տվեց, դաշտ ու անտառ թնդացին,
 Ու զինավառ բանբերը քաջ գուրգուրանքով մի անհուն,
 Իր գիրկն առավ ու համբուրեց զինվոր դարձող պատանուն.
 Ու աստղերի նման պայծառ ջահելներն այդ շեն գյուղի,
 Մեջտեղ առան, համբուրեցին Վարավիճիկ քաջ տղին.
 — Գնառ բարով, առին նրան, մեզ համար ել տեղ արա,
 Թող մեր անգին Գիրիգորի դիրքը դատարկ չմնա...

*
* *

Կուրծքը ջահել՝ սեղ լեռան պես, հայացքը սուր ու հստակ,
 Զենքը ձեռին, իր դիրքերում կանգնած ե քաջ մի պահակ —
 Պահպանում ե նա մեր յերկրի սահմանները անառիկ,
 Կյանքը մեր շեն, արգասավոր ու հանգիստը յերջանիկ
 Ու որտե՞ս մեջ զոհված յեղբոր անհանգչելի սիրո հետ
 Պահում ե նա հայրենիքի սերը պայծառ, լուսավետ:
 Զմն, հայրենիք հրճվանքը քո թող ծով լինի անսահման,
 Քո սահմաններն են պաշտպանում բյուր Գրիգոր ու Իվան.
 Սուր ե նրանց գեները փայլուն ու դիրքերը՝ անառիկ,
 Անահ սրտով առաջ գնա, իմ շեն, իմ մեծ հայրենիք:

1937 թ.

ՊՈԵՄՆԵՐ

ԱՐՈՒ ԶԵՅԹ
(Քրդական հեքյաթ)

Մայրիկիս հիշատակին

1

Քյուրդստանում մի ժամանակ
Ապրում էր մի մեծ ցեղապետ,
Վոր հոտերովն իր սպիտակ
Մրցում էր բիլ աստղերի հետ:

Նա հողմասույր նժույգների
Յերամակներ ուներ բազում,
Ուներ հազար հարձ ու գերի,
Թիկնապահներ լայնաբազուկ:

Խարձ էր առնում հազար գյուղից,
Հազար բեռ էր մտնում իր առն,
Եւ տեղ չկար մեղր ու յուղին,
Խառ գորգերին, արծաթ, վոսկուն:

Աշխարհ ելին բռնում նրա
Վրանները խառ ու բեհեզ,
Բայց սրտով միշտ տխուր էր նա
Աշնանային գիշերվա պես:

Վոչ հարձերի սիրով քնքուշ,
Վոչ հաղթական կռիվներում
Ցեղապետը ցամփ իր անբուժ
Վոչ մի վայրկյան չէր մոռանում:

Յեղապետը չուներ վորդի,
Չուներ նա մի արու մանուկ,
Վոր տիրեր իր ժողովրդին,
Ու սուրը հոր պահեր կտրուկ:

Մի ժամանակ, յերբ վոր դեռ նա
Ջահել եր քաջ, արյունը տաք,
Փռլթ չեր անում՝ թե կը մնա
Անլծակից ու անղավակ:

Հոգին նրա ջահելության
Լի բերկրանքով եր դեռ շնչում,
Յեւ հպարտ սիրտն իշխանական
Մեծ համբավ ու փառք եր տենչում:

Ու հողմասույր՝ ձիու մեջքին,
Ղուլամներով իր թիկնապահ,
Տարածում եր նա իր չորս դին
Սով — կոտորած, ավեր ու մահ:

Թալանում եր, այրում, ջարդում
Իշխաններին փոքրիկ ու մեծ,
Ժողովրդին մերկ ու անտուն,
Ու վաստակում դանձ ու անեծք:

Ու այդպես ել տաք արյան մեջ
Անցավ նրա կյանքն աղմկոտ,
Ջահելության արեփն ել պերճ
Թեքվեց մի որ դեպ մայրամուտ:

Ու ցեղապետն այդ ծերացավ,
Ծունկը ծալվեց, ձեռքը դողաց,
Թուխ մաղերին ձմեռ խշավ
Ու աշխարհը դատարկ թվաց...

(Ի՞նչ ե կյանքում մարդն անղավակ,
Ծառն անպտուղ, հողն առանց բերք,
Առանց վորդու չկա հրճվանք,
Առանց բերքի ի՞նչ ուրախ յերգ):

Ու մեծատուն ցեղապետի
Բազմահարուստ, շեն հարկի տակ,
Իշխանից մինչ ծառան հետին
Դարձան վշտոտ ու գլխահակ:

«Վոչխարն անգամ իր դառն ունի,
Չին մտրուկովն ե իր հպարտ,
Սիրտն ել անգամ անբան թռչնի
Ճանաչում ե վառ հրճվանքն այդ:

Յես եմ մենակ, վոր բնության
Այդ պարզեզից չունեմ բաժին,
Այն, կը խամբի աստղն իմ անվան,
Գետնով կտա ինձ թշնամին...»

Ու մեծատուն ցեղապետի
Վիշտն անպին ծովի նման
Փռված զորեղ նրա սրտին
Մաշում եր այդ սիրտն առնական:

2

Աշնանային մի ամպոտ որ,
Իր վրանում խառ ու բեհեղ
Նստել եր նա սիրտը տխուր,
Չյունը գլխին՝ Սիփանի պես:

Ձեռքի դալանը վոսկենու
Ծխում եր մեղմ, ողակ-ողակ,
Ու ցեղապետն աչքը տխուր
Հառած ջրին այդ սառնորակ,

Վշտոտ սրտով միտք եր անում
Փուշ աշխարհի, կյանքի վրա,
Ու ճանճն անգամ չեր մոտենում,
Չեր վրդովում միտքը նրա:

Բայց վրանի դուռը թավել
Դողաց հանկարծ ու յետ դնաց,
Ներս մտավ մի ծերուկ դերվիշ
Ու խոնարհեց գլուխը բաց:

—Վողջի՛ն, ասաց, ով ցեղապետ,
Հրաման տուր, վոր առաջ դամ,
Հրաման տուր խոսեմ քեզ հետ,
Դուցե ցավիդ մի ճար ցույց տամ:

Նա տրորեց աչքերը մեղկ,
Ասեա քնից նոր արթնանար,
—Հէ՛յ, վորոտաց, դայլան բերեք,
Խալի փոեք, թող գինջանա:

Հացի նստեց դերվիշը ծեր,
Յերբ հադեցավ քաղցը նրա,
—Իշխան, ասաց, իմ գլխի տեր,
Այս խոսքիս լավ աղանջ արա:

Փառանգ չունես, չունես վորդի,
Վոր ռժախդ միշտ պահի վառ,
Շատ ե դարդը քո ծեր սրտի,
Բայց բերել եմ յես նրան ճար:

Հարձերը քո հարյուրավոր
Արու զավակ չեն ծնի քեզ,
Կուգես լինել թե բախտավոր,
Նորից պիտի դու կյանք մտնես:

Նորից պիտի քո ծեր գլխին
Փեսայության թագ դնես դու,
Վոր ամոքվի քո ցավը հին,
Կյանքդ կրկին դառնա խնդուն:

Քյուրդստանում մեր ընդարձակ
Շատ կան թիրուհ, անմեղ կույսեր,
Վորոնց ջահել կրճքերի տակ
Նոր են դարթնում դարուն ու սեր:

Սրի ուժով քո հաղթական
Դու նրանցից ընտրիր մեկին,
Ու մի կոխիր շեմքը քո տան,
Մինչ ծնունդը քո զավակի:

Դեհ, խորհուրդն իմ դու լավ լսիր
Ու կատարիր, վոր հայր լինես,
Վոր վոսկու մեջ ու առլասի
Ել չը նստես սգվորի պես...

Դեհ, իմ իշխան, դերվիշն ասաց,
Բարով հասնես քո մուրադին,
Յերբ վոր վորդիդ աշխարհ յեկավ,
Խնճույք կանենք մենք միասին:

3

Որեր անցան, անցավ տարի,
Դարուն իջավ Քյուրդստանին,
Ջյունը հալվեց Սիփան սարի
Ու կյանք առան յայլեքը հին:

Ջորք հավաքեց իշխանը ծեր,
Ջորք հավաքեց հաղար-հաղար,
Ու սրտի մեջ բերկրանք ու սեր
Ընկավ չափեց յերկիրն արար:

Վորտեղ հասավ, այնտեղ փռեց
Սով-կոտորած, ավեր ու մահ,
Յեղապետի սարսափն եր մեծ
Այն ահագին ծովի նման:

—Աման փախե՛ք, փախե՛ք, յեկավ,
Յեղապետը յեկավ հրով,
Յեղապետի զորքն է անբավ,
Յեղապետի սարսափը ծով:

Ու թողնելով բերք ու բարի,
Հասնող արտեր ու կալ ու կուտ,
Փախան լցրին Սիրիան սարի
Զորերը խոր, այրերը մութ:

Յեղապետը սարսափ սփռեց,
Մահ ու արյուն սփռեց կրկին,
Հրով, սրով գտավ բերեց
Իր վորոնած անմեղ կույսին:

Ու յոթը զոր, յոթը գիշեր
Հարսնիք արեց իշխանը մեծ,
Նա թագ դրեց գլխին իր ծեր,
Կյանքը նորից խինդով լցվեց:

Հետո առավ թիկնապահներ,
Սարերն ընկավ Քյուրդստանի,
Ու թափառեց զոր ու գիշեր,
Մինչ ծնունդն իր ժառանգի:

Իննը ամիս է իննը որ,
Իննը ժամը յերը լրացավ,
Առողի նման աչքերը հուր
Մի թուխ մանուկ աշխարհ յեկավ:

Յեղապետին մութղա տարան,
Սարից իջավ, մտավ վրան,
Առավ զոնդաղն ու կշռեց,
Վոր կշռեց աչքը մթնեց:

Թեթև է այս զոնդաղն, առաց,
Յեռ նրա մեջ չեմ տեսնում ինձ,
Հարամ լինի այն աղն ու հաց,
Վոր դու կերար իմ լի սուփրից:

Առեք, առաց մորն ու տղին,
Տարեք զցեք այն ժայռից ցած,
Սարի գայլերը կատաղի
Թող հոշոտեն սիրաը նրանց:

Յեղապետի այս խոսքի հետ
Հարճ ու զուլամ լուռ քարացան
(Ո՞վ եր տեսել այսպես աղետ,
Հոր սիրտն այսքան դաժանացած):

Յեղապետն այդ իր հարկի տակ
Մի սեվամորթ զուլամ ունեւր,
Զյուշի նման մաղը ճերմակ,
Աչքերը մութ, ինչպես գիշեր:

Առաջ յեկավ ծերունին այս հեղ,
—Իմ տեր, առաց, հաստատ լինես,
Բո հարկի տակ հիսուն տարի
Յեղեկ եմ յեռ հավատարիմ,—

Պատիվը քո իշխանական
Շատ է բարձր իմ ծեր գլխից,
Արի տեր իմ, դու այս մանկան
Մահվան գործը վստահիր ինձ:

Տխուր փայտաց իշխանը ծեր,
Ապրեո, ասաց, իմ քաջ Արնո,
Իմ ճակտի գիրն հալբաթ այս եր...
Ինձ բեր նրանց շապիկն արնոտ...
* * * * *

Ուղտը յեկավ չոքեց շեմքին,
Ու մահապարտ մորն ու մանկան
Արնոն կապեց ուղտի մեջքին
Ու յերեքով ճամբա ընկան:

Յեղապետը մնաց մենակ
Իր վրանում խաս ու բեհեզ,
Մնաց վշտի ծովում անտակ,
Ջյունը գլխին՝ Սիփանի պես:

Իսկ ծեր Արնոն գնաց-գնաց,
Դնաց գտավ մի լեռնադոյուր,
Ծռենկի բերեց ուղտին հոգնած
Ու դուրս քաշեց դանակն իր սուր,

Կտրեց ուղտի ականջը ձախ,
Հարսի շապիկն արնով ցողեց,
Առած շապիկն այդ արնաթաթախ
Դարձավ գեպի իշխանը մեծ:

4

Ուղտն ել գնաց, գնաց մոլոր,
Իր բոժոժի դրնգոցով
Տարավ լցրեց սարեր ու ձոր
Ջահել հարսի կակիծը ծով:

Բառսուն գիշեր, քառսուն անգամ
Խավար իջավ Սիփան սարին,
Ու նվաղեց ձայնը մանկան,
Յամքեց կաթը մոր ծծերի,

Յամքեց կաթը մոր ծծերի,
Ուղտի սապառը փոքրացավ,
Մինչև մի որ լուսադեմին
Ուղտն իր բոռով մի գյուղ մտավ:

Մտավ չոքեց գյուղի միջին
Ու այդպես ել չոքած մնաց,
Անտեր մանկան բուր մեջքին,
Ու խոր վշտից աչքերը թաց:

Անտեր մանկան տխուր լացից
Գյուղ-գյուղովի հավաքվեցին,
Հարսին տարան ընեսի մոտ,
Ուղտին տվին ախոռ ու խոտ:

— Ո՞վ ես, այ հարս, ըռեսն ասաց,
Մի ամհնա, յերեոդ բաց,
Իսկ հարսն ել թե՛ ըռես ախպեր,
Անտեր եմ յես, չունեմ հեր-մեր:

Այստեղ ըռեսն ուրախ խնդաց,
— Դե վոր հեր-մեր չունիս, ասաց,
Նստի մեր գեղ, մեր հացը կեր,
Մենք ել քեզի հեր ու ախպեր:

Հարսն ըռեսի ձեռքը բռնեց,
Ծիծաղ-լացով ճակտին դրեց,
Ասաց.— բալես անտեր վորք եր
Յեղեք նրան ախպեր ու տեր:

Գյուղ-գյուղական հավաքվեցին,
Կնունք արին, կերան, խմին,
Ու տղին ել այդ որից յես
Անվանեցին թուխ Արուղեթ¹⁾:

¹⁾ Արուղեթ — արաբերեն նշանակում է հորից մերժված:
Ծ, Հ.

Մոր գուրգուրանքով, կորեկի հացով
Արուղեյթը մեր շուտ հառակ առավ,
Պեխերը թուխ-թուխ, յերկու աչքը ծով,
Զինարու նման մի տղա դառավ:

Մի սիրուն տղա քաջ ու անվհեր,
Կուրծքը լեռան պես, բազուկը հզոր,
Ու ամեն անցորդ, ով նրան տեսներ,
Յերնեկ եր տալիս մորը բախտավոր:

Նա խոփը մենակ հողից կը հաներ,
Մենակ շուռ կտար քարը ջաղացի,
Թուխ Արուղեյթի բազուկն անվհեր
Կը սանձեր անգամ քաջ Գյուղղու ձին:

Արուղեյթն ուներ ընկերներ քառասուն,
Ամեն մեկը մի ոջախի լեռ քար,
Ամեն մեկը մի շեն ոճորքի սյուն,
Ու սրտով—հոգով միացած իրար:

Վա՛ր իշխանը մեծ, վոր բեգն ու աղան
Մենակ սիրտ կաներ այդ գյուղը մտնել,
Ծուռ աչքով նայել հարս ու աղջկան,
Կամ հեռու հանդից տավար թալանել:

Արուղեյթը քաջ իր ընկերներով
Միշտ այն տեղ եր, ուր աղքատն եր կանչում:
Ուր ցեղապետի շահն¹⁾ մտրակով,
Ոնդճ ռանչպարից հարկ եր պահանջում:

Արուղեյթը քաջ, շահներ չհամար,—
Ինչպես ամպի դեմ Սիփանը լիներ,
Տղերք նրա չինարու անտառ,
Գյուղղին մոտ գալու ել ցվ ոիրտ կաներ:

Շահները նրա համբավը տարան,
Տարան հացրին մեծ ցեղապետին,
Ասին—ով իշխան, ճար ունես, արա,
Կարող ես,—սանձիր թուխ Արուղեյթին:

Նա մարդ չի թողնում, վոր գյուղին մոտ գա,
Զի թողնում գանձենք կորեկն ու գարին,
Մեր ցեղապետի գլուխը վկա,
Բայրա¹⁾ չենք առել այս յերեք տարի...

Յերբ ցեղապետը շահներին լսեց,
—Ինչ անեմ, ասաց այդ լիրբ լակոտին,
Թե կռիվ գնամ իմ բանակով մեծ,
Մեկ ե թե յերկնից յես իջնեմ գետին:

Գյուղեր քանդելուց ինձ ոգուտ չկա,
Արուղեյթն ե մեկ իմ չար թշնամին,
Դե, շեխ ու գիտուն կանչեցեք թող գան,
Տեսներ ինչ կասեն նրանք այս բանին:

Ցեղապետն ուներ հրեղեն մի ձի,
Յերկնում թեվավոր, գետին վոտնավոր,
Նա վոչ մի ուժով չեր գալի սանձի,
Զիր ու չամիչ եր կերածն ամեն ուր:

Գիտուններն յեկան ու խորհուրդ տվին,
—Մեր իշխան, ասին, կանչեք այդ տղին,
Ջահել տղա յե, արյունը պղտոր,
Շենց վոր նա տեսնի քո ձին թեւավոր,

Զի դիմանա այդ հրեղեն տեսքին,
Սանձել կուզենա, կուզենա նստել,
Զին գետնով կտա իր խամ հեծվորին,
Դու ել կաղատվես, քո ժողովուրդն ել:

¹⁾ Բայրա—բնասուրբ

¹⁾ Շահնա—հարկահավաք:

Աբուղեյթն իր քաջ տղերքով քառասուն,
Զիրիդ խաղալուց նոր եր դարձել տուն,
Յերբ վոր բամբերը մեծ ցեղապետի
Նրա մոտ յեկավ յերկյուղը որտին:

Ու հաստատ լինի քո բաղուկն, ասաց,
Աչքդ հտեանի տրամուկուն ու լաց.
Բայրամ¹⁾ ե անում ցեղապետը մեր,
Ուզում ե լինես իր հացին ընկեր...

Ինչքան քաջ եր նա, այնքան ել խոնարհ,
Գլխից վերե եր մոր խոսքն իր համար.
Ու, վորպես խոնարհ, հնազանդ վորդի,
Նա իր ծեր մոր հետ նստեց խորհրդի:

Մայրն ասաց.—վորդիս, յես յերազիր մեջ
Այս գիշեր տեսա ցեղապետին մեծ,
Տեսա նստել եր նա վրանի տակ,
Յերեսը տխուր, մաղերը ճերմակ:

Դու ել, Աբուղեյթ, հեծած ճերմակ ձին,
Ման եյիր դալիս սարերի դռին.
Զին մուրազ ե միշտ, ճերմակը—բարի.
Գնա, յերազն իմ բարին կատարվի:

Ցեղապետը թե ասաց ձի նստիր,
Զին թևավոր ե, այս լավ իմացիր,
Յերբ յերկինք յելնի, փորի տակ անցիր,
Թե իջավ գետին, թամբին բարձրացիր:

Նա լսեց իր մոր խորհուրդն իմաստուն,
Ու ճամբա ընկավ մուրազը որտում.
(Բառասուն տղերքն ել գյուղում մնացին,
Վոր պաշտպան լինեն աղքատի հացին):

¹⁾ Բայրամ—բարիկենդան

Խնձույք եր արդեն, յերբ վոր տեղ հասան,
Սաղ եյին դարկում յոթը կույր գուսան.
Առաջ վաղեցին զուլամներն¹⁾ աղի
Ու վերե տարան ջահել ղոնաղին:

Արծաթ սինիով փլավ բերեցին,
Ծով դառան անուշ շարբաթն ու գինին,
Իրարով անցան ղոնաղներն արբած,
Ու քեֆը տեկց մինչև լուսաբաց:

Յերբ Սիփան սարից արևը ծագեց,
Վախճանին հասավ նրանց քեֆը մեծ,
Հացը ժողվեցին զուլամներն հլու
Ու տերերն յելան ջիրիդ խաղալու:

Ամեն բեզդադա իր նժույգն հեծավ,
Իր ջիրիդն առավ ու դաշտում կեցավ.
Ցեղապետն ել մեծ տվեց հրաման,
—Դուրս քաշեք, ասաց, իմ ձին անաման:

Թող նրան հեծնի ղոնաղն իմ ջահել:
Այսպես կտրիճին իմ ձին ե վայել:
Ու յերբ դուրս բերին նժույգն հրեղեն,
Հուզմունքից զոդաց Այբուղեյթ տղեն:

Համբուրեց ձիու զույգ աչքերը թաց,
Զին այդ համբույրից ուրախ խրխնջաց,
Թափ տվեց բաշի խիտ մաղերը ու,
Յերբ մեջքին թռավ հեծվորը թեթև:

Կերած-խմած ձի, պոկ յեկավ տեղից
Ու գլխ խրխինջով յերկինք բարձրացավ.
—Այս ե, ասացին, տարավ քաջ տղին,
Նրա արևը պաղ լուսին դարձավ:

¹⁾ Դուլամ—ծառա:

Քայց Աբուղեյթն ել վոր Աբուղեյթն եր,
Վոր իր թշնամուն ամոթով չաներ,
Հենց վոր ձին հասավ ամպերին ճերմակ,
Նա անցավ իսկույն ձիու փորի տակ:

Իսկ յերբ խրխինջով ձին իջավ գետին,
Շուռ յեկավ նորից ու նստեց թամբին...
Տեղում քարացան իշխանները մեծ,
Նրանց գլխներին ասես ջուր մազվեց:

Իսկ նա ձայն տվեց ցեղապետին ծեր,
— Յեղապետ, ասաց, ձիուդ ուժն անյա եր...
Կարծում եյիր թե Աբուղեյթը քաջ
Մունկի՞ պիտի գա քո ձիու առաջ...
Քո առատ հացով աչքս կապեցիր,
(Թող դատարկ մնա սուփրեն այդ հացի՛)
Բայց դու մոռացար, վոր տղամարդուն
Վոչ թե շարբաթով, սրով են հաղթում...
Այսպես վորոտաց Աբուղեյթ տղեն,
Հետո մտրակեց նժույգն հրեղեն,
— Հեյ, նամարդ, կանչեց, յես քո ձին տալա,
Վորտեղ քոնն ասես, ինձ մի մոռանա...
— Հայ հայ, ձին տարածվ, տարածվ բռնեցեք,
Իրարով անցան բեզզադա ու բեդ,
Բայց հեծվորին քաջ ել ուր բռնեյին,
Նա թռավ, ինչպես դաշտերի քամին:
Ու ցեղապետը ամոթից շիկնած,
Այս ապտակը յես կուլ չեմ տա, ասաց,
Իշխանը լինեմ յես Քյուրդստանի,
Ու մի գյադա ինձ ամոթով անի՛...
Ժողովեցեք, ասաց, բանակն իմ հզոր,
Ուզում եմ այնտեղ լինել հենց այսօր,
Ուզում եմ կռվել Աբուղեյթի դեմ,
Վոր ամոթը այս արյունով սրբեմ:

* * * * *
* * * * *
* * * * *
* * * * *

7

— Հեյ, Աբուղեյթ, դուր ես, յեկած,
Յեղապետը յեկավ հրով,
Յեղապետի գորքն ե անբավ,
Յեղապետի սարսափը ծով:

Յեղապետը մեղ կսպանի,
Հարս ու աղջիկ կառնի տանի,
Տները մեր հրի կտա,
Յեղապետը մեղ չի գթա:

Ու գյուղացիք տկլոր, անտուն,
Ա՜հ ու սարսափն իրենց սրտում,
Յեղան կապին քոչ ու բարխան,
Դեպ Սիփանա սարը փախան:

Աբուղեյթն եր, հեծավ իր ձին,
Գնաց կանգնեց ճամբի միջին.
— Յես չեմ թողնի, ասաց, գնաք,
Պատիվը մեր գետնովը տաք:

Մինչև այսօր ինչքան փախաք,
Ինչքան սուր ու սոսկում տեսաք,
Յեղապետն ել այնքան կատղավ,
Յերես թռավ ու սիրտ առավ:

Մեր ծոցի մեջ ոճ տաքուցինք,
Նա մեր հացին յեղավ շրեք,
Դե տրորենք գլուխն ոճի,
Ու տեր դառնանք մենք մեր հացին:

Դե յեա բերեք մալ ու խիզան,
Մանգաղի տեղ առեք նիզակ,
Պաշտպան յեղեք ձեր տան-տեղին,
Յետ դարձրեք չար վոսոխին:

— Ժիշտ ե խոսում սղան, ասին,
Չեյինք խորհել մենք այդ մասին,
Գեղը կանգնի՝ կոտրի գերան,
Դե միանանք կոտրենք նրան:

.

Ու ռանչպարներ դարձան իրենց տուն,
Մանգաղի տեղակ առան սուր ու թուր,
Ու այն անագին Յեփրատ գետի պես
Յեկան քշեցին կովի ասպարեզ:

Տվին ջարդեցին նիզակ, սուր ու թուր,
Գետերը դարձան կարմիր արնաջուր,
Խավարը ծածկեց դեմքն արեգական,
Հազար ռանչպար ու դուլամ ընկան:

Աբուղեյթն եր քաջ, նիզակը ձեռքին,
Հրաման տվեց քառսուն տղերքին,
— Դե թռեք, ասաց, իմ քառսուն թևեր,
Դերի բռնեցեք չար վոսոխին մեր:

Տղերքը կարիճ քամու պես թռան,
Ձիերը քշին կովի մեջ մտան,
Չարկին ջարդեցին սև զուլամներին
Ու ցեղապետին բռնեցին գերի:

.

Ահագին վիշտն ու արցունքն աչքերին,
Ֆեղապետը մեծ դարձել ե գերի,
Նստել քաշում ե թագբեհը դեղին,
Հիշում ե մեռած կնոջն ու տղին:

Հիշում ե ճերմակ սուրուն կաթնաբեր,
Ու ձիերը, վոր մնացին անտեր,
Մնտեր մնացին հարճերը գյուղալ,
Թե մուլքերը ծով, թե արտեր ու կալ:

Նա միտք ե անում արցունքն աչքերին,
Անիծելով բախտն իր նամարդ սրի,
Իռկ այնտեղ դրոսում Աբուղեյթը քաջ
Չոքել ե ահա իր ծեր մոր առաջ:

— Խորհուրդ տուր, մայրիկ, ի՞նչ անեմ հիմա,
Կյանք ես պարգևում դու նրան, թե՞ մահ...
Մե ձիու պոչից կապեմ յես նրան,
Թե թողնեմ նորից իշխե մեզ վրա...:

Մայրն համբուրում ե ճակատը վորդու,
— Վարդիս, ասում ե, գիտեմ քաջ ես դու,
Բայց ցեղապետը այն ուրը մեռավ,
Յերբ գոր ու զորքով քեզ վրա յեկավ:

Մեռածին, վորդի, ել չին սպանում,
Նա գերին ե քո, նստած զնդանում,
Չնդանից հանիք, վերի ոդեն տար,
Մուփրա բաց արա դու նրա համար:

Կանչիր քո կարիճ տղերքին քառսուն,
Ու լավ պատիվ տուր քո գերած մարդուն,
Ինձ ել իզին տուր նստեմ ձեր քեֆին,
Վոր դու իմանաս ով ե քո գերին...:

Աբուզեյթն ել վճի խոնարհ վորդին եր,
Վոր խորհուրդը մօր նա չկատարեր,
Նա հացի նստեց ցեղապետի հետ,
Շարրաթը հոսեց հանց Յեփրատա գետ:

Մայրն ել եյրամով յերեսը ծածկած,
Յեկավ ու կանգնեց իր գերու զիմաց,
Գրկի մեջ առավ նա իր քաջ վորդուն
Ու այսպես խոսեց՝ զայրույթը սրտում:

— Յեղապետ, առաց տղան այս կտրիճ,
Քո արյունից ե ու իմ արգանդից,
Ղոնդաղը նրա չընդունեցիր դու,
Սարերը գցիր ինձ ու իմ վորդուն:

Բայց հողը նրան հայրություն արեց,
Իսկ ժողովուրդն ել սիրտ ու ուժ տվեց,
Նա ուժեղացավ ժողովրդի պես,
Դե հիմի գրկիր, թեթեվ ե, մի տես...

Առաց ու զարկեց քաջ աղի մեջքին
Ու տղան չոքեց իր գերու բերն,
Վազրի պես ճանկեց կոկորդը նրա,
— Թողեք վոր—գոռաց, յես խեղդեմ սրան:

Բայց մայրը բռնեց բազուկը աղի,
— Դե զսպիր, առաց, սիրտդ կատաղի,
Թեև քո գերին, վորպես մի չար ցին
Շրիք ե յեղեկ մեր աղ ու հացին,

Կիսել ե մեզ հետ կաթը վոչխարի,
Խլել ե կալեց կորեկն ու գարին,
Թեև նրանից մենք շատ ենք լացել,
Բայց նրան հիմա պետք է սպանել:

Նա ունի բազում վոչխար, կով ու ձի,
Տնքում են նրա հորերը հացի,
Յերկինք են հասնում լեռներն արծաթի,
Աշխարհ են բռնում գետերը կաթի:

Այլ ամենը մեր վաստակն ե հալալ,
Մեր ճակատների քրտինքը զուլալ,
Վոր ցեղապետը իր տակը դրել
Ու արնածարավ վիշապ ե դառել:

Թող բերե հիմա գանձերն այդ բոլոր,
Իր վոչխարների հոտը բյուրավոր
Քրտինքով ապրող մեր խեղճ գյուղին տա,
Ինքն ել անսորձանք յիլնի հեռանա:

Ծեր ցեղապետը սրբեց աչքը թաց,
— Խեղացի խոսքին բան չունեմ, առաց,
Կտրիճ եր վորդիս ու նա ինձ հաղթեց,
Ով հաղթող ե միշտ, նրա խոսքն ե մեծ:

Թող այնպես լինի, ինչպես կամեցաք,
Իմ գանձերը ձեզ, պարգևեք ինձ կյանք,
Վայելեցեք իմ սարերն արծաթի,
Այդպես եր դուցե գիրն իմ ճակատի...

Մեծ ցեղապետի այս խոսքի վրա
Քաջ Աբուզեյթը մոտեցավ նրան,
— Յեղապետ, առաց, իմ հայրն ես ու ձեր,
Բայց բաժանված են ճամբաները մեր:

Իմ ճամբան գեպի գազաթն ե տանում,
Քոնը կորչում ե խավար անդունդում,
Մենք այս աշխարհի կապույտ յերկնի տակ
Չենք կարող ապրել միաժամանակ:

Նա պիտի ապրի, ով քաջ է, հաղթող,
(Իսկ մայրիկն իմ ծեր չբարկանա թող)
Դու յես քեզ համար սրել այս սուրը,
Դե հիմա խմիր մահվան մրուրը...

Ասաց ու խփեց մեծ ցեղապետին,
Մարմինը նրա տապալեց գետին,
— Թող մեռնի, ասաց, վոր նրա մահով
Կյանքը մեզ համար լինի ապահով:

Ու ամեն աղքատ, ամեն մի յեթիմ
Արև մալթելով քաջ Աբուղեյթին,
Մեծ ցեղապետի գանձերից անբավ
Բաժին ստացավ իր տունը տարավ:

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՅԳԱԲԱՅ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1

«— Սեպուհը քաջ գյուղերն այրեց,
Այրեց գյուղերը թուրքի,
Թող շատ ապրի առյուծն այդ մեծ
Պարծանքը մեր քաջ զորքի»:

Զնգում էին թասերը լի,
Յերգն էր հնչում խելագար,
«— Յերգիր Շարուն, հլի-հլի,
Գինու յերգը մեզ համար:

Թող հավիտյան լիքը մնան
Մառանները հայ ազգի,
Ու շողջողուն գինին նրա
Ուժ հաղորդի մեր բազկին»:

Խմում էին պառլամենտի
Անդամները այդ գիշերը,
— Թող սուրը մեր աշխարհ քանդի,
Դեհ բաց արեք նոր շշեր...

Ու պարում էր նրանց առջև
«Հայոց դուստրը» գեղեցիկ,
Ունքերն ինչպես ծիծառի թեփ,
Յեվ հասակը սլացիկ:

Յուրում եր նա մեզմ ու թեթև,
Ու նաղանքով շոթորում,
Ինչպես կարազն ե լուսաթև
Լողում կապույտ ջրերում:

Իջում էյին մերկ ուսերին
Դրամները խըշխըշան,
Վորպես իր «քաջ» ասպետները
Միտ խորհուրդն ու նշան:

Ապականներն այդ արբած նրա
Գեղեցկությամբ բորբոքուն,
Մերթ ժպտերես ու մերթ մռայլ
Թառերն եյին դատարկում:

Քեֆ եր ներսում ու խրախճանք,
Գինին սրտեր եր վառում,
Իսկ փողոցում մեն միայնակ,
Մի տղա յեր թափառում:

Ու ամեն մի փակված դռան
Նա մի թուղթ եր փակցնում
Ու ամեն մի թղթի հետ նա
Այնտեղ իր սիրտն եր թողնում:

Այդ մի կոչ եր բոլշևիկյան,
Մի բողոք եր խիտ հուժկու,
Վոր ցրում եր ջահել տղան
Խոր քուն մտած քաղաքում:

Յրում եր նա լուռ ցնծությամբ,
Մի անբարբառ հրճվանքով
Ու սրտի մեջ ազատության
Յերզն եր հնչում հոգեթով:

Ու կանգնեց նա յերգը հոգում
Զորանոցի պատի տակ,
Այնտեղ փայտե իր տնակում
Գուն եր մտել մի պահակ:

Հին շինել եր նրա հագին,
Ամուսնները կարկատած,
Ջահել տղի փխրուն հոգին
Խոր կեղծից մղկտաց:

Այդ վայրկյանին իր կրծքի տակ
Միտը թակեց անհանգիստ,
Բայց ինքնիշխան ու համարձակ
Նա մոտեցավ պահակին:

Կոչը դրեց նրա ամուսն,
Շուրջը նայեց ու գնաց,
(Մինչ ժպտում եր յերազներում
Ջահել զինվորը քնած...)

2

Յերեկ եր, վոր Յերևանի
Մի անարև տնակում
Բոլշևիկները պատանի
Այս կոչն եյին մշակում:

Բոլշևիկներն այդ պատանի,
Մարտիկները վառվուռն
Կազմում եյին մի ընտանիք,
Մի ամբակուռ միություն:

Իսկ թխորակ այս պատանին
Ղեկավարն եր միության,—
Վողջ միության սիրտն ու հոգին,
Համարձակ ու անվարան:

Հաղիվ եր նա դեռ բոլորել
Քոաներորդ իր տարին,
Դեռ աղվամազն եր վոսկեթել
Շողում նրա շուրթերին:

Տարիքով դեռ մի պատանի,
Սրտով արդեն տղամարդ,
Իր կոշումը դեկավարի
Նա կրում եր անաղարտ:

Ձեր կովում նա փառքի համար,
Դափնինների չեր ձգտում,
Ազատության սերն եր անմար
Նրա հոգին բորբոքում:

Զրկանքում եր նա աչք բացել,
Վիշտն եր յեղել նրան քույր,
Մանուկ օրից եր ճաշակել
Տառապանքը դառնաթույն:

Հայրը նրա խեղճ գյուղացի,
Հողի չարքաշ մի մշակ,
Չարչարվում եր հանուն հացի,
Ու միշտ մնում պարտքի տակ:

Չարչարվում եր նա որնիրուն,
Քրտինք թափում անդադար,
Յեվ իր ամբողջ հոգով ասում
Կյանքի որենքն անարդար:

Ատում եր նա իր աշխարհի
Կարգերը չար ու դաժան,—
Ատում բոլոր իշխողներին
Ու տերերին անարժան:

Վերդու մեջ ել վառում եր նա
Կովի ձգտումը պայծառ,
Ազատության կարոտն անմահ,
Խաղաղ կյանքի սերը վառ:

— Անտակ ծով ե կյանքը վոր կա,
Մարդիկ մեջը լողորդներ:
Այն լողորդը ափ դուրս կգա,
Ով անվախ ե, անվեհեր:

Նա կը հաղթի՝ ում ձեռքը վոր
Չարկի պահին չի դողում,
Նա կհաղթի, ով ամենքին
Ուրախ կյանք ե կամենում:

Այսպես ահա խրատում եր
Նա իր վորդուն որամիտ
Ու նրանից կփում կովի
Քաջ զինվորին առնասիրտ:

Ու մշակ հոր ուշիմ վորդին
Ազատությունը սիրեց,
Սիրեց չարքաշ ժողովրդի
Ազատատենչ սիրտը մեծ:

Ժողովրդի յերջանկության,
Կյանքի համար բախտավոր,
Նա լենինի դրոշի տակ
Դարձավ խիզախ մի զինվոր:

Մեծ լենինի զինվորն եր այդ,
Վոր այս գիշեր քաղաքում
Քուլշեիկյան խիզախությամբ
Կովի կոշն եր տարածում:

Նա թափառեց մինչ լուսաբաց,
Մտավ ամեն մի անկյուն,
Ու իր գործի սիրով արբած,
Լուսաբացին դարձավ տուն:

3

Քաղաքում արդեն կյանքն էր արթնանում,
Ներհոգ փողոցում մի ձի վրնջաց,
Այդ մի ապա յեր, վոր տունն էր գնում,
Գիշերվա շվայտ խնձուկքում արբած:

Բաժակներ էր նա փշրել սեղանին,
Կենացն էր խմել «Հայոց քաջերի»
Յեվ «Հայոց ազգի դուստրը» գեղանի
Հալվել էր նրա հայացքին գերի:

«Դուք խնձուկքներում առյուծ եք անհաղթ»
Ձեզ նսան քաջեր թե շատ լինեյին,
Անշուշտ կը հաղթեր մեր ազգը անբախտ,
Ու տեր կդառնար իր անցած փառքին...»

Այսպես էր ասել նրան գեղուհին
Ու հարբած ապան աչքով էր արել
«Կվերականգնեմ ազգիս փառքը հին...»
Յեթե ինձ թիրես, իմ կյանքի արե...»

Ու տունն էր գնում «առյուծն այդ հերոս»
Դեռ մտածելով խնձուկքի մասին,
Իսկ նրա ճամբին պայծառ տողերով
Շողում էր հուժկու կոչը Ղուկասի:

Պահանջը կոչի պարզ էր ու մեկին.
Այդ բոլորից կյան բողոք էր հատու,
Վոր պահանջում էր հեռ կանչել զորքին.
Ու դադարեցնել կոիվը Վեդու:

Ու շրջում էին թղթերն սպիտակ,
Մի ընթերցողից մյուսին անցնում,
Վողջ ժողովուրդը կարոտով անհագ
Կարդում էր կոչը և ալեկոծվում:

Հուզմունքն աճում էր, ուճանում անվերջ,
Վորպես ովկյանի ջուրը մակընթաց
Ու խռվահուլից այդ ովկյանի մեջ
Հսկարտ ու արի Ղուկասն էր կանգնած:

Նա հարազատի սիրով անսքող
Իր ժողովրդի հրճվանքն էր ապրում,
Ապրում էր նրա զայրույթը աճող,
Ու խուլ ապագայով սիրտն էր բարախում:

Իսկ նրա յերեք ընկերները քաջ
Արտաշը, Վաղոն և Աննան սիրուն,
Վորպես մեկ-մեկու ոտաբ, անճանաչ
Թափառում էին այդ հուզված ծովում:

Ու նրանց խոսքը շշուկով ասված,
Արանց հայացքը ջերմ ու մտերիմ
Յասամբ էր լցնում որտեղը մարդկանց,
Ամբոխին մղում դեպի թշնամին:

Ինչպես ահավոր ծովն է փոթորկում,
Հուզված է այդպես կյանքը փողոցի,
Ու կայծակնացած զայրույթը հողում,
Մի մաուղերիստ քշում է իր ձին:

Նրա յետևից փոսոխները պես,
Բեխերը սրած, փափախները ծուռ,
Գալիս են ահա մի խումբը հեծյալներ,
Շողոգացնելով դաշյուննուերը սր:

Դալիս են նրանք աչքերն արնամած,
Ու ժողովուրդը տեղում քարացած,
Վորոտում ե զիլ, գոռում մուկերն,
Ինչպես անտառը փոթորկի ժամին:

Ու մեկ ել հանկարծ ամպրոպի նման,
Զենքերն ողի մեջ ճայթում են ուժգին,
(Սմբապետն ունի ահեղ հրաման,
Գետին տապալել իր դեմ յելնողին):

Ու նա քշում ե իր ձին կատաղի,
Ճեղքելով մարդկանց անտառը շարժուն,
Մատուցներն են համազարկ տալիս,
Շողալով ծխի կապույտ մշուշում:

Բայց ժողովրդի զայրացած հոգում
Մեռել ե կարծես սարսափը մահվան,
Արհամարհելով թե մահ, թե ռոսկում,
Մարդիկ կանգնում են զենքին հանդիման:

Ու բարձրանալով մի քարի վրա,
Վաղոն կրծքով մեկ գոռում ե ուժգին,
— Պարոն խմբապետ, մենք չենք հեռանա,
Մի՛ք ահաբեկի անդեն ամբոխին:

— Տո՛ թոկից փախած աներես լակոտ,
Դե մի ցած արի, յես քեզ ցույց կտամ.
Ու Վաղարշակի դեմքին կրակոտ,
Մարալն ե շաչում սև ոձի նման:

Արտաշն ու Աննան առաջ են անցնում,
— Մենք հլ ենք գալիս մեր ընկերոջ հետ,
Ասացե՛ք տեսներեք, ինչ եք պահանջում,
Ամբոխից հեռու, պարոն խմբապետ:

(Քայլն անխոհեմ եր, բայց և ի՜նչ արած,
Լուել չեր կարող նրանց քաջ հոգին,
Անդեն ամբոխին փրկելու համար
Յերեք բոլշևիկն իրենց մատնեցին):

Սմբապետն հանկարծ տեղում քարացավ:
Աչքերը կարմիր արնով լցվեցին,
Փափախը գլխից կարծես բարձրացավ,
Զայրացավ անգամ խմբապետի ձին:

— Բոլշևիկ եք հա՛, դավաճան շներ,
Զեր վերջը յեկավ, ել զուր եք հաջում,
Տեսե՛ք վո՞նց կանեմ դատառտանը ձեր,
Վո՞նց վոր տեսնում եմ՝ ինձ չեք ճանաչում:

Հետո մարակներ շաչեցին ողում,
Պատանիներին բռնեցին տարան,
Իսկ շուրջը նրանց փողոցն եր թնդում,
Վորպես ալեկոծ ծոֆն ահեղաձայն:

Բայց «հաղթանակը» չար խմբապետի
Անկատար եր դեռ, դեռ չեր ավարտված՝
Նա դեռ չեր գտել այդ խմբի պետին,
Վորի դեմ ինքը վոխով եր լցված:

«Գտնել ու բերել փախած Ղուկասին,
Այս ջահելների լիրը դեկավարին,
Մեր ձեռքն ընկնելով նա վողջը կասի,
Յերբ ընտելանա բանտի խավարին...»

Այս եր պահանջը կառավարության,
Ու այդ պահանջը պետք ե կատարվեր,
Սմբապետները իրարով անցան,
Վորպես շղթայից բաց թողած շներ:

Նրանք վողջ քաղաքն արին վաճառակ,
Ամեն ինչ իրար գլխով տվեցին,
Բայց բոլշևիկի վորդուն համարձակ
Վոչ մի անկյունում չհանդիպեցին:

Արծիվը լեռներն եր թռել արդեն,
Ու դարան մտած լեռների ծոցում,
Իրեն վորոնող դաշնակներն դեմ
Նա նոր հարձակման ուղի յեր գծում:

Իսկ նրա քաջ ընկերներին
Առանց դատ ու դատաստան,
Վորոշեցին բանա ուղարկել,
«Վոր բանտի մեջ խելքի դան...»

Ու մի գինվոր սուսերամերկ
Լուռ քայլում ե փողոցով,
Խռովել ե նրա ճամբին
Ժողովուրդը, ինչպես ծով:

Յեվ հպարտ են բոլշևիկի
Վորդիները քաջ ու սեպ,
Կոչն հառավ իր նպատակին,
Փույթ չե, բանտ ել կնստենք:

Ու քայլում են իրար կողքի,—
Սուր, Վադոն ու Անան,
Իսկ Արտաշը գինվորի հետ
Զրուցում ե կիսաձայն:

— Ահա թե ինչ, գինվոր ընկեր,
Մի, մոռանա մեզ բանտում,
Կարգացել ես թե կոչը մեր,
Ամուր պահիր քո սրտում:

Դու ել անշուշտ քո տունն ունես,
Քո արտն ունես ու այգին,
Կամ ել մի խեղճ բանվոր մարդ ես,
Գերի դառած կարիքին:

Առա, ո՞վ ե հիմա վարում
Քո արտերը, քո այգին,
Ո՞վ ե արդյոք կերակրում
Քո կնոջն ու զավակին...

Առա տեսնեմ, ինչի՞դ ե պետք
Այս կռիվը արնահեղ,
Ինչ՞ու պիտի դու տառապես
Ու թույն ուտես հացի տեղ:

Վոր ջարդում ես անգեն թուրքին,
Վոր այրում ես, սպանում,
Ազատում են կոռ ու տուրքից,
Թե տանջանքդ ե շատանում...

Ու գինվորը յերիտասարդ,
Լուռ լսում ե խոսակցին,
— Ճիշտ ես ասում, վոր խլում են
Վերջին թիքեն մեր հացի:

Վնաց վոր ջուրն ե թոնրի վրա,
Գյուղ կրակից փոթորկում,
Ու չի յեղնում բուղը նրա,
Չունքի խուփը չի թողնում,—

Քյասիբ մարդու սիրտն ել հիմի
Փոթորկվում ե ջրի պես,
Բայց օրենքը խփի նման,
Հուպ ե տալիս, ինչ անես:

Յերեկ գիշեր, լուսադեմին,
Յես կարդացի կոչը ձեր,
Շատ դրուստ եր ու շատ սամթին,
Վոնց վոր սրտես ջուր խմեր:

Չարչարում են մեղ ամեն որ,
Դուք շատ դրուստն եք ասում,
Իրա կամքով վոչ մի զինվոր
Կոխվ գնալ չի ուզում:

Բայց որենքը, վոնց ասացի,
Մեղ ճնշում ե խփի պես,
Թե չգնաս դու քո կամքով,
Գյուլլախորով կանեն քեզ:

— Այդ որենքը, զինվոր ընկեր,
Շատ յերկար չի դիմանա,
Նրա դեմ ե կռիվը մեր,
«Բուզը» ճամբա կրանա:

Ու մինչ գուռը մոայլ բանտի,
Զրուցում են ու հրճվում,
Ու զինվորը իր խոսակցից
Յովելով ե բաժանվում:

Յեղոր նման ռեզմում ե նա
Մեկնած ձեռքը Արտաշի,
— Գնա՞ս բարով, ախպեր տղա,
Բանտի մեջ ել ինձ հիշի:

Դուք ել տղերք, գնա՞ք բարով,
Ավոյին միք մոռանա,
Նա ձեզ հետ ե ամբողջ սրտով,
Ու ձեզ հետ ել կմնա:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

1

Արարատի ծեր ճակատին, վշտի նման խորա-խոր,
Կուտակվեցին ամպերը սև, ու ծանրորեն նստեցին,
Անմեկնելի մի տխրությամբ հառաչեցին սար ու ձոր,
Յերբ չքացավ հորիզոնում արեգակը հրածին:

Ոձը թողեց ժայռերի մեջ փայլուն շապկին ու անցավ,
Կռպերի տակ դեռ պահելով ջերմությունը արևի,
Լեռնապարի սովերն անեղ, մութ վիհերում չքացավ,
Յերբ լուրթյամբ մի ահավոր գիշերն իջավ սարերին:

Իջավ նա լուռ խոժոռադեմ, ինչպես անեղ տիրակալ,
Սիրտը վորի խրախճանքից, դեռ չի առել գոհացում,
Հարձերի պես խոնարհվեցին յեղեգները վոսկեփայլ,
Յերբ տարածվեց նրանց վրա իրիկնային հովը ցուրտ:

Գետը փախավ իր ափերից մի անհադիստ շշուկով,
Կոհակներին ծոցում պահած անմեկնելի մի յերկյուղ,
Յեվ գիշերը այդ մթամած, աշնանային մեղմ սյուլքով,
Հովիտներով առաջացավ ու համբաքայլ մտավ գյուղ:

Խրճիթներում գետնատարած, վախճանվողի աչքի պես,
Բոցկլտացին թույլ շողերով ճրագները բեկբեկուն
Գիշերվա հետ այդ ահավոր, ինչ վոր սարսափ մտավ ներս,
Ու կալերում արտասովեցին առունները հեկեկուն:

Մայրը ահով կրծքին սեղմեց իր մանկանը նորածին,
Ու կուչ յեկավ թոնրի վրա, սպասումով սիրտը լի,
Խուլ տանջանքով նա կուլ տվեց պատանները չոր հացի,
Ու յերջանիկ յերազ դառավ առավոտը անձկալի:

Այդ մօր նման կրծքին սեղմած խրճիթները հողաշեն,
Գյուղը լռեց պաղ գիշերվա անհյուսիսակալ թևի տակ,
Հետո հանկարծ յերկինք թռավ այբվող դեղի բոցը շեկ,
Ու սլացավ հեռուններից խելակորույս մի գնդակ:

Խուլ հեկեկաց գյուղը հանկարծ, ինչպես արդար նահատակ,
Վորին դահճի ձեռքն արյունոտ կառափնարան է տանում,
Յեվ մտաւլուտ կոտորածի յերկյուղն իրենց կրծքի տակ,
Հեկեկացին սարսափահար հազար մայրեր ու մանուկ:

Փողոցներում շողշողացին կայծակի պես հրաթի
Սրերը կեռ ու արնածոր, դաշնակցական սղերքի,
Ընդարձակվող բոցը լիզեց խրճիթների ծածկը սե,
Ապա հրշեկ սյուների պես նա ծառացավ դեպ յերկինք:

Աչքերի մեջ վրեժ ու թույն, ձեռքին սուրը արնածոր,
Խճապետը աշտանակեց իր նժույգը կատաղի,
Հին խրճիթի դուռը փշրեց վռաքի մի խուլ հարվածով,
Ու մանուկներն արնաշաղախ չբարձրացան հատակից:

Սրենց պետի որինակով յելուզակներն արնախում,
Դուռն քաշեցին խրճիթներից մանուկներին գյուրարեկ,
Կարկաչեցին նրանց արյան վտակները վարդագույն,
Ու խելագար քամին հնչեց մի տխրածայն յեղերերդ:

Մինչ կես գիշեր գյուղը հեծեց խճապետի սրի տակ,
Մինչ կես գիշեր կոտորեցին, կողոպտեցին անարգել,
Այնուհետև գյուղը մտավ գործի մի նոր գումարտակ,
Վոր Դրոյի հրամանով ոգնության եր ուղարկվի:

Նորեկ սպան պատվի առած ներկայացավ Սեպուհին,
Ու վողջունեց նրան վայել մի առանձին հարգանքով,
Իսկ Սեպուհը հազիվ շարժեց բեխի ծայրերը դեղին
Ու յերեսը հանկարծ շրջեց՝ այդ վողջունից խիստ դժգոհ:

Այդ վայրկյանին նրա սրտում իր ձիու պես կատաղի,
Վերավորանքը ծառացավ ու Սեպուհը վորոտաց,

— Ձեռք է առել Դրոն միթե հայոց ազգի պարծանքին,
Ու՛մ համար է այստեղ ճամբել լակոտներին իր սոված:

Իմ տղերքը գիշեր ցերեկ արյուն թափեն անդադրում,
Վոր լակոտներն այս վայելեն մեր սրի փառքն ու ավար,
Ձե, Սեպուհը դեռ իր գլխին կնկա լաչակ չի ծածկում,
Նա թույլ չի տա, վոր անունն իր անհն հողին հավասար:

Թող Դրոն այս ջահելներին կազարմեքի մեջ պահի,
Գուցե մի որ աղջկա տեղ իր քեֆերին պետք կզան...
Այս անտեղի ոգնությունով թող չանպատվի Սեպուհին,
Նրա սուրը կտրուկ է միշտ, կարիք չունի ոգնության:

Այս խոսքի հետ նա դուրս քաշեց մաուզերը շողշողուն,
Ինչը գնդակ շառաչելով դեպի յերկինք ուղացան,
Տառներորդով ուղում եր նա նորեկներին վողջունել,
Բայց մի հարված իջավ ուսին ու բազուկը թուլացավ:

Ձինվորներից մի քանիսը այդ արարքից վերավոր,
Մեջտեղ առան հոխորդացող խճապետին դայրացած,
Ու վորոտաց վողջ գյուղով մեկ նրանց ձայնը անավոր,
— Մենք թույլ չենք տա, պարոն Սեպուհ, մաուզերը դրեք ցած:

Առանց այն ել զոռով են մեզ այս ճակատը ուղարկել,
Ձեք ցանկանում, չենք ել կովի, ել ինչո՞ւ յեք անպատվում,
Այս վայրկյանին մենք հասարակ զինվորներ ենք իհարկե,
Բայց և այնպես ամեն զինվոր ունի պատիվ ու անուն:

— Ձեր անունն ու պատիվը ձեր կոպեկ չարժի ինձ համար,
Ու Սեպուհը նշան տվեց իր թիկնապահ տղերքին,
— Կոտորեցեք այս բոլորին, արեք հողին հավասար,
Վոր իմանան ի՞նչ ասել է վերավորել Սեպուհին:

Ու մի վայրկյան շողշողացին դաշույնները նրանց սուր,
Մի խումբ մարդիկ խուլ դայրութիւնով իրար վրա ուղացան,
Անգամ մեկը ծունկի յեկավ կոնատակից վերավոր,
Մինչև դաժան խճապետի բարկությունը մեղմացավ:

Ըմբոստացող զինվորներէց վողջ զենքերը խեցին,
Ու բոլորի բազուկները թիկունքներին կապելով,
Տարան հեռու գյուղի ծայրին մի մարագում փակեցին,
Ու խմբապետը վորոշեց «նրանց դատել իր սրով»:

Իսկ մի մասը նորեկներին խմբապետին միացավ,
Ու նորից նոր շողշուղացին խարույկները մահաբույր,
Վարժուցին կրկին անգամ մատուցելու հրացան,
Յե՛վ աղբյուրներն ավեր գյուղի դարձան կարմիր արնաշուրթ

2

Մինչ Սեպուհը կրակ կտրած,
Ավերում եր վողջ Վեդին,
Ըմբոսաները մարագի մեջ
Լսում եյին Ավետին:

Յերկու ձեռքը մեջքին կապած,
Սիրտը ծովի պես խռով,
Զրուցում եր նա կիսաձայն,
Խուլ զայրույթը զսպելով:

Մեկ դիմում եր նա ամենքին,
Մեկ վոչ վոքի չեր դիմում,
Բայց իր խոսքը պարզ ու մեկին,
Հավանություն եր գտնում:

— Ասեք անհմտ, ախպեր աղերք,
Դուք ինչպե՞ս եք մտածում,
Մի՞թե սրանց գերին ենք մենք,
Վոր տանջում են ու ծեծում:

Ինչո՞ւ յեն մեզ այստեղ բերել,
Ո՛ւմ համար ենք կովում մենք,
Ինչո՞ւ պիտի մենք թուրքերի
Խաղաղ գյուղերն ավերենք:

Այո կովի մեջ, լավ լեցեք,
Վոչինչ չկա ոգտակար,
Ձե վոր թուրքը դրկեցն ե մեր,
Վատ չի յեղել մեզ համար:

Ի՞նչ եր արել աղջիկն այն խեղճ,
Կամ յերեխեն նորածին,
Վոր այս գիշեր բոցերի մեջ
Մոմերի պես մարեցին:

Ախպեր Սեթո, հենց դու ասա,
Դե մի սիրտդ բաց արա,
Ի՞նչ ես կարծում, կոխվ ե սա,
Թե թալան ու կոտորած:

Զենքը ձեռքիդ կովում ես դու,
Թուրքի տներն ես այրում,
Բայց այս կովում, ախպեր Սեթո,
Դո տունն ել ե ավերվում:

Ինչպես թուրքերն՝ այնպես ել մենք
Թալանվում ենք հավասար,
Վոր եղպես ե, ինչո՞ւ կովենք,
Ինչո՞ւ մեռնենք, ո՛ւմ համար:

Ինչո՞ւ պիտի վորդիքը մեր,
Ու մեր կանայք վորք մեան,
Մեր տները դառնան ավեր,
Յե՛վ արտերը չորանան:

Մի գնա դու և հարցրու
Զինվոր դառած գյուղացուն,
Կտեսնես վոր ամեն զինվոր,
Մեզ նման ե մտածում:

Նա չի ուզում թուրքին քարգել,
Նա սովոր չե թալանի,

Դու նրան տուր լծկան ու սել,
Վոր իր տունը շենացնի:

Սեթոն լսեց Ավետիքին,
Ու կամացուկ շշնջաց,
— Դուզն ես ասում, յիս իմ հոգին,
Զուր ենք լսում մենք սրանց:

Համաձայն եմ, վոր այս կովում
Ոգուտ չկա, ճիշտ ես դու,
Մշակ Սեթոն ինչու կովի,
Ինչո՞ւ մեռնի, ո՞ւմ խաթրու...

Հենց են որվա կոչի մեջ ել
Կովի մասին եր գրված,
Ով գրել եր, ճիշտ եր գրել,
Ել չենք ուզում կոտորած:

Ել չենք ուզում կովի անել,
Վոչ ել մեռնել ենք ուզում,
Ու նա դիմեց ընկերներին,
— Տղերք յիս ճիշտ չեմ ասում:

— Ճիշտ ե Սեթո, ձայն ավեցին
Զինվորները վրդովված,
Դուք յերկուսդ ել ճիշտ ասացիք,
Ել ասելիք չմնաց:

— Դե վոր ճիշտ ե, Ավետն ասաց,
Յեկեք փախչենք այս բանտից,
Թե չե, այսոր մինչ լուսաբաց,
Սեպուհը մեզ կսպանի:

Գնանք ախպեր մեր տան վրա,
Մեր բալեքին խնամենք,
Սեպուհների խաթրու համար
Ինչո՞ւ պիտի մենք մեռնենք:

Սեպուհների խաթրու համաց,
Ել կովեղու Խիրտ չկա,
Բայց իսկական կովի մեր,
Յետից ե, դեռ կգա...

Յեւ հինգ զինվոր ծուռկի յեկած
Կիտախավար մարադում,
Ատամներով կտրատեցին
Կապանքները մեկ մեկու:

Կապանքից գերծ բազուկներով
Խորտակեցին դուռը հին,
Յեւ հեռացան, յերդում տալով
Չը մոռանալ Սեպուհին:

Իսկ յերբ ծագեց արվին դալուկ Արարատի կատարից,
Ծուխն եր կանգնել գյուղի վրա մշուշի պես կապուտակ,
Ծխում էին հյուղերը հին և բուրգերը աթարի,
Ու քնել եր արնով արբած խմբապետը յելուզակ:

Քնել եր նա խորունկ քնով, իրա վորսից հագեցած,
Իսկ դաշտերում ուրուրի պես նրա սարսափն եր շրջում,
Ու խմբապետն այդ չարասիրտ, իր յերազում արնամած,
Ազգասերի անմահություն ու համբավ եր անըջում:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

1

Դաշնակցական բանտի անթափանց խավարում
 Կոմյերիտմիության զավակները արի,
 Դանդաղորեն անցնող որերն ելին հաշվում,
 Ու մի որը նրանց թվում եր մի տարի:

Նրանք ունեյին բյուր յերազներ լուսազարդ,
 Ունեյին չմեռնող նպատակներ բազում,
 Նրանց ամեն մեկի ոիրտը յերիտասարդ
 Ազատություն ու ջերմ արև եր յերազում:

Դժվար եր համբերել բանտի խուռ խավարում,
 Չոր հացի հետ ուտել պարտավ թշնամու,
 Վորի չկարեկցող մտրակների ներքո
 Յերկիրը սովալլուկ էր արյունն եր քամում:

Յերկիրը սովալլուկ, վորի սիրտ համար
 Նրանք զինվոր դարձան ազատության գործին,
 Ու որտեղ լցրած խիզախության անմար
 Բոլշևիկյան կռվի գիրքերում կանգնեցին:

Ու կռիվն այդ խիզախ, մարտը բոլշևիկյան
 Նրանց բերեց մինչև դուռը մռայլ բանտի,
 Առժամանակ միայն նրանք ծունկի յեկան,
 Բայց և չգիշեցին թշնամուն տմարդի:

Ու մութ բանտի մեջ ել, հսկողության ներքո
 Միշտ մնացին նրանք անզիջում ու տոկուն,

Յեվ ջահել սրտերի զվարթաձայն յերգով
 Գալիք կռիվների հուրն ելին բորբոքում:

Քանի անգամ յեկան ու քննեցին նրանց,
 Սպառնացին անգամ կախաղանով, մահով,
 Բայց ամեն մի հարցում անպատասխան մնաց,
 Կամ պսակվեց նրանց թունալի հեղնանքով:

Նրանք չգիշեցին թշնամուն նենգամիտ՝
 Ու վոչ վորի առաջ նրանք մեղա չեկան,
 Ու դաշնակ պետերի սպառնալիքը բիրտ
 Ամբարցրեց նրանց կամքը բոլշևիկյան:

Ու յերբ բանտարկության ամիսը լրացավ,
 Տանելով իրա հետ սպասումը նրանց,
 Ինչ վոր տեղից նրանք մի կապոց ստացան,
 Այդ փոքրիկ կապոցում մի սև հաց եր գրված:

Սեվ հացը կիսեցին և այդ հացի միջից
 Դուրս յեկավ մի նամակ, ծանոթ ձեռքով գրված,
 Մթնում շողշողացին նրանց աչքերը ջինջ,
 Ու սրտները կարծես թե առան ու թռան:

Այդ Ղուկասն եր գրում, ղեկավարը նրանց,
 Ու մոռացան նրանք սև պատառը հացի,
 Մոռացան, վոր իրենք բանտի մեջ են նստած,
 Յերբ ընկերոջ գրած նամակը կարդացին:

«Իմ սիրելի Վաղո, և թանկագին Աննա,
 Արտաշ, խիզախ ընկեր, յեղբայրական վողջույն,
 Ձեր առնական հոգին թող միշտ պայծառ մնա,
 Հույսներդ միք կտրի ու յեղեք անզիջում:

Դաշնակների առաջ գլուխ միք խոնարհի,
 Միք թողնի, վոր նրանք մեղ վրա ծիծաղեն,
 Ջահել բանակը մեր աճում և որորի,
 Ու վոչ մի բանտ նրան ել չի կարող թաղել:

Նոր խմբակ ե կազմվել Բայազետում հետու,
Ալեքսանդրն ել արդեն իր խմբակներն ունի,
Ամեն տեղ մարտական աշխատանքն ե յետում,
Մեր կռիվն այս անգամ գնդակով կլինի:

Պատրաստ կացեք, տղերք, վաղը կես գիշերին
Յեռ ձեզ եմ սպասում բանտի պատերի տակ,
Պահակը ձեզ պարան ու սլոց կբերի,
Այդ պահակն ել հետո ճանապարհ ցույց կտա»:

2

Վաղուց արդեն արևը հուր
Գուն եր մտել սարի տակ,
Պատի յետև անքուն ու լուռ
Թափառում եր մի պահակ:

Իսկ մութ բանտի պատերից ներս,
Անհյուրընկալ իր խըցում,
Վաղարշակը լուսամուտի
Յերկաթներն եր սղոցում:

Սղոցում եր նա անգաղար
Բազուկներով իր ճկուն,
Իսկ դրսում մեղմ ու միալար
Կապույտ Զանգուն եր յերգում:

Լսում եր նա յերգը ջրի
Ու զրուցում մտովին,
«Իր ակունքից յերգում ե նա,
Մինչև գիշերը լուրթ ծովի:

Յերգում ե նա թե ժայռի տակ,
Թե մթամած անտառում,
Ու վոչ մի տեղ այդ համարձակ
Յերգը յերբեք չի լուռ:

Յեվ այդ անուշ յերգով տարված,
Աղբյուրները զրնգուն,
Արշավում են սարերից ցած
Ու մեծ դետին միանում:

Ու տանում ե Զանգուն նրանց
Դեպի ծովը լուսավետ,
Վորի գրկում իր տեղն ունի
Ամեն աղբյուր, ամեն գետ:

Մեր պայքարն ել վարար մի գետ,
Վոր անկաշկանդ զնոցով,
Սրտերը մեր առած իր հետ,
Արշավում ե դեպի ծով:

Ու մեր ճամբին հազար ժայռեր,
Անտառներ կան մթամած,
Բայց աներկյուղ և անվեհեր,
Կխորտակենք մենք նրանց»:

Այս մտքի հետ նա պինդ քաշեց
Նուրբ սղոցը իր ձեռքի,
Ու խորտակեց ժանգակալած
Վերջին ձողը վանդակի:

Գիշերային մեղմ հովի հետ
Նրանց հոգու ականջին,
Հավքի նման անուշ յերգեց
Աղատության սերը ջրինջ:

Անսան կապեց թուղ մեջքին,
Ու լուռ կախվեց դեպի ցած
Յեվ այդ պահին մթի միջից
Մեկը վազեց զրկաբաց:

Այդ Ղուկասն եր, վոր կարոտով,
Իր գիրկն առավ աղջկան,
Յեւ համբուրեց ընկերունս
Շրթունքները: կուսական

— Ղուկաս, կանչեց աղջիկն հուզված
Ու փաթաթվեց պատանուն,
Յեւ Ղուկասի հոգում զնգաց
Յերջանկությունը անհուն:

Այնուհետև ներքև իջան
Սոսը, Արտաշն ու Վաղոն:
Իսկ սարերում արդեն պայծառ
Կուսաբաց եր շողջողուն:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

1

Յերեկ գիշեր Յերեանի կուսակցական բջիջում
Վորոշեցին պետության դեմ կռիւ յեկեղ անդիջում:
Աղմկոտ եր այդ ժողովը, մթնոլորտը խիստ լարված,
Վոր սկսվեց իրիկվանից ու տեղի մինչ լուսաբաց:
Այդ ժողովում հանդես յեկող Վասմշապուհն ու Սաքոն
Զգուշությամբ հաղորդեցին իրենց յերկյուղը թագուն:
Ասին «մինչև ազգամիջյան կռիվը չդադարի,
Մենք չենք կարող դաշնակի դեմ զենքով յեկեղ պայքարի:
Մենք գլխովին կտապալվենք այդ կռվում անհավասար,
Ժամանակն ու զբոլթյունը ձեռնառն չեն մեզ համար»:
«Լավ չէ, ասին, վոր սպասենք, մինչև հարմար դեպք լինի,
Մինչև իրենց յերկրում հաղթեն բանակները Լենինի...»
Այդ յեղույթից ժողովն ամբողջ ամբողջ պես վորստաց,
Յեւ Ստեփանը խոսք առավ ամբողջ հոգով դայրացած. —
— Վախենում եք, կասկած չկա, մեր ուժին չեք հավատում,
Յերեւում ե, վոր դավաճան ոճն ե նստել ձեր սրտում:
Գուցե նաև սպասում եք, վոր թշնամին իր կամքով
Յերկրի դեկը ձեր ձեռքը տա և հեռանա անվրդով:
Իսկապես, շատ լավ կլիներ, վոր անկռիվ, անարյուն
«Սպասելով» ու «զիջելով» դուք հաղթեյիք թշնամուն:
Բոլշեիկներ, չեն ամաչում, վախենում են մեր մարտից,
Ինչպե՞ս կոչել այսուհետև արարքը ձեր տմարդի:
Մենք անպայման պիտի կռվենք, ժամանակն ե կռվելու,
Բավական ե, վորքան յեղաք ստրկամիտ ու հլու:
Վախը յերբեք չի համընկնում բոլշեիկի կոչման հետ,
Բոլշեիկը քաջ պիտ լինի, պիտի լինի լարված նետ:
Թե քաջ լինել չեք կարող դուք, բաժանվում ե ձեր ուղին,

Մենք չենք կարող համաձայնվել ձեր անհիմն յերկյուղին:
Սաեք, ինչի՞ն էլ օպասենք, յերբ վոր ամբողջ մեր յերկրում
ժողովուրդը սրտատրուփ մեր կանչին ե օպասում:
Մեր թիկունքին Ալեքսանդրն ե, բանակներով իր հզոր,
Բայազետն ե մեզ օպասում, անգամ Ղարսը հեռավոր:
Ամբողջ Լուսին իր գյուղերով, բջիջներով բուշերիկ
Սպասում ե սրտատրուփ կռիվներին մեր գալիք:
Իսկ յեթե մենք նշան չտանք, ժողովուրդը վողջ յերկրի
Սևաջներով ձեզպահներին, ինքը կելնի պայքարի...
Յերկար խոսեց Ստեփանը, հետո գիմեց Ոսեանին,
Վոր յեկել եր Բայազետից մասնակցելու ժողովին:
— Խոսիր, Ոսեա, ի՞նչ ես լուել, հառկացրու այս ծարդկանց,
Վոր անպայման պիտի կռվենք ու չենք լսի մենք նրանց.
Դու ել, ընկեր Մուսաեկյան, Ալեքսանդրի առաջնորդ,
Սաա ինչպե՞ս եք վորոշել կռվի խնդիրը ձեզ մոտ:
Սաեք, միթե աննպատակ ե դրությունը մեզ համար,
Սաեք, արդյոք «հերոսներն» այս չէ՞ն ռիսկավում չարաչար:
— Ել ի՞նչ խոսեմ, Ոսեան ասաց, դու ամեն բան ասացիր,
Հանգստացիր ընկեր Սեփան, իդուր տեղը մի հուզվիր.
Վորոշված ե, Մայիս մեկին մեր կռիվը կլինի,
Թող մեր ճամբից հեռու մնա՝ ով կռվելու ուժ չունի...
— Յեա ել, Ոսեա, ամբողջ սրտով միանում եմ քո խոսքին,
Ճանաչում եմ յես մեկ առ մեկ Ալեքսանդրի տղերքին:
Ո՞րից եր եմ, ինչպե՞ս գիտեք ու հենց հիմա ձեռքիս տակ
Զրահապատ ունեմ յես մի ու մի զինված դումարտակ:
Կռվի ժամին նրանք մերն են, կասկած չկա դրանում,
Զրահապատն իմ կլինի հենց առաջին շարքերում:
Այսպես ահա, ընկեր Սեփան, մենք պատրաստ ենք, վոնց տեսաք...
Ու Սարգսի խոսքը վերջին դարձավ անգուսպ մի հրճվանք:
Իսկ Ղուկասը, վոր մինչև այդ լուռ լսում եր մեծերին,
Նախագահից խոսք պահանջեց ու ժպիտը շուրթերին
— Յեա, ել, ասաց, ընկեր Սեփան, համաձայն չեմ սրանց հետ,
Բուշերիկը, ինչպե՞ս ասիր, պիտի լինի լարված նետ:
Բուշերիկը պիտի կռվի, ու յես ահա հենց այսոր
Խնդրում եմ, վոր ինձ ուղարկեք դեպի Ղարսը հեռավոր:
Յիս պայքարից չեմ վախենում, չեմ վախենում մահվանից,
Մի վարանի, ընկեր Սեփան, չե՞ վոր խոսք ես ասել ինձ:

Իսկ ընկերներն իմ կոմսոմոլ, վողջ բանակը մեր ջահել,
Ձեր թիկունքին միշտ կլինի, ինչպե՞ս նրան ե վայել:
Մենք մի անգամ, ինչպե՞ս գիտեք, քննությունը բռնեցինք,
Բաց ճակատով ենք ընդունում զինված կռիվը գալիք...
Նախագահը քվեարկեց՝ առաջարկը Ղուկասի
Ու վորոշվեց, վոր նա մեկնի դեպի ճակատը Ղարսի:
Պարտությունից ամթահար Վոսմշապուհն ու Սաքոն
Նրանց առաջ մեզա յեկան կատունների պես ձկուն:
— Սխալվել ենք, ասին նրանք, շփոթվել ենք մի տեսակ,
Սեփանը մեզ ուշքի բերեց՝ իր յելութով համարձակ:
Միանում ենք վորոշումին ու պատրաստ են կռվելու,
Ծիշտ եք ասում, մեզ չի օգտի օտրկությունը հլու...
.

Լուսարաց եր, յերբ աղմկոտ այդ ժողովը վերջացավ,
Յեվ Ոսեանը կոմսոմոլի՝ զեկավարին մոտեցավ:
Նա քնքշությամբ ձեռքը դրեց այդ պատանու պիղկ ուսին,
Ու ժպտալով իրար առան հայացքները յերկուսի:
— Գնա, ասաց, իմ քաջ տղա, մի վախենա մահվանից,
Այդ փոթորկուն կռվի ժամին սիրտս ել քեզ հետ կըլինի:
Հավատում են բոլորը քեզ, ու յես ել եմ հավատում,
Կռվիր, ինչպե՞ս վայել ե այդ կոմսոմոլի քաջ վորդուն:

2

Սիրտը լցրած մեծ ընկերով խրախույսով այդ անդին
Զրիմացավ նա ինչպե՞ս հասավ իրենց խաղաղ տնակին:

Ու յերբ արագ անցնում եր նա փողոցներով կիսամութ,
Թվում եր թե իր սրտի հետ զրուցում եր ամեն թուփ:
Թվում եր թե յերկինքը լուրթ ե աստղերը հուրհուրան,
Վողջունում են հաղար աչքով նրա յերթը սրբառուրախ:

Վառ աստղերի հավերժական գեղեցկությամբ արբեցած,
Նա կանգ առավ ճամփի կեսին և աստղերին լայն ժպտաց:

Ու հիշեց, վոր շողշողացող ճրագներն այդ յերկնքի,
Կաշկանդել են մի ժամանակ իր տենչերով լի հողին:

Յերազում եր նա անդադար լինել խիզախ աստղագետ,
Ու գիտության լեզվով խոսել շողշողացող աստղի հետ:

Յերազում եր նա բաց անել խոր գաղտնիքը յերկնքի,
Վոր աստղերն այդ հավերժաբար վառվեն առանց գաղտնիքի:

Բայց անավարտ թողնելով այդ յերազները փայփայած,
Նա կռիվ է գնում անա զինվորի պես կրծքաբաց:

Ու յերկնքում շողշողացող աստղերի տեղ լուսածիր,
Ընկերներն անա նստել Ղուկասի հետ զրուցի:

Զիլ ծիծաղն է նորից թնդում հին տնակի հարկի տակ,
Զահել մարդկանց հույզն է շաչում ծովի նման կապուտակ:

— Շուտով, շուտով անել կովի շեփորները կղնգան,
Ու դայրույթով վոտքի կելնեն մեր զնդերը մարտական:

Մեր դարավոր թշնամու դեմ կովի կերթանք միասին,
Ու վառվում են աստղերի պես զույգ աչքերը Ղուկասի:

— Կովի կերթանք, անուշ Ղուկաս, կովի կերթանք միասին,
Ու մեր ձեռքում կը փողփողա ալ դրոշը Մայիսի:

Արձագանք են տալիս այսպես ընկերները նրա սեպ,
Ու պատանու առույգ կրծքից դուրս է թռչում մի զիլ յերգ:

— Հայրենիքիս բախտի համար
Զենք եմ առել յես անա,
Ու գնում եմ դեպի կռիվ,
Զինվորի պես միշտ անահ:

Ազատության արևն է վառ
Ճամփիս վրա շողշողում,
Ազատության սերն է պայծառ
Դեպի կռիվ ինձ մղում:

Յես կշռքեմ իմ դիրքի մեջ,
Կրակ կտամ շեշտակի,
Ու թշնամին գնքիս առաջ
Ահը սրտում կը չոքի:

Փույթ է յեթե կովի դաշտում
Չար գնդակից յես ընկա,
Շիրմիս վրա հայրենիքիս
Նոր արեւը կը ժպտա:

Ու վառ սիրով ինձ կըհիշե
Հայրենիքն իմ նորածին,
Վորի համար յես մի գիշեր
Զահել կյանքս զոհեցի:

Տխրությունն է ծորում նրա անուշ յերգի խոսքերից,
Ու մի մոայլ ամպ է իջնում նրանց զվարթ աչքերին:

Բայց չի կարող սիրտը ջահել տխրությունը դիմանալ,
Իր շողշողուն հաղթանակի հավատով է ապրում նա:

Կոմսոմոլյան սիրտը նրանց տխրություն չի ճանաչում,
Ու Ղուկասի յերգից հետո պատասխանն է զողանջում:

— Կոմսոմոլի ծոցից յելած
Բազկներին անվահեր,
Զի կարող մեր չար թշնամին
Գազաթներից վար բերել:

Կը վրիպի իր նշանից
Նրա ձեռքը մահաբեր
Ու կմնա հավետ անրիծ
Բոլշեիկյան զործը մեր:

Զքանում է ծխի նման տխրությունը նրանց մոլթ,
Ու բերկրանքն է նորից աճում ջրվիժի պես հորձանում:

Մինչ յերգում են նրանք ուրախ ձայնակցելով մեկ մեկու,
Մթաղնում և կամաց-կամաց վերջալուսը վարդազույն:

Հալաքույթը հրաժեշտի վախճանին և մոտենում,
Յեզ ուրախ են, և՛ տխուր են ընկերները պատանու:

Չե՞ վոր գվարթ ջահելներն այդ արշավում են մահվան դեմ,
Յեզ ո՞վ գիտի կրկին անգամ ել յե՞րբ պիտի հանդիպեն:

— Ել յե՞րբ պիտի այսորվա պես իրար գտնենք մենք կրկին...
Սա մի հարց և խիստ կարեւոր, վոր հուզում և ամենքին:

Յեզ սիրտ հուզող այդ հարցումի պատասխանը անբարբառ,
Շողշողում և նրանց ուրախ աչքերի մեջ հրավառ:

— Կը հանդիպենք, յերբ դործը մեր հաղթանակով պսակվի,
Յեզ գրկում են նրանք իրար այդ հաղթության հույսով լի:

Ու սիրտը լի ծնողական մաքուր սիրով կաթողին,
Մոտենում և մայրն ել պառավ իր պատանի գավազին:

Նրա գանգուր գլուխն առած թևերի մեջ դողդոջուն,
Նա մարտ մեկնող իր գավազին բարի յերթ և մրմնջում:

— Գնաս բարով, անուշ բալա, իմ ծեր կյանքի արեգակ,
Թող սուրը քո կտրուկ լինի, ճամբեդ լինի անփորձանք:

Աչքիս լուսն հմ ճրագ արեւ, սիրտս հմ արեւ քեզ որոցք,
Անց և կացիկ կյանքս ջահել զրկանքներով, սև որով:

Մեջքս ծալած զրկանքների, տառապանքի բեռի տակ
Միշտ պահել հմ սրտիս խորքում անհանգչելի մի բաղձանք:

Յերազել հմ գիշեր ցերեկ, վոր բալիկս մեծանա,
Հարսնիք անեմ ու նորից-նոր գատարկ տունս շենանա:

Բալիկս ահա հասակն առել դարձել և մի չինարի,
Բեխիւր ունի սև սաթի պես, կուրծքը նման են սարին:

Ա՛խ, յերբ պիտի յետ դառ նորից, կոսպանդ կապեմ եդ կրծքիդ,
Անուշ բալիս բախտը տեսնեմ, նոր հեռանամ աշխարհքից:

Ու մայրը ծեր միտքը տված
Այդ յերջանիկ յերազին,
Լուռ սրբում և աչքերը թաց
Ու գուրգուրում Ղուկասին:

Ընկերներն ել նրա ջահել,
Վոր սրտերում իրենց թեժ
Հազար տենչ ու իղձ են պահել,
Հազար յերազ անթեղել:

Մեջտեղ առած իրենց խիզախ
Ղեկավարին գանգրահեր,
Յեղբայրների նման անուշ
Գուրգուրում են սիրաջեր:

Համբույրներով քնքուշ ու ջերմ,
Գուրգուրանքով սիրալիր,
Ջահելներն այդ ազատասեր
Բաժանվում են իրարից:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Գարուն յեկավ, առուն յեկավ,
Զընդոցով ու յերգով
Գարնան թեմքով հավքեր յեկան,
Յեկան անցան յերկնքով:

Արևը ծեր մահիճ մտած,
Զարթնեց, ինչպես ժիր մանուկ,
Ծիծաղեցին գետ ու վտակ,
Ժպտաց յերկնի աչքը մուգ:

Ու զարթնեցին ծաղիկ ու վարդ,
Մայիս տոնող մանկանց պես,
Արտուտների խումբը զվարթ,
Դաշտում կաղմեց ճոխ հանդես:

Գարուն յեկավ, առուն յեկավ,
Զընդոցով ու յերգով,
Իսկ մեր ավեր յերկրի վրա
Վիշտն եր նստել ինչպես ծով:

Խեղճ գյուղացու հորը դատարկ,
Ուն էր մայում փարախից,
Յեմ ամեն մի կտուրի տակ
Սոփն եր շրջում չարախինդ:

Գարնան առուն, զվարթ առուն,
Կսկիծ բերեց գյուղացուն,
Գարնան թեով նրա հոգուն
Զմեռ իջավ ցուրտ ու ձյուն:

Զմեռ իջավ Հայաստանի
Հովիտներին անպտուղ,
Ու կարոտով սերմ յերազեց
Քնից զարթնած հողը թուխ:

Հողը փխրուն սերմ յերազեց,
Մշակողը — լիություն,
Բայց լիառատ բերքի տեղակ
Սև կարիքը մտավ տուն:

Ու ժողովուրդն արյունաքամ,
Դաշնակներից վտնահար,
Վոտքի յեկավ դարնանային
Հեղեղների պես վարար:

Ու զենք առավ նա, վոր կյանքում
Թույն եր կերել հացի տեղ,
Ում վոր մարած, պաղ ոջախում
Զկար կրակ ու անթեղ:

Դաշուն դարձավ սուր գերանդին,
Մուրճը դարձավ հրացան,
Ու ժողովուրդն ապստամբած,
Իշխողի գեմ ծառացավ:

Գիշերը լուռ ճամբորդի պես գյուղակը մտավ,
Ու լուսին կալերի մեջ աղբյուր ու վտակ:

Գյուղի ծայրին, մի տնակում ճրագ բոցկլտաց,
Ու տանտերը թախիծն հոգում կտրեց իջավ ցած:

Նա ներս մտավ, տեղավորվեց ոջախի կողքին,
Գիշերվա պես այդ մթամած, տխուր եր հոգին:

Այդ գիշեր մի հյուր եր յեկել աղքատ գյուղացուն,
(Մի անգամ ել նա հյուր յեկավ, յերբ ձմեռ եր ցուրտ):

Ճանաչում ե այդ յեկվորին աղքատ գյուղացին,
Ու պատմում ե, թե վոնց տարան միսուճար իր ձին:

— Ի՞նչ եմ ցանկել յես իմ հողում, վոր մնամ հնձի:
Խմբապետն ել աչն արնախում դուրս քաշեց իմ ձին:

Դուրս քաշեց նա իմ լծակցին ու մեջքին թռավ,
Ու կարծես թե հեռացող ձին իմ սիրտը տարավ:

— Դեզերտիր ես պահում, առաց, դավաճան ես դու,
Են ժեռ քարից պիտի գցել քեզ նման մարդուն:

Ել ի՞նչ խոսքեր նա ինձ չասաց, վոր միտս ե գալիս,
Սիրտս տեղից ծուլ ե լինում, ցավում ե հողիս:

Դեզերտիրն ել ով ե, գիտե՞ս, Ավետիքն ե մեր,
Վոր չոլերում թափառում ե ցերեկ ու գիշեր:

Բնավեր ե դարձել տղեն դուշմանի ձեռքից,
Թափառում ե անտեր թողած յերեխա ու կին:

— Բեր յեղբորդ հանձնիր, ասաց — մեկ ե, չես պրծնի,
Թե չե, ասաց, դուրս կը քաշեմ կամ կինդ, կամ ձին...

Մեկ ասացի բա՛նը քաշեմ ու տամ ճակատին,
Մեկ ել նորից փռմանեցի, նալլաթ սատանին:

Նա վոր մեռներ, նրա տեղակ ուրիշը կը գար,
Ես աշխարհում գրանցից շատ ուրիշ ել ի՞նչ կա:

Ու մեկ ել վոր ծառը կաղնի ճյուղից չեն կտրում,
Հաստ ընին են դարկը տալիս, հետո յե ընկնում:

Խմբապետը ճյուղն ե ծառի, իսկ բունը նրա,—
Ես որե՞նքն ե՞ վիշապի պես չոքած մեզ վրա:

Հրեա գյուղում քյոխվա ունենք, նրան դիմեցի,
Աղաչեցի, վոտքերն ընկա, վոր մի բան անի:

Իսկ նա ել թե՛ «այ Բաղդասար, լավ ե սուս անես,
Դո՛հ յեղիր, վոր եժան պրծար»... դե, ել ի՞նչ ասեց:

Հալբաթ, վոր նա պիտ պաշտպանի իր խմբապետին,—
Ասած ե, վոր շունը յերեք շան միս չի ուտի:

Ջուրը նրանց յերկուսի ել մի տեղ ե հոսում,
Խմբապետը թալանում ե, քյոխվի հետ կիսում:

Թխտի նման իր բալեքին առած թևի տակ,
Մի տես վո՛նց ե տխուր լալիս իմ կինը մենակ:

Յերեխեքն են իմ հեկեկում ձիու կարոտից,
Ախ չի դառնա ես իրիկուն իմ ձին արոտից:

Պատիկ բալես ջուր չի բերի, չի ջրի ձիուն...
Ու գյուղացու դույզ աչքերից թախիծն ե ծորում:

— Յես Խժժ դուռը դնամ թակեմ, վոր բալիս հաց տան,
Ու ձեռքիս ել վո՛չ հող ունեմ՝ վո՛չ յեղ, վո՛չ կթան:

Ասա, ընկեր, յե՛րբ ե գալու փրկությունը մեր,
Խեղճ ենք հսպիս, բայց մեր սրտում հույսը չի մեռել:

Թո՛նիրներում մեր խեղդվեց կանչը մեր հացի,
Ու մեր աչքն ել ջուր կտրվեց, ենքան մնացինք:

Համբերելու ել տեղ չկա, մեր թասը լցվեց,
Եսպես աղքատ, խեղճ ու անհաց դժվար ե ապրել:

Ասում են, վոր ես ամսի մեջ կոխվ պիտ լինի,
Ասում են, վոր պիտի քշենք մեր չար դուշմանին:

Ախ, սրբ եր թե ձիշտ լինեք դա, ես հացը վկա,
Մեր վողջ գյուղը վոտքի կելնի ու ձեզ հետ կգա:

Մենք բոլորս ել շատ ենք գաղվել սրանց մտրակից,
Հարկավոր ե, վոր ես ծառը կտրենք հենց տակից...

Սոսում ե նա խուլ զայրույթով ու շուրթը կրծում,
— Դուքն հաստամտ պիտի լինի, դու ի՞նչ ես կարծում...

Իսկ անկյունում արտասվում ե կինը նորաստի,
Արցունքով ե ասես վառվում ճրագն ել ձեթի:

Ու նստել ե ոջախի մոտ Սարուխանը լուռ,
— Ձի կը լինի, հաց կը լինի, մի արտասվի, քնյու:

Լացը, քույրիկ, մեղ չի փրկի, վոչ ել հաց կտա,
Ինչքան աղի արցունք թափես, նրանք չեն գթա:

Հենքի մեջ ե ե միռության — փրկությունը մեր,
Կովով պիտի մենք աղատենք մեր յերկիրն ավեր:

Հայաստանի շատ վայրերում կռիվ ե հիմա՝
Ընկերներն են մեր քաջարի այնտեղ զրկում մահ:

Բոլշևիկներն Հայաստանի կազմած մի ճակատ,
Պայքարում են դաշնակների սուր ու սովի դեմ:

Դաշնակցության զորքի կեսն ել մեր կողմն ե անցել,
Աչքդ սրբիր, անուշ քույրիկ, պետք չի արտասվել:

Սարուխանը խոսում եր, յերբ դուռը թակեցին,
Ու բերկրանքով վոտքի յեւան կինն ու գլուղացին:

— Տղերքն յեկան, դե, այ կնիկ, սեղան բաց արա,
Ու տանտերը չուրս սլացավ ձեռքին մի ճրագ:

Դուռը բացվեց ու ներս մտան տասներկու հոգի,—
Անդամները բոլշևիկյան գաղտնի խմբակի:

Մտավ Ավոն հաղթահառակ, ժպիտը դեմքին.
Ու մտերիմ վողջույն տվեց նստած Ոսեսին:

Մյուսներն ել վողջունեցին այդ մարդուն ծանոթ,
Ու մեկ առ մեկ նստոտեցին սառած թոնրի մոտ:

Յեվ այդ գիշեր Բաղդասարի խաղաղ հարկի տակ
Ժողով արեց բոլշևիկյան փոքրիկ մի խմբակ:

Այդ ժողովում վորոշեցին վիճակը դյուզի,
Վորոշեցին կովի յեկնել առանց յերկյուզի:

Ոսեսն ասաց—բոլշևիկյան խմբերն ամեն տեղ
Ընդհատակից դուրս են յեկել դաշնակների դեմ,—

— Դրոշակ են պարզել նրանք վողջ Հայաստանում,
Յեվ ամեն տեղ բոլշևիկի ձայնն ե վորոտում:

— Ժամն հասել ե, ել չենք կարող համբերել յերկար,
Ձենքով պիտի ուղի բանանք մեր դործի համար:

Նպատակը մեր այս կովի պարզ ե ու մեկին,—
Հայաստանից պիտի քշենք մենք դաշնակներին:

Ինչպես գիտեք, ռուսական ժողովուրդն ել մեծ,
Ցարական հին կարգերի հետ ճիշտ այսպես վարվեց:

Մեծ Լենինի ցուցումներով, պարզ ու իմաստուն,
Ժողովուրդն այդ ծունկի բերեց իր հին թշնամուն:

Մեծ Լենինի գծած ճամբով, ցուցումով նրա,
Խորհուրդները պիտի իշխեն մեր յերկրի վրա:

Այս ամենը ձեզ բոլորիդ հայտնի յե, գիտեմ,
Դուք ել պիտի կովի յեկնեք մեր թշնամու դեմ:

Դե ասացեք, ի՞նչ եք արել, վոր ճիշտ ժամկետին
Յեռագույնը կարողանանք տապալել դեռին:

Լուսթյան մեջ նա ավարտեց խոսքն իր համառոտ,
Սարուխանի խոսքից հետո ձայն խնդրեց Ավոն:

— «Այդ բոլորը, ընկեր Ոսես, ճիշտ վոր պարզ ե մեղ,
Իսկ թե մերոնք ի՞նչ են արել, հիմա կասեմ յես:

Բունտի մասին, ում վոր պետք ե, հայտնել ենք արդեն,
Ժամի զանգն ել սիգնալն ե մեր, աղերքը գիտեն:

Մեր գյուղը վողջ բաժանված է փոքրիկ թաղերի,
Յեւլ ամեն թաղ իր առանձին զեկավարն ունի:

Հեկավարներն այդ թաղական, իրենց ձեռքի տակ
Ունեն արդեն կարգին զինված մի լավ գումարտակ:

Դա մեր գյուղում այսպես առած՝ մի ոջախ է մեծ,
Վոր կը վառվի, հենց վոր ժամի զանգակը հնչեց:

Բացի զինված այդ տղերքից, Եւրիշներն ել կան,
Վոր կանգնած են մեր թիկունքին ու մեզ հետ կգան:

Մեզ հետ կգա նա՝ ով կյանքում լավ որ չի տեսել,
Ով տանջվել է գիշեր-ցերեկ ու զուրկ ֆնացել:

Թե ու թիկունք մեզ կը լինեն թե մանուկ, թե ծեր,
Մեզ հետ կը գա մեր գյուղը վողջ, Ժողովուրդը մեր...»

Վարդերով շուրթին բուսած բեխը նորածիր,
Ավոն լռեց, աչքը հառած ճրագի բոցին:

Այնուհետև այդ ժողովում խոսեցին հերթով
Բոյուք-Վեդու կովից փախած Բագրաման ու Սեթոն:

Ու ժողովից հետո նրանք մեկ-մեկ գնացին,
(Սպասում էր գյուղն անհամբեր իր լուսարացին)...

2

Լուսադեմին փոքրիկ գյուղի զանգակները հնչեցին,
Յեւլ արթնացող առյուծի պես գյուղը անհզ մռնչաց,
Ով զենք ունեւր՝ զենքը կապեց, ով ձի ունեւր՝ հեծավ ձին»
Իսկ ով ել վոր վոչինչ չունեւր, բահով զինվեց ու գնաց:

Ու մարդկային ծովը քալեց գեպի տունն այն գեղեցիկ,
Ուր քոխվան եր պատռալարվել, ոձի թուշը կրծքի տակ,
Փողփողացող յեռագուշը կառուրից վար բերեցին,
Ու նրա տեղ վեր խոյացավ մի արնագուշն զրոշակ:

.
.

Իր գորգազարդ ննջարանում, յերիտասարդ կնոջ հետ
Դեռ քնած եր տղան քյոխվի — դաշնակցական մի սպա,
Վոր յերեկ եր Բոյուք-Վեդու կոիջներից դարձել յետ,—
Հոր ոջախում «կազդուրեղու իր ուժերը սպառած»...

Քնած եր նա ու յերագում թվում եր այդ սպային,
Թե ինքն անա ընկերներով նստած է ձոխ խնձույքի,
Ու գինի յե մատուցվում գերեվարած թրքուհին,—
Վորի ամեն մի քայլի հետ նա դողում է հուզմունքից:

Բայց այս ինչ ե... դրսում կարծես գողգողում են, աղմկում...
Հո թշնամին չե հարձակվել... զենքերն ուր են, ուր է ձին.
Կես քնի մեջ անաբեկված նա շուռ յեկավ անկողնում,
Մեկ ել հանկարծ ննջարանի փակված դուռը թակեցին:

Կինն արթնացավ ու շփոթված փարվեց գունատ ամուսնուն,
Իսկ մի գիլ ձայն դրսից կանչեց «Պարոն Միհրան, բաց արա»
Սպան անով դուռը բացեց և քարացավ իր տեղում,
Յերբ յերեկաց շեմքի վրա իր զինվորը հասարակ...

Նա կամեցավ հանդիմանել իր դեղերտիր զինվորին,
Վոր գաղտնարար խույս եր տվել դաշնակցական բանակից,
Բայց Ավետը կծու ժպտաց — մեր գերերը փոխվեցին,
Դեղերտիրը դուք եք հիմա ու խնդրում եմ լսեք ինձ:

Այս առավոտ պետության դեմ ապստամբեց գյուղը մեր,
Իշխանությունն ամբողջ գյուղի հանձնված է հեղկոմին,
Նոր հեղկոմի հրամանով պաշտոնանկ է հայրը ձեր,
Դեհ, խնդրում եմ զենքերն հանձնել ու հետևել տղերքին...

Ու մինչ սպան պատրաստվում եր հետևելու Ավետին,
Դռները մեջ կանգնեց հանկարծ քյոխվի հարսը դալիահար,
Ավոն կարծես մի պահ դողաց նրա աչքի սուր նետից
Ու մրմնջաց — «անա վորտեղ հանդիպեցինք մենք իրար...»

Խոր կակիծով նա վերհիշեց տարիներն իր պատանի,
Յերբ շրջում եր սրտում պահած լույս պատկերն այդ աղջկա,
Հիշեց, ինչպես խլեց նրան գյուղի տերը անվանի,
Ու ցնդեցին ջահել տղի յերազները արևկա...

Կինն հասկացավ Ավետիքի շփոթվելը և ասաց,—
— Ո՞ւր ես տանում քո սպային, արձակուրդ ե յեկել նա...
Բայց Ավետը դեմքը շրջեց ու բարկությամբ շրջնաց
— Բանտի մեջ ել պարոն սպան կարող ե լավ գինջանալ:

Ու մինչ դրսում ժողովուրդը փոթորկում եր մոլեգին,
Դուրս թափելով զայրույթը հին, վոր պահել եր իր սրտում,
Ավետիքը բանտ ուղարկեց ձերբակալված «իր պետին»,
Բանտարկեցին նաև գյուղի հարուստներին մեծատուն:

Ու յերբ նրանք քայլում եյին պահակների առջևից,
Կռվում պարտված ոճերի պես սրտերը չար ու թունոտ,
Ժողովուրդը սատարիկ հուզված ալեկոծվում եր նորից,
Հազար շուրթից դուրս թափելով անեծքները զայրացկոտ:

Յեվ ամեն մարդ թվարկում եր վիրավորանքն իր հոգու,
Պահանջելով սաստիկ պատժել հարուստներին բեերես,
Փողոցներում վոտքի յելած ժողովուրդն եր փոթորկում՝
Տենդով եյին կարծես վառվում թոնիրներն ել հրակեզ:

3

Ամփոփելով ամբողջ որվա աշխատանքը հոգնեցնող,
Ժողովի յեն նստել ահա անգամները հեղկոմի,
Սարուխանը հաղորդել ե որակարգը քննարկվող,
Ու թվում են նրանք ուշիմ, խնդիրները միառմի:

Քննարկում են՝ ինչպես բաշխել այն հողերը արդավանդ,
Վորոնց վրա գյուղի հարուստ ոճերն եյին ծվարել,
Ինչպես բաշխել նրանց տիրած արոտները խոտառատ,
Վոր հողազուրկ ամեն մեկի կարոտ աչքը լիանա...

Ու մեկ առ մեկ ներս են գալիս գյուղացիները զինված,—
Նրանք, վորոնք ամբողջ կյանքում լիություն են տենչացել,
Ավետիքը յեկողներին վողջունում ե սրտաբաց
Յեվ հաղորդում՝ թե վորքան ե նա վարատեղ ստացել:

Յեվ ով գունից դուրս ե յեխում, Ավետիքի խոսքի հետ,
Նա աղբյուրի պես կարկաչող իր հրճվանքն ե տանում տուն,
Տանում ե նա մարմին առնող իր բաղձանքը լուռավետ,
Ու դառնում ե կյանքը գյուղի համատարած խնդություն:

Ու լեռնանիստ Բայազետի ավաններում ապստամբ
Կռվում եյին բոլշևիկյան բանակները անվեհեր,
Նրանց զենքերն եյին շաչում կայծակների սաստկությամբ,
Ու վարում եր կռիվն այդ մեծ Սարուխանը զանգրահեր:

Դրոշի պես քայլում եր նա ժողովրդի առջևից,
Ուժ ու հավատ հաղորդելով կռվողներին այդ արի,
Զրնգում եր ավաններում նրա խոսքը կենսալից,
Ու նոր գնդեր եյին ձուլվում այդ ծավալվող պայքարին:

Բերում եյին զնդերն այդ հոծ իրենց հետ բույրը հողի,
Հողի կարտը հրակեզ, ազատության տենչը խոր,
Ու մահ եյին բերում իրենց ավուր հացը խլողին,
Ու կռիվը ժողովրդի սաստկանում եր որալուր:

Իսկ Սարուխանը բոլշևիկ արիքունն այդ գանդրահեր,
Վոր խիզախ եր բազեյի պես ու ժայռի պես անսասան,
Տոն եր տալիս այդ պայքարին, վոր նա հունից չը շեղվեր,
Ու հավիտյան պայծառ վառվեր արեգակը մայիսյան:

4

Իսկ դաշտերում լայն Շիրակի
Զրահապատն եր զնգում,
Զրահապատն իր թշնամուն
Մահ ու սարսափ եր բերում:

Ալեքսյովը ապստամբած,
Ալեքսյովը անհանգիստ,
Ջոկատներով իր սիգապանծ
Յերթն եր վարում Շիրակի:

Ալմկում եր գեպոն, վորպես
Մի հրաբուխ լուսաշեջ,
Ու Մուսայելն եր բոցի պես
Հուրհրատում նրա մեջ:

Նստած «Վարդան Զորավար»-ի
Պողպատակուռ զեկի մոտ,
Արշավում եր նա քաջարի
Ընկերներով իր ըմբոստ:

Սրտում վառած ազատության
Կրակը թեփ, բոցաշունչ,
Սլանում եր նա անվարան
Ու կրակում անձուռնչ:

Կրակում եր ու վերհիշում
Տափաստանը հեռավոր,
Սիրերի ցուրտը դառնաշունչ,
Անցած որերը ախուր:

Ահա մթնում քայլում ե նա
Ջոկատի հետ իր հոգնած,
Բուքն ե վռոնում շուրջը նրա
Ու անտառը մթամած:

Խիտ անտառի մթնում հեռու
Թշնամին ե դարանել,
Վոր պատրաստ ե հոշոտելու
Կտրիճներին այդ ջահել:

Յեվ հիշում ե նա մեկ առ մեկ
Ընկերներին իր անցած,
Տղերքին այն բարի ու շեկ,
Ստեպի պես սրտաբաց:

Հիշում ե նա, ինչպես բոլոր
Զինվորներն այդ քաջարի
Կովի դաշտում ընկան մի որ
«Հանուն աստծու ու ցարի»...

Ընկան նրանք անհիշատակ,
Անգամ անթաղ մնացին,
Մուացվեցին ձյունների տակ,
Տափաստանում լայնածիր:

Ու Մուսայելն իր աչքերով
Մահեր տեսավ անհամար,
Հետո տեսավ ազատարեր
Հոկտեմբերը բոցավառ:

Տեսավ, ինչպես ռուսական
Ստեպաներում լայնահոդ
Ըմբոստուխյամբ վտաքի յեկան
Բանակները տառապող:

Ինքն ել ընկավ այդ կովի մեջ,
Տարվեց նրա հմայքով,
Ու սիրտը իր վառեց անշեջ
Ազատութեան կրակով:

Նա Լենինյան գաղափարի
Զինվորն յեղավ անվեհեր
Ու սրտում հուրն Հոկտեմբերի
Դարձավ յերկիրն իր ավեր:

Դաշնակներն այդ քաջ սպային
Ընդունեցին զբերաց,
Խոստացան փառք, «մեղալ» ու «չին»
«Լավ ուճիկ», «առատ հաց»:

Բայց նրա մեջ բուռնակի
Մաքուր սիրտն եր բաբախում,
Ու չծախեց նա իր հոգին
Իր թշնամուն արնախում:

Ազատութեան գործին տվեց
Նա իր սիրտը բոցավառ,
Ու մայիսյան կովում այդ մեծ,
Դարձավ կարմիր գորավար:

Ու կովում եր զորավարն այդ,
Վարում եր նա մարտը մեծ,
Ու հաղթութեան յերգն եր զվարթ
Զնգում նրա հոգու մեջ:

«Վառվիր մայիս ու շողշողա,
Վառվիր, ինչպես մեր հոգին,
Թող թշնամու գլխին տեղա
Կարկուտը մեր գնդակի:

Կաթիլները մեր ալ արյան
Կդառնան բյուր ալ վարդեր,
Յերբ վոր դաժան կովի յեկած
Բանակները մեր հաղթեն:

Զի մոռացվի ընկածների
Վերքը վառ ու վարդազույն,
Յերախտիքի վարդը կաճի
Ապրողների շնն հոգում:

Վառվիր մայիս ու շողշողա
Արյունածոր վերքերով»:
Ու յերգում եր բանակն արի,
Ու կովում եր յերգելով:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

1

Ախուրյանը մութ ձորի մեջ վորոտում եր կատաղած,
Իսկ մայիսյան հովը թեթե ինչ վոր յերգ եր մրմնջում,
Լեռան լանջին բերդն եր կանգնել լուծյան մեջ քարացած
Ու բերդի մոտ ապստամբած մի զորամաս եր ննջում:

Չեյին խոսում բարեկազից գնդակները կատաղի,
Հանգում եյին ու մոխրանում խարույկները լուսացայտ,
Լուսինն անա վեր բարձրացավ բերդի անկ կատարից,
Ու զորքերի քնատեղին պայծառ լույսով լուսացավ:

Գիշերային հանգստավետ լուծյունը խզելով,
Մի վիրավոր անքում եր խուլ իր գերքի մեջ կուշ յեկած,
Մի պատանի անցավ անա զդուշավոր քայլերով
Ու կանգ առավ հիվանդի մոտ սրտի թրթիռը պահած:

Իսկ մթամած ձորերի մեջ գետն ել լալիս տխրահեծ,
(Նրա պղտոր կոհակներին ալ արյուն եր խառնվել)
Յերեկ գիշեր գետի վրա մի գումարտակ գրոհեց,
Նա գրոհով կամուրջն առավ ու բարձրացավ սարնիվեր:

Գումարտակն այդ բերդը թուեց ժողովրդին միացավ,
Ապստամբած զորամասը նրա ուղին պաշտպանեց,
Այդ կովում ել յերեկ գիշեր գինվորն այս վերքը ստացավ,
Ու չեք քնում տանջող ցավից, հառաչում եր տխրահեծ:

Ու նայում եր վիրավորին այդ պատանին գլխահակ,
Յեղբայրական անհուն սիրով սիրտն եր նրա բարակում,
(Վիրավորը բարձի տեղակ քար եր գրել գլխի տակ
Ու մի բռն ել աղանձ ուներ նա իր մաշված փափախում):

Նա ծռենկ չոքեց գինվորի մոտ ու քնքշորեն շնջաց
— Շատ ե ցավում, իմ քաջ ընկեր, թույլ չի տալիս վոր քնես...
Վիրավորը անփութորեն ձեռքը շարժեց ու ժպտաց.
— Վոչինչ, կանցնի, ընկեր Ղուկաս, վերքեր շատ եմ տեսել յես:

Թե գնալու մի տեղ չունես, արի նստի՛ր իմ կողքին,
Որը շուտով կլուսանա, տես լուսաստղը բարձրացավ,
Առավոտյան վոտքի յեկած կովի կերթանք մենք կրկին,
Ու յես գիտեմ, վոր կովի մեջ կմոռանամ ամեն ցավ:

Առավոտյան բանակը մեր բերդի վրա կարշավի,
Առավոտյան բերդը կառնենք, վկայում ե իմ հոգին,
Հաղթանակն ել, ընկեր Ղուկաս, գեղ կլինի իմ ցավին,
Յերբ մեր կտրուկ սրի առաջ չար թշնամին կչոքի:

Ու Ղուկասը խավարի մեջ ժպտում ե իր խոսակցին,
— Ճիշտ ե, ընկեր, մենք կհաղթենք, իմ սիրտն ել ե վկայում.
Յեվ հաղթելով տեր կգառնանք մեր հողերին, մեր հացին,
Կլանքը շատ կը գեղեցկանա խորհրդային մեր յերկրում:

Այս ջրերը, վոր ձորի մեջ մռնչում են գայրույթով,
Լույսի պայծառ ջահեր դառած մեր գյուղերը կմտնեն,
Յեվ դաշտերն այս, վոր կիզվում են սերմի աննջող կարոտով,
Իներքի առատ պաշարներով մեր տները կլցնեն:

Մեր գետնավոր ու անարե խրճիթներից դուրս կգանք,
Նոր պալատներ կկառուցենք և ալգիններ հովառուն,
Խորհրդային մեր շեն յերկրում, աղատության լույսի տակ
Ծաղիկների պես կբացվեն մանուկները մեր սիրուն:

Յեվ այն, ինչ վոր դարեր առաջ մեր պապերն են լերագել,
Քո վորդիքը կը վայելեն, կվայելենք յես ու դու,
Այդ գեղեցիկ կյանքի համար Երոտով պիտի պաշարել,
Վոր նվաճվի խորհրդային արեգակը կենսատու:

Ջրուցում են այսպես ահա ընկերները զինակից,
Ի՞նչ լեռներին առավոտյան լույսն է ծորում աննկատ,
Ու զենքերն են խուլ շառաչում ապստամբած բանակի,
Արթնանում են զորքերը վողջ զինավառյալ ու պատրաստ:

Ու բոլորիկը պատանի իր զրույցը հավարտած,
Հաղթանակի հավատով լի բաժանվում է խոսակցից,
Մարտիկները բոլորիկին վողջունում են սրտաբաց
Ու թնդում է դիրքերի մեջ նրանց կանչը բեկրակից:

Վորոտում է այնուհետև կռվի շփոթը ուժգին,
Ջինվորները զենք են առնում մի առանձին խնդությամբ
Ու Ղուկասը կրակ կտրած, կարմիր գրոշը ձեռքին
Կռվելու յե առաջնորդում զորամասը ապստամբ:

2

Կիտախավար դիրքերի մեջ գնդակներ են ճարճատում,
Գնդակներն են դաժանորեն վողջույն տալիս մեկ-մեկու,
Մի կռվողի բացված վերքից ալ արյուն է վար կաթում,
Բայց մարտիկն այդ չի կորցրել արիությունն իր հոգու:

Ու խնդրում է նրան ահա ղեկավարը պատանի,
— Գնա ընկեր, այնտեղ պառկիր, մինչև ցավդ մեղմանա,—
— Դարդ մի անի, ընկեր Ղուկաս, սա ինձ շիրիմ չի տանի,
Յես քո կողքին գեռ կը կռվեմ, դիրքս դատարկ չի մնա...

Ու Ղուկասը սեղմում է պինդ ձեռքը խիզախը զինվորի,
— Ապրես, ընկեր, այդ խոսքը քո, մի կյանք արժեք ինձ համար
Կռվիր խիզախ և այն հույսով, վոր գնդակըդ չի կորի,
Այդ գնդակով կնվաճես ազատությունը անմահ:

Ու չորում է իր դիրքի մեջ ապստամբը վերավոր,
— Ազատության համար, Ղուկաս, կյանքս ել կտամ անարտունջ,
Լավ է զենքը ձեռքիս մեռնեմ, քան թե ապրեմ մեջքս կոր,
Համբերելու տեղ չեն թողել դաշնակները մեր սրտում...»

Կրակում է քաղաքը վողջ ու Ղուկասը ձիավոր
Սլանում է վագրի նման բարիկաղից բարիկաղ,
Թե՛ն են առնում նրա այցով թե՛ զորավար, թե՛ զինվոր,
Ու կռվում են թշնամու հետ նրանք ճակատ առ ճակատ:

Ձիավորներ արշավեցին խելակորույս ու անկանդ,
Գնդակահար ծունկի յեկավ ու վրնջաց մեկի ձին,
Տերն ել նրա մաուզերիստ—շունչը փչեց ձիու տակ,
Ու զինվորներն ապստամբած հաղթության փող հնչեցին:

Նվաճեցին նրանք ահա բարիկաղը առաջին,
Բերդն ել շուտով նրանց առաջ իր զենքերը կհանձնի,
Վորոտում է քաղաքը վողջ գնդակների շառաչից,
Ու թռչում է փրփրայերախ, քաջ Ղուկասի ճերմակ ձին:

* * * * *

Յերեք գիշեր, յերեք անգամ մութը պատեց աշխարհին,
Յերեք անգամ նորից ծագեց արեգակը լուսավառ,
Ու յերեք ուր, յերեք գիշեր ապստամբներն այդ արի,
Դիրքերի մեջ ծունկի յեկած կրակեցին անդադար:

Կրակեցին նրանք հույսով, ու քայլեցին միշտ առաջ,
Ու շառաչուն կռվի պահին մոռացվեցին վերք ու ցավ:
Անգամ կանայք ու պատանիք այրերի հետ զենք առան,
Ու քաղաքում խորհուրդների գրոշակը բարձրացավ:

3

Քաղաքի մեջ հաղթանակեց ժողովուրդը ապստամբ,
Իսկ հին բերդը վահանի պես դեռ մնում եր անխորտակ
Ու կռվում եր բանակն արի, հաղթանակի ցնծությամբ,
Բայց մի կրծող ցավ եր մխում ամեն մեկի կրծքի տակ:

Յեթի բերդը դաշնակցութեան մնալը կանգուն ու անպարտ,
Նա ու շերիմ պիտի դառնար այն բողբոջ քաջերին,
Վորոնք բերդի նկուղներում տանջվում էին անաղատ,
Սպասելով բողբոջայն աղատաբեր արեւին:

Նրանց գլխին դաշնակցութեան սուրն էր շողում արնածոր,
Հենց այդպես էլ հաղորդել էր պատգամախոսը յերեկ,—
«Ձեր տղերքին, ասել էր նա, սրի կտանք մենք այսօր
Ու դիակներն այդ բոլորի պարիսպներէջ կը կախնք...»

«Սրի կտան, չեն խնայի յեղբայրներին մեր գերի,
Թե ուշանա նրանց համար մեր բազուկը փրկարար,
Չար թշնամու ճիրաններից պիտի փրկել բոլորին,
Վոր կորուստն այդ անբուժելի ցավ չլինի մեզ համար»:

Ու Ղուկասը հռչակով լցրած յերիտասարդ իր հոգին,
Հրդեհում էր իր գնդակով վառողարույր ողբ դորշ,—
Կրակում էր նա անվարան ու սիրտ տալիս ամենքին,
Ու քայլում էր դեպի առաջ ինքն էլ, վորպես մի դրոշ:

* * * * *

Պատերազմը կամաց-կամաց մոտեցավ իր վախճանին,
Թնդանոթի ձայնը լռեց, համազարկը թուլացավ,
Պարիսպներից յետ ընկրկեց բերդում փակված թշնամին,
Հետո ճերմակ աղափուռ պես մի դրոշակ բարձրացավ...:

—Տղերք, առաջ, մեր թշնամին
Յետ փախավ իր դերքերէջ,
Մեզ են կանչում այնտեղ ահա
Ընկերները մեր գերի:

Ու ցնծութեան աղաղակով
Մարտիկները բոլշիկ
Առաջ անցան՝ դեպի բերդի
Պարիսպները անառիկ:

Շառաչելով յետ դնացին
Դարձաները հաստաբետ,
Ու դրոշը ծածանելով
Հաղթողները մտան ներս:

Կյանք բերեցին նրանք իրենց
Յեղբայրներին բանտարկված,
Վորոնց գլխին կախվել էր չար
Մահվան ձեռքը արնամած:

Բերդի կռվող զինվորներն էլ
Առած սուր ու հրացան,
Յեղբայրական կուռ դաշինքով
Յեկվորներին միացան:

Վորոտում էր քաղաքը վողջ հաղթողների զիւ յերգից,
Ու հրճվանքն էր բոցավառվում բիրերի մեջ բլուրավոր,
Ախուրյանն էլ փրփրայերախ, ձայնակցելով այդ յերգին,
Ջարնվում էր անդ բերդի պարիսպներին դարավոր:

Ու Ղուկասը սիրտը տված հաղթողների զիւ կանչին,
Վայելում էր մարմին առած աղատութեանն այդ շքեղ,
Ազատ կյանքի յերգն էր հնչում նրա հոգու ականջին,
Ու տեսնում էր նա իր յերկրի գալիք որը վարդագեղ:

Մեկ հրճվանք էր վառվում նրա բիրերի մեջ թխորակ,
Մեկ էլ տխուր ամպն էր չոքում արեւադ աչքերին,
Մի կանկած էր ծնվել նրա յերիտասարդ կրծքի տակ,
Ու տնքում էր սիրտը ջահել՝ ինչպես թռչունը գերի:

Տապալվել էր թեև արդեն դրոշակը յիռադույն,
Բայց թշնամին ապրում էր դեռ դադանի պես նետահար,
Ապրում էր նա դարանամուտ, անհուն դայրույթն իր հոգում,
Յեւ խորուչկը ահեղ կռվի թեժանում էր անդադար:

Ծածանվում եր ալ դրոշը բերդի անհղ կատարին,
Ինչպես մռայլ մեղից հետո արեգակը լուսարեր,
Թեև արդեն հաղթել էյին մարտիկները քաջարի,
Բայց Շիրակի բախտի մասին վոչ վոք վոչինչ չգիտեր:

«Ձեն մարտնչում ել կարծես թե բանակները Շիրակի,
Միթե նրանք ծունկի չեկան դեռ հաղթության չհասած,
Յերեք ուր ե չի ստացվել վոչ մի լուր ու հեռագիր,
Միթե կրկին ծալենք պիտի դրոշակը մեր պարզած...»

Նա գիտեր, վոր Արմենիոմի ղեկավարները վախկոտ,
Չեյին ուղում ապստամբել, ղենքով յեղնել պայքարի,
Ժողովուրդն եր վոր ծառացավ, բայց այդ կովի ղեկի մոտ
Իրենց կաշվից խիստ վախեցող «ղեկավարներ» դեռ կային:

Պինդ կը պահեն նրանք արդյոք դրոշակը Մայիսյան,
Ծունկի չէն գա, չէն վաճառվի մեր թշնամուն ամբարիշտ,
Վորի հետ միշտ հաշտ են յեղել ու յեղել են համաձայն,
Իսկ պայքարի ու կովի մեջ հեշտ ուղի յեն ընտրել միշտ...

Յեվ այս հարցի ծանրությունից մռայլված ու տխրադեմ,
Ընկերներով նստել եր նա կենտրոնական շտաբում,
(Իսկ քաղաքի փողոցներում ցույց եր արդեն ու հանդես
Ժողովուրդն իր արնով զնած ազատությունն եր տոնում...)

Հենց այդ պահին դուռը բացվեց ու ներս մտավ մի ղինվոր,
Ներս մտավ նա վողջույն տվեց ու կանգ առավ զլիխիկոր...
— Ի՞նչ ես ուղում, Ղուկասն ասաց, ում ես այստեղ վորոնում,
Թե մի ուրախ լուր ես բերել, ել ինչո՞ւ յես ուշացնում...

— Այո, Ղուկաս, լուր եմ բերել — մի թշնամի գնդապետ
Բերդը մտավ ու զրուցեց ապստամբած զորքի հետ.
Նա ապստամբ զորքին ասաց. «զուր եք կովում դուք մեր դեմ,
Բոլշևիկյան հեղկոմի հետ հաշտվել ենք մենք արդեն...»
Հավատալով մեր թշնամուն, դաշնակցական այդ ոճին,
Արդեն ամբողջ մի գումարտակ հեռանում ե մարտկոցից...

Լուռ լռելով այդ բամբերին,
Ղուկասը խուլ հառաչեց,
Ու թվաց թե կրծքի խորքում
Ինչ վոր մի բան խորատկվեց...

Առեռ նրա հոգում մարեց
Արեգակը հրացայտ
Ու նա տխուր և սրտաբեկ
Դեպի ամբոց ուղացավ:

Ու յերբ տեսավ նա հեռացող
Զինվորներին դավաճան,
Խուլ զայրույթը փոխվեց ցավի
Ու աչքերը սևացան:

Ու թվաց թե անհղ բերդի
Պարիսպները ժանտատես
Իջան նրա ջահել սրտին,
Հանկարծահառ մահվան պես:

Բոլշևիկը յերիտասարդ,
Կռիվների միշտ ռովոր,
Իր հույսերի մահը տեսած,
Ամբողջ հոգով վերավոր. —

— Տղերք, ասաց, ուր եք գնում,
Ի՞նչն ե արդյոք ձեզ թովել,
Այն վոր ոճն ե դարանամուտ
Ձեր քաջ հոգին վրդովել...

Ո՞ւմ եք հանձնում մեր մարտերի
Դրոշակը սիդապանծ,
Ո՞ւմ եք հանձնում ազատության
Իրավունքը նվաճած:

Խաբված եք դուք յերեխի պես
Մեր թշնամուց տմարդի,
Կրծքիս խփեք գնդակը ձեր,
Նոր հեռացեք այս բերդից...

Զինվորները ամոթահար,
Թողած ռուր ու հրացան,
Դեմքերը սև, ինչպես կապար,
Իրենց տեղում քարացան:

Ու մինչև նա խոռում էր դեռ
Յեվ համոզում այդ զորքին,
Նորից յեկավ մի այլ բամբեր,
Տխուր լուրը շրթունքին:

— Գնանք ասաց, կանչում են քեզ,
Լուր ե յեկել Շիրակից...
(Ու քաղաքն էլ մի ծովի պես
Աղմկում է անհանգիստ):

— Ի՞նչ լուր պիտի լինի արդյոք,
Վողջույնի գիր թե աղետ...
Սիրտը նրա այս հարցի հետ
Խուլ տազնապով բաբախեց:

Ու խնդրեց նա զինվորներին,
Վոր իր դարձին ուղառեն.¹³
Յեվ տրտմությամբ քաղաք իջավ,
Ինչպես պարտված մի բազե...

ԳԼՈՒԽ ՅՈՒՆԵՐՈՐԴ

1

(Ակամա պարտություն)

Հեռագիրը յեկավ գուժկանի պես մի չար,
Շիրակից նահանջի խիստ հրաման բերեց,
Ու Ղուկասի սրտին ասես գիշեր իջավ,
(Այդ բանը իր հոգին զգում էր դեռ յերեկ...)

Այլևս չէր կարող ինքը դիմադրել,
Նա թշնամու առաջ մենակ էր և ուժատ,
Ալեքսովը յերեկ զենքը վար էր դրել,
Այդպես էր հաղորդում հեռագիրը գուժկան:

Ղուկասն իր զինակից ընկերներին առաջ,
Հեռագիրը կարդաց ու զայրացավ մի պահ,
— Խիզախ կովից հետո պարտություն ու նահանջ,
Մահվան ե հավասար նահանջելը հիմա:

Բայց միտք չունի նորից դիմադրել մենակ,
Այդ հանցանք կլինի բոլշևիկի համար,
Զենքերը կպահենք ու կիջնենք ընդհատակ,
Յեվ հուրը մեր սրտի միշտ կպահենք անմար:

Մայիսը խոնարհվեց, ծունկի իջավ այսոր,
Բայց ապրում է ու կա ազատության վոգին,
Կրկին վոտքի կելնեն բանակները հզոր,
Յեվ գրոշ կդառնա բոլշևիկի հոգին:

Դժվար էր նահանջելն այդ քաջերի համար,
Վորոնք չէյին տեսել դեռ վոչ մի պարտություն,

(Բայց թշնամին նրանց ուժեղ եր ու համառ,
Ու գիշեցին նրանք այդ ուժեղ թշնամուն):

2

Ու յերբ գիշերն իջավ բլուրների վրա,
Յերբ քաղաքը սուղվեց անծայրածիր միգում,
Վողջ կազմը հեղկումի, հազած զենք ու զրահ,
Այդ քաղաքը թողեց և հեռացավ թաղուն...

Ողում գալարվեցին մտրակները նրանց,
Ու խրխինջով լցվեց մերկ դաշտերի հեռուն,
Նահանջողներն ասեա իրենց սրտի վրա
Անբարբառ տխրության լեռներ եյին կրում:

Իսկ թիկունքում նրանց՝ քաղաքն եր ապստամբ,
Թշնամու սրի տակ իր արյունը քամում,
Ախուրյանն եր տխուր զարնվում ափից-ափ,
Ու սիրտ եր կտրատում անգամ ձայնը քամու:

Յեվ արշավում եյին հեծյալները անխոռ,
Ձեռքերը սրերին, հայացքները սրած,
Խիստ դժվար եր ուղին, հազար մացառ ու փոռ,
Բայց Ղուկասն անդադար սիրտ եր տալիս նրանց:

— Քշեք, իմ կարիճներ, քշեք ձիերը ձեր,
Թող ձիերը ձեր քաջ թևեր առնեն քամուց,
Ճանապարհի կեսից մենք վաղուց ենք անցել,
Մեր թիկունքում մնաց գնդակը թշնամու:

Արշավեցին այսպես անդադար ու անկանդ,
Նժուզները նրանց փրփուրի մեջ կորան,
Ու յերբ լուսադեմին վառ աստղերը հանդան,
Նրանց խումբը իջավ լեռնային մի ձորակ:

Չորում կար մի ջրաղաց, շուրջը ուռենիներ,
Վորոնք մեղմ նազանքով հակվել եյին ջրին,

Բահը ձեռքին յեղավ ջաղացպանն ալեհեր
Ու խոժոռ հայացքով նայեց յեկվորներին:

«Ով գիտի վորտեղից, ինչո՞ւ համար յեկան,
Տեռնեա իրենց ճամբին ում տունն ավերեցին,
Չիավորին հիմա խիղճ ու հավատ չկա,
Հարամի յե դառել՝ ով զենք ունի և ձի...»

Այսպես քրթմնջալով, ծերը կամաց, կամաց
Մոտեցավ ու բռնեց ձեռմակ ձիու սանձից,
Չիավորը ժպտաց այդ հարգանքի համար,
— Այդպիսի բաների չի սովորել իմ ձին:

Այս գիշեր մինչև լույս նա վազել և արագ,
Արածել և ուզում և ուզում և հանգիստ,
Իսկ մենք, անուշ պապի, մարդիկ ենք հատարակ,
Նեղություն մի կրի ու մի բռնի սանձից:

3

Յեվ Ղուկասը իջավ գետին,
Ձին բխովեց ծառի տակ,
Հետևեցին իրենց պետին
Հեծյալները հոգնատանջ:

Ծերը յեկավ ու վողջունեց
Ճամբորդներին անձանթ,
Յեվ իր տաշտում ինչ վոր ուներ,
Բերեց թափեց նրանց մոտ:

— Կերեք ասաց, անուշ լինի
Արժան չի ձեզ այս աղրաման,
Բայց յեա չունեմ միս ու գինի,
Ջաղացպան եմ մի աղքատ:

Ու յերբ նրանք նստոտեցին
Կարկազահոռ առվի մոտ,

Ծերը հանեց զավը ծոցից
Ու վառեց մի ծխախոտ:

Խնդրեցին, վոր նա ել նստի,
Ակրատ անեն միասին:
Իսկ նա թե — չե, անուշ լինի,
Միք մտածի իմ մասին:

— Մի մեծ բան չե, վայելեցեք,
Ու գնացեք տունը ձեր,
Ճանապարհ են պահում հիմա
Ձեր ծնողներն ալեհեր:

Հաջող լինի թող գործը ձեր,
Ու ձեր ճամբեն անփորձանք,
Ու ձեր ունու պաղ շուրթերից
Դուրս թռավ մի հառաչանք:

Ու մինչ նրանք ուտում եյին,
Ծերն սկսեց զրուցել:
— Յես ել մի որ տուն ունեյի,
Ունեյի արտ, մալ ու սել:

Ունեյի շեն լիքը մառան,
Ապրում եյի անթախիծ,
Բայց յերբ տղիս զինվոր տարան,
Ծուխը մարեց իմ տնից:

Զինվոր տարան ու չղարձավ
Իմ զավակը միևուճար,
Ծեր հառակում առանց վորդի
Ախ, դժվար ե, շատ դժվար...

Հրեա կյանքիս ծեր որերին
Մնացել եմ բնավեր,

Չեյի կանի յես ես քարին,
Թե վորդիս ինձ հետ լիներ:

Չարչարվում եմ յես որնիրուն
Այս ջաղացում անբնակ,
Իմ ընկերն ե գիշերվա բուն,
Ու յերկինքը կապուտակ:

Ու յերբ հարեց ամեն անգամ,
Մի ճամբորդ ե ցած գալիս,
Սպասում եմ յես անհամբեր,
Թե լուր կտա իմ բալից:

Յես չգիտեմ ովքեր եք դուք,
Դեպի ուր եք ճամբորդում,
Մենակ առեք թե ձեր ճամբին
Չեք հանդիպել իմ վորդուն:

Բարեղամն են նրան կանչում,
Արգինեցի Բարեղամ,
Ասեք տղերք, չեք ճանաչում,
Ասեք, վորդիս ինչ յեղավ...

— Բարի ծերուկ, մենք մեր ճամբին,
Չենք հանդիպել քո վորդուն,
Մենք կովից ենք հիմա գալիս
Ու գնում ենք դեպի տուն:

Դարդ մի, անի վորդիդ կգա,
Յերբ կույլը դադարի...
— Եհ, ձեր մարդ եմ, թող «նա» գիտա,
Ու մուրազըս կատարի:

Ճամբորդները հացը կերան,
Առվակից ջուր խմեցին,

Հենց այդ պահին հանկարծակի
Սուլ վրնջաց մեկի ձին:

Ուռինների սավերի մոտ
Մուլթ սավերներ սլացան,
Մերկ սվիններ շողշողացին,
Ու պայթեց մի հրացան:

Ու զրույցը կիսատ մնաց,
Նրանք զենքի վազեցին,
Ու Ղուկասը՝ պետը նրանց
Թուով հեծավ ճերմակ ձին:

Ձիւ վորոտաց ձայնը նրա.
— Սեղմել ե մեզ թշնամին,
Միահամուռ կրակ բանալ,
Ձիւնայել վոչ մեկին...

Գնդակները ճարճատեցին,
Վորոտացին լեռ ու ձոր,
Խմբապետը դաշնակցական
Մռնչաց խուլ, ահավոր:

Դուրս եր բերել նա մի բանակ
Այդ փոքրաթիվ խմբի դեմ,
Մի մարտիկին քսան գնդակ,
Քսան զինվոր ժանտադեմ:

— Կամ կմեռնենք այս ձորակում,
Կամ կազատվենք մեր զենքով,
Կանչում եյին ու կրակում
Մարտիկները տագնապով:

Մռնչում եր Ղուկասն արի
Ու կրակում անվեհեր:

— Նամարդ մարդիկ, մեզ չի ընկճի
Ձեր գնդակը մահաբեր:

Կուրծքը տված տաք գնդակին,
Ձեռքին մի լիք հրացան,
Այդ վայրկյանին հանկարծակի
Նա թամբի մեջ ծառացավ:

Հետո թեքվեց ձիու վրա
Ու ձիդ տվեց ոռնձը պիրկ,
(Վիրավոր եր կուրծքը նրա,
Վերքը խորն եր ու ոստարիկ):

— Ընկա, տղերք, ախ, յեռ ընկա,
Ձոհվեցի անժամանակ,
Կրակեցեք, թե փամփուշտ կա
Ու միք մնա զալպի տակ:

Այդ խոսքի հետ մարեց քիչ-քիչ,
Նրա կյանքը հրացայտ
Ընկերները կսկիծով ջինջ
Արտասովեցին վողբաձայն:

Հետո դանդաղ կրակելով
Ձորից յեւան գնացին,
Ու կարճատե կովի դաշտում
Լուռ զիականեր մնացին:

Ձենքը լռեց ու թշնամին
Դիրքը թողեց ու գնաց,
Ու զով քամին մեղմ համբուրեց
Մեռնող աղի վերքը թաց:

Ձաղացպանը բնից յեւալ
Ու մոտեցավ դիակին,

Նայեց տխուր, նայեց յերկար,
Ու մորմոքաց իր հոգին:

Ջաղացականի շունչն եր արդյոք,
Թե ապրելու տենչը խոր,
Վոր մի վայրկյան կյանք տվեցին
Բոլշևիկին վերավոր:

Նա բաց արեց աչքը մի պահ,
Նայեց հակված ծերունուն,
Իսկ ծերը, թե-ջահել տղա,
Ասա տեսնեմ, ով ես դու...

— Բոլշևիկ եմ, բարի ծերունկ,
Բոլշևիկ ել մահացա...
Ու մեռնողի գույգ աչքերում
Կյանքը հավետ քարացավ:

— Ե՛յ, բոլշևիկ, կարիճ բալա.
Ու ծերունին արտասովեց.
Մորը՞ կաթը լինի հալալ,
Կուռը չորնար, ով խփեց:

.

Հետո ծառի ստվերի տակ
Մի փոս փորեց ծերունին,
Ու կռկիծով հողին հանձնեց
Բոլշևիկի ջահել գին:

Ուռիները սգվոր յեղան,
Քամին յեղավ մահերգու,
Շիրիմ մտավ խիղախ տղան
Առվի կանաչ յեղերքում:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

1

Սրտերում մխացող կսկիծը Ղուկասի
Կենտրոն վերադարձան մարտիկները Ղարթի,
Ուր սուրը թշնամու գերանդու պես մի սուր,
Արդեն հնձի ծարավ նրանց էր ապաստում:

Ել չեր ապրում կյանքում Սարուխանը խիղախ,
Մուսայելը չկար՝ Վոգին Ալեքսյուի,
Ու լոկ յերկիրն եր վոր, ավեր ու անբնաշաղ
Սգում եր մոր նման ցափն իր անբուժելի:

Մուսայելը պարթև լայնաթիկունք հսկան,
(Վոր տեսել եր դաժան հողմերը Սիբիրի),
Յերբ վոր Ալեքսյուի բարիկադներն ընկան
Ապավինեց նա իր «Վարդան Զորավար»-ին:

Նա յերեք որ փակվեց այդ զրահապատում,
Սպառեց իր մոտի գնդակները բոլոր,
Հետո թևակոտոր ու կսկիծը որսում
Անձնատուր յեղավ նա, արծվի պես վերավոր:

Նրան շվթայեցին Պուգաչևի նման,
Յերեք որ պահեցին Յերևանի բանտում,
Հետո մառգերիստ խմբապետը դաժան
Խարույկի մեջ այրեց այդ պողպատե մարդուն:

Խմբապետը դաժան լափեց սիրտը նրա,
Իսկ հետո խոշտանգնեց Սարուխին գանգրահեր,
Կրկին մահը չոքեց Հայաստանի վրա
Ու ջրերը դարձան կարմիր արյան գետեր:

Յեվ ապրելով հանդերձ բերկրանքն աղատության
Յերեանը տեսավ կորուստը Բագրատի,
Վորը բոլշեիկի մոլի կըքոտությամբ
Պաշտպանում եր յերեկ գաղափարը մարտի:

Յեվ այդ մարտը յեղավ, յերկերն ապստամբեց,
Բայց ինչ վոր պատճառով Յերեանն ուշացավ,
Յերեանի կովում չար թշնամին հաղթեց,
Բագրատն ել առաջին տխուր զոհը դարձավ:

Նա մայրի մեկին ցույցի դուռն անցած,
Անդուսպ կըքոտությամբ պայքարի կոչ արեց,
Բայց թշնամին նրա թիկունքում դարանած
Առաջին գնդակով Բագրատին տապալեց:

Դաշնակները նրան վաղուց էյին փնտռում,
Վաղուց էյին նրա կյանքը գնահատել,
Խմբապետներն անգամ դրադ էյին կտրում
Թե ում կը հաջողվի Բագրատին տապալել:

Ու թշնամուն ոգնեց ձեռքը դավաճանի,
Սաքոն եր վոր ծախեց մարտիկին այդ արի,
Ու յերբ անցնում էյին նրանք Աստաֆյանից
Սաքոն նշան տվեց ու կրակ բաց արին:

Համաձայնվել եր նա Դալի-Ղաղոյի հետ,
Վոր ինքը կը քայլի այդ մարտիկի կողքին,
Աստաֆյանով նրանք կիջնեն դեպ պառլամենտ,
Ինքը նշան կտա՝ Ղաղոն կը կրակի...

Այդպես ել արեցին, ու յերբ նա սպանվեց,
— Խմբապետն, առաջին, հարբած ե գլխովին,
Շախաթունին նույնիսկ խիտ հրաման տվեց,
Վոր իսկույն բանտարկեն «հարբած» խմբապետին...

Իսկ Սոսը, Արտաշը, Վաղարշակն ու Աննան,
Վոր այդ տրիբունի կողքից էյին քայլում,
Յերբ վոր մեծ ընկերոջ սպանվելը տեսան,
Հասկացան նենգամիտ կրակոցը Դալու:

— Տեոոր ե, առաջին, դիզմամբ ե սարքած,
Առաջնորդին նրանք դիզմամբ սպանեցին,
Կրակողն հարբած չեր, միք հավատա նրանց,
Ու փոթորկեց հանկարծ ամբոխը փողոցի:

Փողոցում ձիավոր մարդիկ յերևացին,
Ճարձատեցին հանկարծ մատուցեր ու նազան,
Փողոցը թունդ առավ աղմուկից ու լացից,
Շրջապատեց նրանց խումբը զաշնակցական:

Այդպես ել տապալվեց ցույցը ժողովրդի,
Դաշնակները նրան խեղդեցին արյան մեջ,
Իսկ Բագրատը խիզախ, բոլշեիկի վորդին,
Այդ ցույցի մեջ զոհեց կյանքն իր ազատատենչ:

Ու Սոսը պատանի, Արտաշեսն ու Վաղոն,
Յեվ նրանց զինակից արխատիրտ Աննան,
Իրենց սիրտը լցրած պարտության սուր ցավով
Կրկին զաշնակցության բանտը վերադարձան:

2

Յեվ ամեն առավոտ, յերբ արևն եր ծագում,
Կանգնում էյին նրանք լուսամուտի առաջ,
Յեվ ջինջ ազատության կարոտն իրենց հոգում,
Դիտում էյին լույսի շողերը կենտառատ:

Դիտում էյին, հրձվում այդ շողշողուն լույսով,
Այդ լույսի մեջ նրանք աշխարհն էյին զգում.
(Արև, անուշ արև, անմահության դու ծով,
Վառվիր, վառվիր ուրախ, լույս տուր նրանց հոգուն):

Բայց արևն ել կարծես քմահաճ եր դարձել,
 Նա յերկար չեւ ուզում այդ բանտի մեջ մնալ,
 Հեռանում եր իրկույն ու խավարն եր դարձյալ,
 Վոր իջնում եր վորպես դաժան մի տիրակալ:

Ու ջինջ ազատության կարոտն իրենց հոգում,
 Խոռում էյին նրանք ընկերների մասին,
 Ու պատանիների հուշերում վարդազույն
 Շողողում եր պայծառ պատկերը Ղուկասի:

— Ընկավ դաժան կովում կոմսոմոլի բաղեն,
 Իր արյունը տվեց ազատության համար,
 Բայց մենք չենք մոռանա արյունն այդ սրբազան,
 Թե աքսորում հեռու, թե զնդանում խավար:

Մենք կը բարձրացնենք սուրը նրա ընկած,
 Նրա ճամբով կերթանք դեպի ազատություն,
 Ղուկասի անունը կմնա անմոռաց
 Մեր ջահել, թրթռուն հուշերի վոլորտում:

Ղուկասի անունով, հիշատակով նրա
 Զնդանում ապրեցին մարտիկները արի,
 Մինչև հայրենական մեր աշխարհի վրա
 Շողաց կենսաժպիտ արփին Հոկտեմբերի:

Հիմա շղթայազերծ մեր շեն հայրենիքում
 Կյանքն է ալեկոծվում, վորպես ծովը անթանձ,
 Ու կանգնած իր փառքի անաղարտ բարձունքում
 Ղուկասն է վայելում կյանքը իր յերազած:

1937 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Անվերհաս դիր

3

ԱՌԱՋ ԴՈՐ ԳԻՆ

Ստալին	7
Առաջնորդին	9
Ստալինն ու Յերենյան	11
Մայիսի 14-ը	13
Բաց նամակ Մոլոտովին	15
Հայրենի արև	17

ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քառյակներ	21
Մեր կալեր կանաչ ու խառ	23
Զրվոր	24

ԳՈՒՍԱՆՆԵՐ

Սոյամ	25
Թումանյան	26
Ավ. Խաչատրյան	28
Ծովափին	30
Հրաժեշտ ծովին	31
Պուշկինը ծովափին	33
Բալլադ հորս մասին	34
Մորս հիշատակին	35
Ծիծառները յեկան	37
Հատիկ	38
Մանգաղներ	39
Այգեկութ	40
Անձրեկը աշուն	41
Հավքեր	42
Սիրել	43
Ծաղիկ պսակ	44
Տեղանի հետ	45
Քուն են մտել ծաղիկները	46
Որսորդի յերգը	47
Իմ ներհաճ աշխարհին	49

Ռուզուֆի ծննդյան առթիվ	50
Մանուկներ	51
Մանուկներին, վաղ պիտի ծնվեն	52
Համբարձման գիշեր	53
Հացի կանչը	55
Մայրն իմ, մեռավ	57
Սագեր	56
Յերկու ընտանիք	59
Ռուսաստանին	61.
Մակադրություն մի նկարի վրա	63
Հայրենիքիս յերջանկությունը	64
Կոլխիդայի բալլադը	66
Գարնան կարոտ	68
Աղջիկը	70

ԽԻՋԱԽՈՒԹՅՈՒՆ

Լերմոնտովյան աքառին	75
Մենամարտ	77
Նատա Բարուշկինայի հիշատակին	79
Յես թերթում եմ	80
Ղուկասին	82
Յերկրի դուտարը	83
Մայրը	86
Պարտիզանուհին	89
Գրիգորի Վարավին	96

Պ Ո Շ Մ Ն Ե Ր

Աբուգելիթ	104
Մայիսյան աղաբայ	125

Պատ խմբագիր՝ Ա. Շահինյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան, Վ. Ավագյան

Դրավիտի լրացրել է—1023. Հրատ. 4873.

Պատվեր 334. Տիրած 2500.

Թուղթ. 64×92. Տպագր. 12 մամ.

Մեկ մամ. 38600 նշան.

Հանձնված է արտադրության 4 ապրիլի 1939 թ.

Ստորագրված է տպագրության համար հունվարի 11-ին 1940 թ.

43387

21

ՀՀ Ազգային գրադարան



NL0322643

